

73300

ፊደራል ፖሊስ



ፊደራል ፖሊስ ፊደራል ፖሊስ

ጥቅምት 1935

19 NOV 2010



ՅԵՐԵՎԱՆ 1935

891.71

ԼԵՎ ՌՈՒԲԻՆՇՏԵՅՆ

Թ-81

ԿՐ

ՍԱՄՈՒՐԱՅՆԵՐԻ ՃԱՎԻՂԸ

Տպագրված է Հ. Ս. Ս. Հ. Պետրասի Մոսկվայի
տպարանում: Մոսկվա, Արմյանսկի պեր. 2
Պատկեր 183 Գրառեպվար № 7, 41891: Հրա-
տարակչ. № 3120. Տիրաժ 2100. Հանձնված է
արտադր. 3/II 35 թ. ստորագր. տպ. 23/II 35 թ.:
10³/₄ մամուլ, մամուլում՝ 31 100 տպանիշ:

Թարգմ. Ա. ԱԹԱՑԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1935 ՍՈՍԿԱ

24 JUL 2013

13300

Տեխ. խմբ. Հ. ԲԱՐՍԵՍՆԻ
Շապուհի՝ Լեւոն Գեւորգի

«Ձկա ծաղիկ ֆրիզանբեմից լավ,
Ձկա յեկիր ձապոնիայից լավ,
Ձկան ուազմիկներ Յաւասոյի
ուազմիկներից քաջ»:

(Մի ճապոնական յերգից)



1112
37

ՅԱՄԱՏՈՅԻ¹ ՔԱԶԵՐԸ

Առաջ բարձր, ամպերի դորշ առադաստի տակով անցավ Ինքնաթիռը: Նա թռավ մինչև ձյուն ծխացող բլուրների կատարը, մի ինչ վոր տեղ գլորվեց և մի ըսպե անց մյուս կողմից դուրս լողաց: Այժմ նա գնում եր բոլորովին ցածր, ուշի ուշով և կասկածավորությամբ: Պարզ յերևում եյին շաստիյի խողալիքային անվիկները և տանող հարթությունների կարմիր շրջանակները:

Յերկնքից թռավ հասավ քամու կրծքային վունոցի հետ խառնված մի սուր մեղվային բզզոց: Գյուղական փողոցը դատարկ եր, և մանրիկ խավարչտին ֆանդաները² նույնիսկ չեյին ծխում, մի բան, վոր Արևելյան Մանջուրիայում չարագուշակ նշան ե համարվում:

Ինքնաթիռը սաստկությամբ մի կողմ նեավեց և նորից խորասուզվեց բլուրների մեջ: Այդ ժամանակ փողոցում անհանգիստ կետեր յերևացին:

Նրանք մի տեղ կիտվեցին, քիչ կանգնեցին և հանկարծ ցրվեցին: Ինքնաթիռը լողում եր ամպերում. նա սուզվում եր, դուրս լողում, լողանում և այժմ դղրդալով ողն եր գայլիկոնում ուղիղ ֆանդաների գլխին:

¹ Յումատո — շապոնիայի հին անունն ե:

² Փանդա — գյուղական խրճիթ, հյուղակի

— Յճ, — արհամարհանքով ասաց Տյան Շառ-չենը, —
Թռչնիկներից չենք վախենում: Ձվիկները — դա ուրիշ բան է:
Ձվիկներից վախենում ենք:

Տյան Շառ-չենն ավագ էր և մի ժամանակ ծառայել էր
Մուկղենում հենց մարշալ Չժանի անձնական գնդում: Նա
պատերազմ էր տեսել և գիտեր այն բոլորն, ինչ վերաբե-
րում էր ինքնապահպանման բարձր գործին: Թռչնիկներն
ինքնըստինքյան չինացիների համար փաստակար չեն: Բայց
յեթե թռչնիկն իր հետ ձվիկներ և տանում, այն ժամանակ
գրանից ազատվելու համար չինացին միայն մի յեղբ ունի —
յերեսն ի վայր պառկել գետնին և աստվածներ կանչելով՝
սպասել, մինչև վոր թռչնիկը ձանձրանա: Վորովհետև թռչնիկը
յերկար ժամանակ թռչել չի կարող, նա ուտել կուզի: Իսկ
չինացին կարող է յերկար ժամանակ պառկել:

— Ավելի լավ է փախչել, — ասաց Լու Սյան, — պատե-
րազմում փախչելն առաջին բանն է:

Տյան Շառ-չենը բարկությամբ թքեց: Նա չէր սիրում,
վոր իրան ռազմական գործ սովորեցնեն:

— Կինն ել գրանից ավելի հիմար բան չէր կարող տեսլ, —
փնթփնթաց նա: — Յես հին գինվոր եմ և գիտեմ, թե ինչ-
պես պետք է փախչել: Ճապոնացիներից փախչել չի լինիլ:
Դու վճրտեղ ես լսել, վոր մարդ կարող է փախչել թռչնի
ձեռքից: Դու, կրիս:

Դա վիրավորանք էր, բայց Լու Սյան չէր առարկում:
Նա իսկապես վոր շահել էր և կյանքում յերբեք պատերազմ
չէր տեսել:

Այս անգամ թռչնիկը շուտով ձանձրացավ: Բայց նա դեռ
չէր հեռացել ցածր գորշ յերկնքից, վոր փողոցով գյուղի մի բո-
լորքից դեպի մյուսը սրարշավ անցավ մի հետախուզախումբ:

Վոչ, այս անգամ Չժանցդյադյան գյուղակը չկարողա-
ցավ պատերազմից ազատվել: Չոգնեցին թարբինում տալված
աստծու գոհհիվ պատկերի առջև դրված խնկարկելու փայ-

տիկները: Մղմուղից ծրտտված նրա վոսկե խորամանկ ուղե-
շարունակում էր անտարբեր կնճովել այն ժամանակ ևս,
յերբ բանջարանոցներով, խողարների միջով ինչ վոր գորշ
սավերներ սողացին: Նրանք ցատկոտու ելին ցանկապատերի
վրայից և սպրդվում բրնձի սառած դաշտերով անցնող առու-
ների յերկարությամբ: Ապա սառած փողոցում սառնամանի-
քից վառ կարմրած, փաթաթված դեմքերով հետևակներ յերե-
վացին: Քամին շարունակում էր կատաղի փչել: Պողպատե
սաղավարտները ծածկվում էին ձերմակ փառով: Շուրջը,
այժի մորթուց կարած մուշտակով, մի սպա յեր գնում՝ յերկա-
րած ձեռքում ատրճանակ բռնած: Չինվորները ձեռքներին
տանում էին կտր, կիտրոնանման ուռմբեր:

Նրանք վոչվոքից բան չէին հարցնում և նույնիսկ չէին
գտում: Լուռու մունջ նրանք դադապողի անցան գյուղով և
այնուհետև արդեն սկսեցին ֆանդաները մտնել:

— Դուք այստեղ խուճխուճներ եք տեսել, յերբ եք տե-
սել, — հարցնում էր մի սպա գրքի համեմատ:

— Վոչ, պարոն, — պատասխանեց Տյան Շառ-չենը՝ ի նշան
մեծագույն հարգանքի բուռնցքներն իրար վրա դարսելով, —
եստեղ խուճխուճներ չեն ել յեղել:

— Չինական գորքերն այստեղով վաղճւց են անցել, —
հարցրեց սպան:

— Վոչ, պարոն, եստեղով չինական գորքեր չեն անցել:

— Արդյոք շատ էին նրանք:

— Վոչ, պարոն սպա, իսկի չեն յեղել, — խոնարհու-
թյամբ պատասխանեց ավագը:

— Նրանք ո՞ր դնացին, — շարունակեց սպան:

— Նրանք չեն յեղել, ձերունի պետ, ամենևին չեն յեղել:

— Նրանք անյո, թե՞ այն ձանապարհով գնացին, — ձեռք
չէր քաշում սպան:

Տյան Շառ-չենը մտքում արդեն աստվածներին աղո-
թում էր: Նա հին գինվոր էր և գիտեր, վոր նման խոսակ-

ցութունները թեթև կերպով չեն վերջանում: Նա արդեն մաքրում փնտրում էր այն ամենաքաղաքավարի ֆրազը, վորը պարոն սպային հասկացներ, վոր նա միանգամից ասի, թե զնդի համար քանի խոզ և հարկավոր: Բայց այդ ժամանակ մոտեցավ մի ձիավոր պես ևս և իսկույն սկսեց չինարեն խոսել:

— Հեյ, քեզ հետ եմ, ջահել ոձ, դուք այստեղ խուսելու գնեք ինչ վերտեղ եք թաղցնում:

Միանգամից ամեն ինչ պարզվեց և հասկանալի դարձավ Տյան Շառ-չենը հին սովորությամբ շտկվեց և զեկուցեց: Հետախույզները ֆանդաները խուզարկեցին, լավ եր, վոր ընդամենն ութ ֆանդա կար և նրանցից ամեն մեկում տեղավորված էյին չորսական հասակավոր, ութնական յերեխա, մի-մի խոզ և մի-մի այծ:

— Իսկ դա ի՞նչ սպիտակ բծեր են այդ աղայի վզին: Եհեյ, ցոլց տուր տեսնեմ: Իսկ սա՞ ինչ բան է: Այս աղջիկը կո՞ւյր և ծնված:

Մանջուրիան ձմեռն էլ և դեղին: Բարկացկոտ մուսոնը՝ դաշտերից ձյունը պոկում և խիտ ամպերի պես տանում և վայրի բլուրների, աղբատիկ ֆանդաների, Սուենգարիի դեղնած սառույցների տակով, լեռնային կաղնու չոր անտառներով, սառած ճահիճներով և քարե լեռնաշղթաներով — դեպի արևելք, ուր նա հալվում և ջերմ հոսանքներում:

Մանջուրական ձմեռը դաշտերում պառկած չի լինում, այլ ողի մեջ և պտտվում, գիշեր-ցերեկ մուսոնը վրա յե թռչում հյուսիսից, բլուրներից, ցամաքից՝ ծանր սառցային պատի նման: Դողում և լեռնային չոր կաղնու անտառը, ծխում են բլուրները, անշարժ ընկած են մնում մարդագուրկ, քարի պես պինդ, սպիտակավուն-դեղին ճանապարհները, և քամին հսկում և թաշուղիներում, բռնում կրճբից և կոկորդը խեղդում:

1 Մուսոն — ձմեռը ցամաքից դեպի ծով փչող մի քամի յե

Հետևակն իր յերթում որորոզ ութմ է գտնում: Յերկրորդ որն արդեն գնալու ծանրութունը չի դգացվում: Վոտներն իրանք են տանում թրխկթրխկացող դնդացիրային յերկանվի հետևից: Յերկու որվա ընթացքում մտքի մեջ լավ են մնում պատյանում դրված «գոչկիսի»¹ առաջ վազող բերանը, ցածրահասակ քրտնած ձին, շապկի սպիտակ շերտը հարևանի ծոծրակին և նրա բարձր, կաթսան մեջտեղից կախ պայուսակը:

— Հետաքրքիր ե, թե ողի կտան, — հարցրեց սոսկական ղինվոր² Կավամուրան:

— Կտան, — վստահ բարբանջեց սոսկական ղինվոր Մորիտան, — զորարանկում ել ողի չտան...

— Իջևանում յենթասպան³ յեկավ, — ձախ թևից արձագանքեց սոսկական ղինվոր Տանական, — և սսաց, թե ողին վերջացել է:

— Հիմա ինն աստիճանից պակաս չի, — սկսեց Մորիտան:

— Ո՞վ եր խոսում, — հետևից բարկացած ղողանջեց յենթասպա Սեացյուն: — Պարոն ուսանող:

— Յես չեմ, բաժանմունքի պարոն հրամանատար:

— Դ՞՞՞ էյիր խոսում: Իսիկավա:

— Յես չեմ խոսել, պարոն...

— Յես կզեկուցեմ:

Պարոն կրտսեր յենթասպան զեկուցեց և գլուխը կախ վերադարձավ: Տեղակալ⁴ Սողավան, վոր ձիով էր գնում, ուսերը շտկելով, արշինի պես ուղիղ, նույնպես առանց ձեռնոցների յեր: Նա սառած ակնոցը հառեց յենթասպայի վրա և ստորին ծնոտը հաղիվ շարժելով՝ ասաց.

1 «Գոչկիս» — ճապոնական բանակում ընդունված դնդացիրների մե սխտեմ:

2 Рядовой.

3 Унтер, унтер-офицер.

4 Поручик.

— Զինվորներին հանգիստ թողեք, պարոն Սետցյու:

— Վոնց վոր յերևում ե, բանը լավ չի,— փսփսաց Մորիտան,— իսկ առավոտյան յես լսեցի, վոր նամակներ են բերել: «Ուսանող» կոչված Իսիկավա Տոկուձոն իրոք մի ժամանակ Տոկիոյում ուսանող եր յեղել: Նրան պահելու համար ծնողների փողը չբավականացավ, և նա յերկու տարով Ոկայամայի գյուղացիների և Տոտտորիի ձկնորսների հետ միասին գնդացիության վաշտ ընկավ: Առաջին յերեք ամիսը դըժվար եր, բայց հետո նա սովորեց: Ամենազգովարն եր կրտսեր յենթասպա Սետցյուի մոտ վորպես «ղեղնատիր» ծառայելը: Ուսանողն ստիպված եր ամեն որ լվանալու յենթասպայի սպիտակեղենը, վորովհետև Սետցյուն ամենամաքուր յենթասպան եր գնդում, և ամեն մի հարմար ղեպքում նրան եյին որինակ բերում մյուս բոլոր յենթասպաների հետ խոսելիս: Սետցյուն իր մաքրութունը թանգ եր գնահատում և պահպանում եր այն: Նա դրա համար ստացավ նախ յեֆրեյտոր¹ յերեք դեղին աստղ, իսկ հետո յենթասպայի վոսկե շերտիկ: Նոր գնդապետի դալովը նրա դրությունը կասկածելի դարձավ: Նա հինգերորդ տարին եր ծառայում, բայց վատ հրաձիգ եր:

— Ասում են, թե շուտով գիշերելու յենք,— նորից սկսեց Կավամուրան:— Տոմադան ձիավոր դասակի² հետ գնացել և նամակներ բերելու: Նրան նոր գնդապետն և ուղարկել: Ասում են՝ նոր գնդապետը բարի մարդ ե: Յեթե նոր գնդապետը չլիներ, մենք մինչև յերկաթուղու հասնելը պետք և նամակները սպասեյինք... Նոր գնդապետը...

— Ասում են՝ նոր գնդապետը... — ընդհատեց Մորիտան:

— Հենց վոր գյուղ հասնենք, ասում են, յեթե այնտեղ չլինացիներ և բորոտություն չլինի, մեղ գիշերել կտան,—

միջամտեց յերրորդ շոկի³ Իսուժայան:— Ականջներդ շփեցեք սպիտակճւճ են:

— Ի՞մ ականջները,— վախեցավ Իսիկավան:

— Շփեցեք: Ձեռնոցով շփեցեք: Ե՛հ, ձեռնոց չկա:

Ձեռնոցներ չկային, վորովհետև Խիմեձիյան հետևակ գունդը բլուրների վրայով ամառվա զգեստավորությամբ եր քայլում: Ձմեռվա զգեստավորություն բերին այն ժամանակ, յերբ դիվիզյան յերկաթուղային գծի վրա յեր գտնվում: Բայց խիմեձիցիներին չհասավ: Սակայն գիշերվա մեջ տագնապով⁴ նրանց սարերն ուղարկեցին, իսկ սարերում արդեն ձմեռն եր և այժմեձորթի անթե զգեստը քաղցր յերազ եր տողաններում⁵: Խիմեձիցիներին անթե զգեստներն սպասում եյին արշավանքի վերջին, յերբ վերջապես նրանց ձեռքը կընկնի անրոնելի Յան Հայցղին, վորը մի ինչ վոր տեղ իր խուճխուճներով սավառնում և լեռնային ճանապարհների շուրջը աներևույթ, բայց վորն այնուամենայնիվ շարունակում և նահանջել: Իսկ այդ ժամանակամիջոցում Միմադայի վաշտից քառասուն հողի պակասեց սառչելուց:

— Ասում են, ինն աստիճանը նրանց մոտ շատ չի,— ասաց Մորիտան,— նույնիսկ ասում են, թե նրանց մոտ մինչև տասնհինգ աստիճանի յե հասնում:

— Քեղ ճվ ասաց:

— Բժիշկը: Պարոն Իսիկավա, միանգամից տասնհինգ աստիճան սառնամանիք կարճ և լինել:

— Հիմա ավելի յե,— ասաց ուսանողը՝ սառնամանիքից պնդացած շրթունքներով ժպտալ ջանալով:

— Իսկ ինչ՞նչ յեն պլակատներում գրում, թե Մանջուրյան դրախտային յերկիր ե:

¹ Յեֆրեյտոր (ефрейтор) — մի թեկանի:

² Դասակ — взвод.

³ Ջոկ — отделение.

⁴ Տագնապ — тревога.

⁵ Տողան — шеренга.

— Եփեցեք, ի սեր աստծո, շփեցեք, վորովհետև ձեր թուշը սառչում է:

— Ենորհակալ եմ: Թաշկինակով լավ կլինեք...

— Ո՞վ եր խոսում, — լավեց հետևից:

— Զոկի պարոն հրամանատար, այնտեղ ներքև գյուղ կա, — հաղորդեց ծանական ձախ թևից:

Ծագունական զինվորական շեփորը յերկարածիք և տխրապիսի է հնչում: Նա վոչ մի տեղ չի փոխում իր ոտաբոտի մեղեդին — ցածր զորանոցների կզմինդրների վրա, պահնորդազորական¹ զորահանդեսներում, դեղին սառած քարե Մանջուրիայում:

Կանոնադրություն համաձայն նա պետք է «հիշեցնի մեռելու յերանությունը»:

Ավարտ է²: Փողահար Մուրայաման, վոր գնդում ամենահանդիստ մարդն էր, իր փչած ազդանշանների պես անկիրք, յեղյամով պատած ծվվանը սրբեց և շեփորը տեղը դրավ:

Զղանցղյաղյան գյուղը ցածրահասակ, թուխ, ծանր բեռնավորված մի հետևակազոր բռնել էր: Գյուղի մի բոլորքից մյուսը կարծես լողալով անցան դեղին կաշվե կոշիկների տողաններ, կանոնավոր հեսիկներ և տարազավոր կոճկառների վրայի ոճիքային շերտիկներ: Դրսից վոչ վոք չէր նկատել, թե Սիմաղայի վաշտից քառասուն հոգի յե պակասեր:

Անշարժ դեմքերն ըստ կանոնադրության բարձրացնելով, պողպատե ապուրամանները և կարճ հրացանների նշանահատիկները³ համաչափ ճոճելով հետևակազորն այնպես էր քայլում, ինչպես զորահանդեսում. գնդացիբային յերկանիվները թրխկթրխկում էին, կարմրած լավաշի նման խոտորնակի ուսադիրներով փոքրիկ փոխտեղակալները⁴ «շամփուր կալ

¹ Պահնորդազորական — гвардейский.
² Ավարտ — отбой.
³ Նշանահատիկ — мушка.
⁴ Փոխտեղակալ — подпоручик.

տվածի պես» էյին գնում: Վոչ մի անհանդատություն: Հավասարում: Պարզորոշություն: Ծշտակատարություն: Վոչ մի դանդաղում: Բացում¹: Անվանակոչ²: Յերեք բոպե և անց սոսկական զինվորներ Կավամուրան և Տանական արդեն բանջարանոցում ծխում էյին, իսկ գյուղը շրջապատված էր պահակներով:

Մյանալով յեկավ գնդի շտաբը: Յեվ գնդապետն ավագ ֆանդայի մոտ ձիուց իջնելով՝ նույնիսկ չնայեց 71-երորդ հրաձիգ Նիմեձիի փառապանձ դրոշակին, վոր որապահ դասակը տընկում էր ֆանդայի վրա: Գնդապետն աչքերը հառեց բժշկի վրա:

- Հը՞: Բան կա՞:
- Բժիշկը ձգվեց:
- Բորտություն չկա, պարոն գնդապետ: Համարձակվում եմ ղեկուցել...
- Ի՞նչ:
- Յոթ հոգի սառել են:

Քամին ձեծում էր սոսկական զինվոր Կավամուրայի ձեռքի այդ ծոպավոր յերկար թերթիկները, վոր նկարված էյին գյուղական նկարչի անկենդան-վորոշ վրձնիկով և գեղեցկություն համար շուրջը կարմիր գծեր քաշած:

Բլուրները հեռվում ձյունե դունաթափ մառախուղ էյին ծխում:

«Կավամուրա Իոտարո-ավագը վողջունում և կայսերական զորաբանակի շարքերում գտնվող վորդի Կավամուրա կիխատիին... Թնդ այս գրությունը յերկարակեցություն և մշտնջենական յերջանկություն նշան լինի հազար աշունների յերկրի զավակների համար...»

Դա գրողի ներածությունն էր: Ապա լսվում էր հենց Կավամուրա Իոտարո-ավագի միալար ձայնը.

¹ Բացում — развод.
² Անվանակոչ — переключка.

Թարգմ.

«Մենք ձեզ տեղեկացնում ենք, վոր վերջին բերքի բրինձն արդեն վաճառվել է ամառվա անձրևների ժամանակի վերջում:

Վորովհետև Նիթյակու-խացուկայի և Նասասակուչի որևորում հորդ անձրևներ և մրրիկներ ելին, իսկ այդ ժամանակ բրինձը ծաղկում էր, ուստի բերքն անցյալ տարվանից վատ յեղավ: Բրինձը վաճառել ենք 16 իենով², վորովհետև ամբողջ շրջանում գներն ընկած ելին: Վոչ մի իեն ավելի չէր կարելի ստանալ: Հիմա մենք ստիպված ենք ինքներս բրինձ գնել...»

Կավամուրան հեռավոր բլուրներին մտիկ տվավ: Քամին շարունակում էր սուլել: Յերկնքով ձյունային ծանր ամպեր ելին քշվում: Մարդագուրկ սարավանդների վրա խորը գլուխ ելին տալիս չոր թփերը:

«... այսպիսով կապալավարձը չի վճարված, իսկ այն, ինչ վոր հետ ելինք պցել, իբրև սնունդ գործածվեց: Իսկ կապալավարձն՝ ինչպես հայտնի յե՛ բերքի յերկույերորդ մասն է կաղմում, և յերեկ յերեկո պարոն Ոտանիի կառավարիչը յեկավ և հայտնեց, վոր մինչև գարուն կապալավարձը չվճարելու դեպքում կապալից գրկվելու յենք:

Այսպիսով և ի նկատի ունենալով այս հանգամանքները, մենք վորոշեցինք մեր ընտանիքն ավելորդ ուտողներից թեթևացնելու համար մեր աղջիկ Յուեկոյին վաճառել Ոսակա քաղաքում թեյի տներ ունեցող պարոն Ոյատային առանց ժամկետի — արժեքը 200 իեն ձեռաց և 50-ական իեն մեծ ցրտի ժամանակի յերեք ամիսների ընթացքում: Ինչպես դուք տեսնում եք, վաճառքի պայմաններն այնքան ձեռնտու չեն մնացել, ինչպես անցյալ տարի յեր, յերբ վաճառեցինք մեր աղջիկ Նանակոյին 600 իենով, և մենք աղոթքներ ելինք վե-

¹ Ճապոնական տարվա 212-երորդ օրը և 8-երորդ լուսնամսի առաջին օրը յերկրագործական որացույցով:
² Իեն — մոտ 98 կոպեկանոց դրամ:

բառաքում և ուխտ ենք գնում Ինարիի սեղաններին՝ աղերսելով ձմեռվա ողնության համար...»

Քամին ձեծում էր սոսկական զինվոր Կավամուրայի ձեռքի յերկար թերթիկները: Հորիզոնում կապտին էր տալիս մռայլ լեռնաշղթան: Ջյունն ելի պտտվում էր սուր, ածելու պես կտրող ողում:

«... մենք ողնություն ենք աղերսում Ռենգեձիում Ինարիի սեղանների առաջ, վորովհետև այլևս աղջիկ չունենք, և մնում է վաճառելու հեծանիվը, վորով մթերք են տանում շուկա: Այսօր դյուզում հանգան բոլոր ելեկտրական ճրագները, վորովհետև լույսի փողը չվճարելը փաստ է, և ընկերությունը կարել է բոլոր ճրագների լույսը...»

Ապա յոթը տող սևաներկով ջնջել էր գնդի գրաքննությունը:

«... Սրդ, գոհաբերություն կատարելով Ռենգեձիի և Սեյսունի տաճարներում՝ մենք հույս ունենք, վոր մեր աղջիկը մեզ մոտ կլերադառնա միառժամանակ անցնելուց հետո: Իսկ մեր վորդի Կավամուրա Կիթատիին, վորը Նիմեձիի փառահեղ զորդի տակ լինելով՝ այսպիսով պատերազմում է Մանսյու յերկրում, մենք աղաչում ենք շուտով ավարտել Չինաստանի գրավումը և գալ, վորովհետև վերահսկիչն ու կառավարիչն ասացին, թե մինչև գարուն հողամասը պետք է ձեռքներիցս տանք: Մենք խնդրում ենք ձեզ ծառայել կայսրին բոլոր ուժով, դուցե ձեզ վոստիկան դարձնեն՝ բախտավոր կապրենք...»

— Ձեր բրինձն ի՞նչ է յեղել, — հարցրեց սոսկական զինվոր Տանական, վոր տեղավորվել էր յերկու ածուների արանքում՝ ձեռին նույնպիսի յերկար թերթիկներ:

— Վատ է բանը: Բրինձը վաճառվել է:

— Կոմիտսիան¹ համարյա ամբողջ նամակս ջնջել է: Այ, տեսեք, սա ի՞նչ նշան է:

¹ Այսինքն գնդի գրաքննությունը:



— Դա — որհնված խոտ է:

— Հն, այ թե ինչ... Այդ դեպքում նրանք գրում են, թե նրանց գրկում են կապիտալից, և նրանք տաճարներում որհնած խոտ են ուտում: Ասում են թե դա ուռչելուց պահպանում է:

— Դա վորտեղ:

— Տոտտորի պրեֆեկտուրայի¹ հյուսիսային մասում:

Տոտտորի... Սոսկական զինվոր Կալամուրային Տոտտորին չի հետաքրքրում: Նրան հետաքրքրում է Խիոզո պրեֆեկտուրայի արևելյան ծայրամասը:

Մարսափելի վատ է, վոր լրագրները չեն տալիս, — ասում է Տանահան: — Յերեկ յես մի լրագիր տեսա պարոն փոխտեղակալի ձեռքում, բայց յես չորս հարյուր նշան հաղիվ գիտեմ և չկարողացա կարդալ, թե ինչ եր գրված հետևում: Ենտեղ մի ինչ վոր բան կար պուղացիների մասին և պարոն մինիստրի նկարն եր:

Խիոզի արևելյան ծայրամասն է: Այնտեղ այդ ժամանակ մտավորապես յերեկոյան ժամը վեցն է: Աղջիկները բանջարանոցներից բանջարեղենով լի մեծ կողովներ են տանում: Նրանց գլխերին բարձր սպիտակ թաշկինակներ կան: Նրանք հոհում և ծիծաղում են՝ լճակների վրայով ցատկելով: Հայրը շեմքում հանում է դետան² և բրվիչը տալիս կրտսեր յեղորը: Կիսամերկ, մկնեղ Կենձի բեռնակիրը փողոցում թափառում է՝ վաղվա շուկային վարձվելու համար: Ռուս-ճապոնական պատերազմի վետերան մի վոստիկան, ծխամորճը փրթփրթացնելով դուրս է գալիս փողոցի մեջտեղը և առանձնապես վոչ-վոքի չդիմելով՝ բարձր հարցնում է, թե ինչ կա, ինչ չկա: Նրա ձայնը թանձր և զիջող է: Մինչև ցրտերն ընկնելը դեռ յերկու շաբաթից ավելի կա, պատերի մեջ են դնում ձմեռվա շրջանակները. հեծանավորդները խալաթների փեշերը ծողո-

¹ Ճապոնիան պրեֆեկտուրաների (շրջանների) յի բաժանված:

² Գետա — փայտե սանդալներ:

վելով՝ սլանում են հարևան փոքր քաղաքն զրոսանքի: Արագ աչքով են ընկնում նրանց ձերմակ դուլպաները, կայծակի պես պսպղում են ճագերը, յես են թռչում ելեկտրահաղորդման սյուները և մեծ-մեծ ոեկլամները, վորոնց վրա կիլոմետրից կիլոմետր ժպտում է ատամի խոզանակը ձեռին մի աղջիկ:

Մայրը միանգամայն մերկացնում է փոքրիկ յերեխաներին (չնայած աշնանային դով յեղանակին), նրանց ամենափափուկ տեղերին շրմփոց և հասցնում և նստեցնում տաք շուր ածած տակառում, վորտեղից դուրս են ցցվում նրանց յեփած ճակնդեղի պես կարմիր գլուխները:

Վոստիկանական վարչության պատի վրա արդեն կախված է պատերազմական տեղեկանքների սպիտակ թերթիկ, և դեռընտիրներից¹ մեկը քթին ակնոց դնելով՝ բարձրաձայն կարգում է գուցե Խիմեձիի հրաձիգ դնդի փառապանձ սխրագործութունների մասին և խուսափող Յան Հայ-ցղինի մասին, վորին արդեն յերբորդ որն եր, վոր չեյին կարողանում գտնել, չնայած վոր նա շարունակում եր նահանջի: Լեռան հետևից լսվում է Ռենդեձիի տաճարի յերեկոյան զանգահարությունը, վորը կարծես հիշեցնում է հնազանդության և հավատարմության ուխտի մասին, իսկ տասնվեցամյա Յուեկոն կապոցը շալակին քարշ է գալիս ցանկապատի այն կողմը: Պարոն Ոյատայի հավատարմատարն ստորագրում է պայմանաթուղթը և գնված Յուեկոյին ցանկապատի հետևը նստեցնում շոֆյորի մոտ, վորը դյուղական ցնցոտիներից զղվանքով դեն է քաշվում: Յեղ մեքենան թռչում է, և ատամի խոզանակ բռնած աղջիկը շարունակում է յուրաքանչյուր կիլոմետրի վրա ժպտար:

Փողահար Մուրայաման սառած ծվվանը նորից դրավ բերանին: Յերկարատե մեղեդին անցավ չինական գյուղի վրայով և նորից քամուց բռնվեց գյուղի բոլորքից դուրս:

¹ Դեռնտիր — молодой солдат.

Յենթասպա Սեպոյուն մտով բանջարանոց՝ իր խիստ աչքի ընկնող չոր քթով ողբ հոտոտելով:

— Դուք այստեղ ի՞նչ եյիք անում:

— Վոչինչ, ջոկի պարոն հրամանար:

— Հը՞:

— Վոչինչ, ջոկի պարոն հրամանատար:

— Դուք ծխում եյիք, հա՞: Ամերիկյան ծխախոտ: Վո՞ր տեղից եյիք ճարել: Դու, Տանակա:

— Յես բան չեմ արել, ջոկի պարոն հրամանատար:

— Դո՞ւ յես արել: Անգրագետ անասուն: Յե՛վ պարոն ուսանողը: Դուք յերկուսդ: Յես կզեկուցեմ:

Պարոն կրտսեր յենթասպան պատժելու իրավունք չունեք: Նա իրավունք ունեւր գանդատվելու ամեն մի պետի, նույնիսկ վերակային¹:

— Հրացանները սրբե՛լ եք:

— Սրբել ենք, պարոն կրտսեր...

— Դո՞ւ, Կավամուրա:

— Յես սրբել եմ, պարոն...

— Այստեղ յես ո՞ւմ մոտ եմ թերթ տեսել: Պարոն ուսանող:

— Ինձ մոտ լրագիր չկա:

— Իսկ սա՞ ինչ է:

— Սրանով յես շամփուրն եմ սրբել:

— Թղթով: Սա յե՛լ է թերթի մաս: Սա ի՞նչ թերթ է:

— Անգլիական, պարոն կրտսեր յենթասպա:

— Միևնույնն է: Նույնպես թերթ է: Անմաքրություն: Կեղտ: Մաքրության բացակայություն: Ե՛, ի՞նչ եք վրաս մտիկ տալիս: Դո՞ւ, Իսումայա:

— Յես բան չեմ անում:

Ասեպոյուն դո՞հ մնաց: Նա հանկարծակի վրա տալ էր սիրում:

¹ Վերակա — фельдфебель

— Դուք յերեկ աղղանշանը չեք լսել: Ձյունը ձեր ականջները տարել է: Շարվել: Այսոր տոն է: Շարվել: Արագ: Հրացաններով:

Ավագի ֆանդայի առջև բրեզենտի մեծ առագաստ եր քաշած: Նրա վրայից պրակատներ եյին կախված: Աջ կողմը վրանի տակ մի փոքրիկ, վոտը կոտրված, արկղավոր սեղան եր դրված: Չախում ճանապարհորդական ծալովի բագին:

Բագինի վրա նկարազարդ լապտերներ և ցուրտ տարած միկանները¹ մի սկուտեղ եյին դրված:

Բագինի առջև գնդի քրմի ոգնականը խնկարկվող մոմեր եր վառում խնամքով՝ քամու դեմ թղթի յեռանկյունիներ գնելով:

Կավամուրան կանգնել եր առաջին տողանում՝ սառած աչքերը հառած միշտ նույն սառցային կապույտ բլուրներին, վորոնք յերկրորդ շարաթն եր, ինչ կախված եյին 71-երորդ հրաձիգ գնդի վերելք: Նրա հարևան Մորիտան ճանձրույթից դիտում եր շարքով կախված պրակատները:

Չախ կողմը կախված եր Յուսիմայի² պատկերը: Ճապոնական հաճանավերն ալիքների վրա յեն բարձրանում կարծես սանդուղքով, և ամեն մի հաճանավ նկարված է մյուսից բարձր: Նրանց կողերից ողբ միջով կարմիր ուռմբեր են թըռչում՝ իրանց հետևից ողում թողնելով թանձր սև գիծ, այնպես վոր կարծես ողբ խաչաձևված է սերպենտինի ցանցով:

Ամենուրեք — կայմերի վրա, ցողկին և նավախելում — փողփողում են Ծագող Արևի վառ դրոշներ և կանգնած են ժպտացող նավաստիներ, վորոնցից յուրաքանչյուրի գլուխն

¹ Միկան — մանդարինի մի տեսակը:

² Ծովային ճակատամարտը Յուսիմա կղզու մոտ (1905 թ.), ուր ռուսական նավատորմը ընդհանրից ճապոնացիների ձեռքով:

ամենաբարձր կայմի ծայրին և հասնում: Նրանք մատնա-
նշում են կործանող ոռուսական զբաճակիրները, վորոնք պատ-
ված են մըջնանոցի պես պայուսակները մեջքին և ողի մեջ
բարձրացրած հրացանները ձեռներին մարդկանցով:

Յուրաքանչյուր հրացանից սպիտակ ծխի քուլա յե
դուրս թռչում, և այդ հրացանի վրայի սվինը նման է յեր-
կար գեղարդի: Նավաստիներն ուրախ ժպտում են, վորից հե-
տևում է, վոր թնդանոթներն առանց նրանց մասնակցու-
թյան են արձակվում, իսկ ոռուսական նավերը խեղդվում են
բոլորը միասին, և ոռուսների դեմքերի արտահայտությունից
յերևում է, վոր նրանք ուրախ են այդպիսի մեծ ընկերու-
թյամբ մեռնելու:

Յերկրորդ, ավելի իրական պրակատում պատկերացր-
ված էր մի փոքրիկ շաշք զինվոր, վոր սվինի վրա յե շամփ-
բում յոթ ոռու կազակի: Կազակների աչքերն էլ են շիւ,
բայց դեմքերի արտահայտությունը հողեսատանջ է, և յեր-
կար ընչացքները վհատ քստմնած:

Ապա կախված էր ոռուսական ցարի պատկերը, վորի ձին
ձախրում էր անդնդի վրա, մինչ մի գերմանացի և մի ֆրան-
սիացի ձիու հետևից հրում են:

Այդ պրակատները գնդի գույքի մեջ էյին մտնում ոռու-
ճապոնական պատերազմի ժամանակվանից և միայն մեծ
տոներին էյին կախվում: Սոսկական զինվորները դրանք
ուսումնասիրել էյին դեռ հայրենիքում, զորանոցում: Սակայն
մի վերջին պրակատ ավելի նոր էր և բաղկացած էր թղթի
յերկար շերտի վրա տպված գեղեցիկ նշաններից միայն: Դա
«Ճապոնիան լուսնացնել ցանկացող յերկրների ցուցակն» էր:

ԱՄԵՐԻԿԱ
ՌՈՒՍԻԱ
ԶԻՆԱՍՏԱՆ

Հեռեկալ պրակատը վոտանավորով էր գրված.

Ամերիկական դեսպան ֆորբեր
իր առանձնասենյակում նստած՝
Տոկիո կոչված
լուսավոր կայսերական մայրաքաղաքում՝
մի ճապոնացի սպանեց,
նրան կտոր-կտոր արավ և
այրեց կրակարանում:
Իսկ մի ժամից հետո
հանգիստ ընդունում էր այլ ճապոնացիները:
Ավանդ:
Այս փաստը թող նշանակելի լինի
և չկորչի այս աշխարհում:

Սոսկական զինվոր Տանական ձեռքով բերանը ծածկած՝
հորանջում էր:

— Քեզ սվ է տվել ևդ ծխախոտը, — շշնջոցով հարցրեց
Մորիտան:

— Մի անգլիացի, — պատասխանեց Կավամյուրան, — իջե-
վանում, յերբ իջնում էյինք չորրորդ սարից և բարձրանում
հինգերորդ սարը:

— Նա քեզ հետ խոսել է:

— Բոլորովին քիչ: Նա ինձնից հարցրեց, թե յերբեկեց
յես յեղե՞լ եմ հյուսիսային յերկրներում: Հետո ինձնից հարց-
րեց, թե վճրտեղացի յեմ և շոտ եմ մըսում:

— Իսկ դու ի՞նչ պատասխանեցիր:

— Յես ասացի, թե Նադանոյից եմ և թե բոլորովին չեմ
մըսում: Յես ենքան հիմար չեմ, վոր ստարազգուն ցույց
տամ, վոր մըսում եմ:

— Իսկ նո՞ւ:

— Նա ինձ մի տուփ ծխախոտ տվեց և ասաց. «Ծխեցե՛ք,
սա ամերիկյան լավ ծխախոտ է: Դուք յերեկ վաղուց է, վոր

չէր ծխել: Են ժամանակ յես ասացի, թե մեզ մոտ ծխելն արդելված ե մինչև առանձին կարգադրութիւնն անելը: Իսկ նա ժպտաց և ասաց, թե դա փորձ ե յերկրորդ կարգի դեռ ընտիր սոսկական զինվորներէ համար, վորովհետև ես արշավանքը դեռնտիրներէ համար ուղղական ուսում ե: Հետո նա դնաց, իսկ յես նրան ձեռքով ցույց տվի, վոր ծխախոտը վերցնի: Են ժամանակ նա յերեսը դարձրեց ինձ և ասաց. «Ծխախոտը ձեզ մոտ թողեցեք, նա ձեզ պետք կգա, յերբ հատուկ հրաման կլինի»: Հետո Տանական տեսով, վոր պարոն յենթասպան ծխում ե և...

— Յես քեզ պատվով եմ ասում, զրույց մի անիր եդ անդլիացու հետ: Նա Շանդհայի անդլիական թերթի լրագրող ե և ամբողջ ժամանակ դեռնտիրներէ կալչում: Ասում են նա մեր հերոսութեան մասին մի գիրք ե ուզում գրել: Նրա պատճառով արդեն տուժել ե ուսանողը, վոր անդլիներն իմանում ե: Մեկ ել յեֆրեյտոր Նոզուցիի հետ ել բան մի խոսիր: Նա ուզում ե յենթասպա դառնալ:

Կավամուրան նայեց յեֆրեյտորին:

Մացույցի մի բարձրահասակ տղա յեր կանգնած աջ թևում՝ գլուխը բարձրացրած և վճիտ աչքերով ուղիղ առաջը նայելով: Դա շոկի պարծանքն եր, «պարոն անուշարույր սաղմոն» Նոզուին, դեղանի և ատլետ, վաշտի լավագույն հրաձիգը, բարի ընկեր և կանոնադրութիւններն ու կանոնները յուրացնելու մեջ առաջիններից մեկը:

«Նոզուցին սպա կդառնա», ասում եր նրա մասին Սիւրցյուն՝ աչքերը սիրով կկոցելով: «Նոզուցին պահնորդական ե ծնված», հաստատում եր տեղակալ Սոդալան: «Նոզուցին բարի մարդ ե», ասում եյին ծառայութեան առաջին տարվա սոսկական զինվորներն ընթրիքի և ավարտի արանքում:

Յեֆրեյտորը գնդում թշնամի չուներ: Նա վոչվորի չէր մերժում վոչ ծխախոտ, վոչ հավանութիւն:

— Նոզուցին, — ասաց Կավամուրան: — Նրա մասին յես ամենից քիչ եմ մտածում: Պարոն կրտսեր յենթասպան այնպիսի տրամադրութեան մեջ եր, յերբ նա ուզում ե մեկին մի բան ասել...

— Զգո՛ստ: Պահակել՛:

Գումարտակներն² անդլայացան: Որպա՛ն դասակը տանում եր Խիմեճիի դրոշը, այն պատվավոր դրոշը, վորն այնպես եր պատուոված ուս-ճապոնական պատերազմի ժամանակվանից, վոր նրանից միայն մանուշակագույն ծոպն եր մնացել:

Ապա քարացած շարքերի առջևից անցավ դնդի ամբողջ հրամանատարութիւնը³ և վերջում պարոն նոր գնդապետը, չոր, համառ դեմքով մի մարդ: Դա յերիտասարդ գնդապետ եր, վոր ազնվական տոհմից եր և անձնական խնդրանքով եր մանջուրական բլուրներն ուղարկվել: Նա գեկուցումը լսեց, հատուկ կերպով դիտեց լուռ տողանները և գլուխը կոացնելով՝ վորոշակի ասաց.

— Ազո՛ստ՛:

Յերկյուղած լութիւնն տիրեց:

Գնդապետը նստեց: Ձեռները կզակի տակ խաչաձևելով՝ նա կարծես մի բանի մասին մտածում եր, և Կավամուրան սարսափով նկատեց նրա ձեռներին կարմիր բծեր — ցուրտ տարած տեղերի հետքեր:

Հրամանատարութիւնն սպասում եր:

Գնդապետը հիշեց և նորից վեր կացավ:

— Զինվորներ, — ասաց նա, — այստը մենք գիշերելու հնարավորութիւն ունենք: Կիզինսետցուի մեծ ազգային

1 Смирно! На караул!

2 Батальоны.

3 Командование.

4 Вольно!

տոնն է, կայսրութեան հիմնադրութեան որը, ամեն մի ճապոնացու սրտի ուրախութիւնը:

Նրա ձայնը յերիտասարդ եր, թարմ, բարձր, նույնիսկ միքիչ վախկոտ: Յեթե ութ հարյուր հոգն է յերկուդամ լուծթիւնը չլինէր, այդ ձայնը կկորչէր յերկանիմլերի և տակերը մեխ խփած կոշիկների շփոթում:

— Յերկու հարյուր տարի առաջ այսպիսի մի դեպք է յեղել. քաջ ռազմիկ Ասանոն վիրավորեց պալատական Մորոնաոյին և դատապարտվեց սեպուղուկուլի¹: Նրա տոհմը վոնչազովեց և ցեղը կտրվեց: Այն ժամանակ նրա քառասուն և յոթ հավատարիմ ծառաները Յուրանոսկեյի գլխավորութեամբ վճռեցին իրանց ամբողջ կյանքը նվիրել իրանց տիրոջ համար վրեժխնդիր լինելու դործին: Շատ տարիներ անցան: Մի ձյունոտ գիշեր այդ քառասունյոթ հավատարիմ վասալները Մորանաոյի ամբողջ խուժեցին և նրա վախկոտ տիրոջ գլուխը կտրեցին: Ապա նրանք գնացին Ասանոյի գերեզմանը և իրանց փորները պատռեցին՝ ժպտը դեմքներին:

Ի՞նչ արին նրանք: Նրանք մտան սամուրայների շավիղը: Ե՛լ ավելի շատ տարիներ անցան: Մի քանի որ առաջ յերեք ճապոնացի զինվորներ պապացուցեցին, վոր ճապոնական ռազմիկի վոգին չի մեռել: Նրանք մոտեցան չինացիների լարային ցանկապատերին Շանգհայում և իրանց պայթեցրին վառոդափոսի հետ միասին՝ հարձակվող ծովային հետևակազորի համար ճանապարհ բանալով:

Գնդապետը սեղանից մի լրագիր վերցրեց.

— Ահա նրանց անունները: Ահա նրանց պատկերները:

Գնդապետը թերթը բարձրացրեց: Ամբողջ առաջին թերթը բռնված էր տարազային գլխարկ զրամ յերեք դեղջկական դեմքերով:

¹ Սեպուղուկու (խարակիր) — փորը պատռելը:

— Նրանք դեպի մահ անցան սամուրայների շավիղով: Նայեցեք նրանց:

Գումարտակները նայում էին:

— Մենք ել ենք դնում սամուրայների շավիղով: Կայսրութեան հիմնադրութեան որը մենք զիմավորում ենք Մանչուրիայում: Այստեղ ձյուն է, տայֆուն և թշնամի ազդարնակչութիւն: Սամուրայների շավիղն ոտար լեռներով և անցնում: — Գնդապետը կանգ առավ և մատնանշեց բլուրների կապույտ շղթան: — Յուրաքանչյուր քայլափոխում մեր հետքն են պահում չինացի յելուզակների գնդակները: Այդ յելուզակները բաց կովի դուրս գալու փոխարեն թաղնվում են: Այսոր առավոտ մենք տեսանք նրանց սառած փեղույրները: Մենք ճապոնացիներս վաղուց ենք մտել հավատարմութեան և պատվի այս ուղին: Մեզ համար այլ ճանապարհ չկա:

Գնդապետը կանգ առավ և զինվորներին նայեց սուր, կասկածոտ, շիլ աչքերով: Առաջին տողանում ձեռներն ազդրերին կպցրած՝ կանգնած էր հերոս Նոգուցին, և նրա հայացքից հավատարիմ ծառայի պարզութիւն և նվիրվածութիւն էր ծորում: Սոսկական զինվոր Կավամուրան կանգ առած աչքերով իր առաջն էր նայում: Սոսկական զինվոր Մորիտան յուրաքանչյուր պաուզայի տակտով գլուխն որորում էր: Սոսկական զինվոր Տանական հետևից դուրս էր ցցել իր հետաքրքիր կտր դեմքը: Դասակը սառել էր:

— Սամուրայների շավիղն անցնում է մեր բոլոր հաղթական պատերազմների միջով: Այդ ուղու վրա յեն ընկած հետևյալ դեպքերը. «Միկասա»-յի հերոսները չինացիների հետ ունեցած առաջին պատերազմում. «Կենդանի ուսմբերը» Պորտ-Արտուրում ուսմների հետ ունեցած առաջին պատերազմի ժամանակ, կամ «Երձիգ նավերի վրա կատարած սըլբրապործութիւնը. կապիտան Նիրոսոյի կատարած հերոսական սխրագործութիւնը նրան պատերազմում. սոսկական

դինվոր Մուսուսայի սխրագործութիւնը՝ դերմանացիների դեմ վարած պատերազմում. «սառցային պարեկը» Միրբրի արշավանքի ժամանակ, և յերեք ղինվորների սխրագործութիւնը Շանգհայում: Բացի դրանից յերկրորդ կարգի բազմաթիվ քաջագործութիւններ:

Գունդն առանց շարժվելու լսում եր սխրագործութիւնների ցուցակը և նայում շանգհայան իր յեղբայրակիցներին, վորոնց դեմքին լիակատար անտարբերութիւնն եր ստուած քնացած:

— Սամուրայների շավղով դնացող ռազմիկների համար պարտադիր ե յերկու տեսակ մաքրութիւն. առաջինը — բարոյական մաքրութիւն, յերկրորդը — ֆիզիքական մաքրութիւն:

Գնդապետը կրկին անգամ նայեց գումարտակներին նեղ, կկոցված աչքերով:

— Զինվորներ: Մեր պետութիւնը լավագույնն ե աշխարհում: Նա պատկանում ե նորին կայսերական մեծութեանը: Մեր պետութեան բանակը նույնպէս լավագույնն ե աշխարհում: Նա ևս պատկանում ե նորին կայսերական մեծութեանը: Կայսերական բանակն ամեն մի քաղաքականութիւնից բարձր ե կանգնած: Նա կանգնած ե սամուրայների ճանապարհին: Նա արհամարհում ե պոլիտիկաններին, կոմունիստներին և գոմինդանականներին:

Կայսերական բանակը յերկիրն ազբից կմաքրի: Զգուշացե՛ք պրոպագանդից: Սամուրայների շավղում տատանումները տեղ չունեն: Այդ շավղից ամեն մի դուրս յեկող անարգարար կգնդակահարվի: Մյուսները կայսրի և իր սպայի համար մեռնելու մեծագույն յերջանկութիւնը կստանան: Շատերի համար ծանր ե, բայց իսկական սամուրայը տանջանքների ժամանակ ժպտում ե:

Նույնպէս կարևոր ե ֆիզիքական մաքրութիւնը: Ինձ գեկուցեցին, վոր շատերի շապիկները կեղտոտվել են: Դա

անթուշլատրելի յե: Ճապոնական ղինվորը կեղտոտ շապիկով կոխի չի դուրս գալիս:

Իսկ հիմա հիշեցե՛ք ուրեմն յերեք հիմնական սկզբունք: Առաջին սկզբունքն ե — գեղին ցեղը պետք ե փրկի աշխարհը: Ամերիկացիները հնարել են հումանիտարիզմ, իսկ ոուսները — բոլշևիզմ: Բայց այդ կարծիքները սխալ են: Աշխարհը կփրկի գեղին ցեղի ռազմական քաջութիւնը:

Յերկրորդ սկզբունքն ե — չինացիները գեղին ցեղ չեն: Ճշմարիտ գեղին ցեղը — դա ճապոնացիներն են, մանջուրները, մոնղոլները և Բայքալից գեպի արևելք ապրող ցեղերը: Իսկ չինացիները հարյուրավոր ժողովուրդների արյուն են ներծծել: Նրանք ծագում են քիչ-քիչ բոլոր ժողովուրդներից, վորոնց թվում ամերիկացիներից: Իսկ աշխարհը կարող ե փրկել միայն մաքուր ցեղը:

Յերկրորդ սկզբունքն ե. շատ յերկրներ նախանձում են ճապոնիային և ցանկանում են նրան վոչնչացնել: Այն բոլոր գեղին ժողովուրդները, վոր յես թվեցի, կայսրի բարեկամներն են: Մնացածները նրա թշնամիներն են: Կայսրի ամենազլեամբը թշնամիները — դա չինացիներն են, ոուսները և ամերիկացիները:

Դեղին ցեղի միութեան գործը գլուխ բերելու և այդպիսով աշխարհս փրկելու համար են ձեզ այստեղ ուղարկել: Զինաստանն ազատելու համար անհրաժեշտ ե ազատել Մանջուրիան: Ասիան ազատելու համար անհրաժեշտ ե ազատել Զինաստանը: Այն ժամանակ մեղ քնում ե ազատել Հնդկաստանն, Ալստրալիան, Յելլոուպան և ապացուցել Յամատո ցեղի գերազանցութիւնը:

Այս ամենը գլուխ բերելու և ամեն տեսակ ռազմական գործողութիւնների պատրաստ լինելու համար անհրաժեշտ ե մանրակրկիտորեն հետևել ինքն իրան և հարևաններին: Ամեն մի նկատած բանի մասին հայտնել ինձ կամ քնասակար մտքերի դեմ պայքարելու համար կազմված հանձնաժողով:

դովին: Ուղղակի հանձնաժողովին դիմելու համար չեն պատ-
ժիլ, թեև դա թույլ չի տրվում: Գործի անցեք:

Շտաբի որպպահն արկղը բանում է: Սկսում են տոնա-
կան ոտձիկը տալ: Գնդապետը չի հեռանում: Հրամանատա-
րությունը սառչում է: Նոր հրամանատարը կամենում է ան-
ձամբ դիտել ոտձիկ տալը:

— Ոսումի:

— Հանդերձյալ կյանքումն է, — պատասխանում է արի
Սևոցյուն:

— Յամագուցի:

— Հանդերձյալ կյանքումն է:

— Ե՛յկո:

— Հանդերձյալ կյանքումն է:

— Կավամուրա:

— Այստեղ եմ:

— Մոտեցիք:

Կավամուրան մոտենում է:

— Կայսրը քեզ մարտական ոտձիկ է տալիս: Հինգ իեն:
Թեև այդ ոտձիկն իրապես չնչին է և այդ փողով անկա-
բելի յե վորեև բան գնել, բայց դու պարտավոր ես դիպել
վոր այդ ստանում ես հենց կայսրից: Զգո՛ւմ ես:

— Զգում եմ:

— Կրկնիր:

Կավամուրան կրկնեց:

— Ո՞վ է մեր կայսրը:

— Յերկնքի վորդին:

— Նա քեզ ինչո՞ւ յե այստեղ ուղարկել:

— Ես յերկրում արյունս թափելու և եղպիսով ամբայ-
նելու ճապոնիայի իրավունքները և Մանչուրիայի դրախ-
տային յերջանկությունը:

— Բավական է: Հետևյալը:

Ժամերդությունից հետո փողահարը նորից նվագեց: Սի-
մադայի վաշտը պառկոտեց բանջարանոցում: Քամին շարու-
նակում էր վոռնար: Շուրջն անհանգիստ էր: Ցանկապատի
մոտով անդադար անցնում էյին լապտերներով: Տանական
գլուխը բարձրացրեց:

— Ի՞նչ էք կարծում, եսոր մեղ կթողեն, վոր քնից կըշ-
տանանք:

— Հանդարտ: Սա ո՞ւմն են տանում:

Պատգարակի վրա դանդաղ յերկու անշարժ մարմիններ
անցան: Սանխտարը լապտերով ճանապարհը լուսավորում էր:

Տանական մի վոստյունով հասավ ցանկապատին:

— Իս հրետանային պահակիցն է, — ասաց նա՝ վերա-
դառնալով: — Ժամապահն ու յենթամապահը սառել են:
Նրանց համար եստեղ տեղը չբավականացավ, նրանք դաշ-
տում են գիշերում:

Կավամուրան հայացքը յերկնքին սեւեւեց՝ ջանալով թե-
կուզ մի աստղ գտնել այնտեղ: Բայց յերկնքը թանաքի
պես սե էր: Հարեան բանջարանոցից քամին յերկարատե
հնչյուններ բերավ: Մեկը յերգում էր:

Տիրեցեք Պորտ-Արտուրը

Յեվ Սարբին բաղաբը

Յեվ ուղիղ Ուրալի գազաթին

Տնկեցեք Ծագող Արևի դրոշը:

Հնչեց մի կանչ, և ամեն ինչ լռեց: Այն ժամանակ Տա-
նական շարժվեց:

— Լույս տվեք: Խնդրում եմ:

— Լույսն ի՞նչ էք անում:

— Յես լրջալիր եմ ճարել:

— Թագյրեք: Ուսանողը դրա համար տուժեց:

— Մի բոպե լույս տվեք: Պարոն յենթասպան գնացել
է տեղապահի մոտ: Եստեղ Տոյամա պրեֆեկտուրայի մասին
մի բան կա:

- Վճրատեղ եր ասեւ լրագիրը:
- Պարոն գնդապետը քցեց:
- Դուք շատ անդգուշ եք վարվում:
- Յես միայն մտիկ կտամ: Ասում են՝ Շանդհայում խաղմ¹ ե յեղել:
- Ձեզ ո՞վ ասաց:
- Մի անգլիացի:
- Ելի՛ եղ անգլիացին: Պետք ե զեկուցել: Ավելի լավ ե նրա հետ գործ չունենալ:

Վառած լուցկու թույլ լույսը մի կողմից մյուս կողմ նեավելով՝ սոսկական զինվոր Տանակայի դուռը լրագրային թերթի կեսը լուսավորեց: Կավամուրայի աչքին ընկավ ժրպտացող աղջկա ծանոթ պատկերը: Նա կարգաց.

Յերեք հերոսների քաջագործությունը դուք չեղիք կարող կատարել, վորովհետև դրա համար անհրաժեշտ ե հիանալի տեսողություն: Յուրաքանչյուր ճապոնացի պարտավոր ե լավ տեսողություն ունենալ՝ գործածելով ՎՄՆԵԴՈՐԻՆԵ՝ աչքի կաթիլներ: Յուրաքանչյուր ճապոնացի պարտավոր ե հերոս լինել:

- Հեյ, ի՞նչ կա եղտեղ:
- Դա Սեացյուլի ձայնն եր: Կավամուրան թափով հանգրեց լուցկին:
- Մի՛ շտապեք: Միևնույն ե՛ կգանեմ: Տանակա:
- Եստեղ եմ, ջոկի պարոն հրամանատար:
- Դա ի՞նչ ե քեզ մոտ: Եստեղ տուր: Թեթե ե Վճրատեղից ես վերցրել:
- Դտեւ եմ, պարոն կրտսեր յենթասպա:
- Կզեկուցեմ: Յերեք որ բանտարկու թյուն:

¹ խաղմ — сынт.

Փոխգնդապետ Ֆուձինամին իր տեղից տեսնում եր միայն կապիտան Սիմադայի լայն թիկունքը ե գնդի համհարդ¹ Ոտակուրայի սապատավոր դժգույն քիթը: Փոխգնդապետն ինքը յերբեք հարցուփորձ չեր կատարում: Նա դերադասում եր ներկա լինել հետևում, կիսախավարի մեջ գտնվելով, վորտեղից մուշտակի աղվեսամորթից կարած ոճիքից միայն ծխադույն ակնոցն եր ցցվում:

Հարցուփորձը կատարում եր Սիմադան: «Ձղջիկ» ճրագի նարնջադույն լույսն ընկնում եր համեմատաբար դեռ յերիտասարդ չինացու հարթ գլխադժի ե աչքերի շիւ ճեղքիկների վրա: Նրա ծաղրական հարթ սափրված քաղաքադիտական դեմքը քիչ եր համապատասխանում մետաքս կուրմային², վորպիսին հազնում են մանրավաճառականների տղաները Սունգարիի վրայի քաղաքներում: Նրա աղվեսամորթից կարած գլխարկից, վոր ընկած եր սեղանին, ջուրը կաթիլ կաթիլ ցած եր հոսում:

Հարցաքննությունը կատարվում եր ճապոնեան, վոր ել ավելի դարմանալի յեր ե հակասում եր բոլոր կանոններին:

— Նրա վրանը Լյանշադու իմպանում³ եր, — ասաց չինացին, — վորի համար յես կարող եմ յերաշխավորել, վորովհետև այնտեղ նստած ե իմ վեցերորդ համարը: Յերեկ յերեկո նրանք վրանը քանդեցին ե հարավ դնացին:

— Հարավ, — կրկնեց Սիմադան: — Հե, հարավ, դա անկարելի յե:

— Ինչո՞ւ:

¹ Համհարդ — ар'югант.
² Կուրմա — չինական կուրտիկ:
³ Իմպան — ազարակ, շին:

— Այնտեղ լեռնաշղթայի վրայով վոչ մի շավիղ չկա: Ավելի՛ ճիշտ ասացեք:

— Յես հաղորդում եմ այն տեղեկութունները, վոր ժողովել եմ այս առավոտ: Այրուձիու կիսադիվիզիոնն առավոտյան յերկու զնգացիրով սլացավ Սյաոներգըրիյով: Նրանց հետեւելով՝ գործակալը պարզեց, վոր նրանք հասելեն Մուղանցյայանի կամուրջը և ծովել դեպի արևելք, ուղղակի անտառը:

— Կալ: Դա մենք գիտենք: Իսկ ինչ վերաբերում ե ֆուրաժին¹...

— Յան Հայցյղինը հենվում ե շրջակա գյուղերի վրա: Նրան ֆուրաժ են մատակարարում Երզազույում և Դալյանշան իմպանում:

— Նրանք Լյանշազուուից յերբ ես հեռացել:

— Արևամտից առաջ, այսինքն ժամը հնգին: Յերևի նրա խարբինյան գործակալներից մեկն իմպան եր յեկել, վորովհետև վեցերորդ համարը ցերեկվա ժամը յերեքի մտերքը տեսել եր յերկու նորերը, վորոնք մոտ յեկան շենին արևմտյան կողմից և այնտեղից կես թե մեկ ժամից հետո արագ հեռացան նույն ուղղությամբ:

— Նա յերեսները չկարողացավ տեսնել:

— Վոչ: Նա հետևից եր տեսել նրանց:

— Իսկ այստեղ նրանք յերևի չէն յեղել:

— Վերտեղ: Այս գյուղում: Յես հո ասացի: Նրանք շուրջկալի գնացին:

— Կալ: Պարոն Ոտակուրա, դուք լինչ եք ցանկանում ավելացնել:

— Ձեր գործակալն այլևս վոչինչ չի՞ կարող հաղորդել շենի վերաբերմամբ:

— Նրան չեն թողել այնտեղ մտնի: Ընդհանրապես ամբողջ որն այնտեղից վոչվոքի բաց ել չեն թողել: Նա ասում

¹ Ֆուրաժ — ձիերի կեր:

և, թե այնտեղ ինչ վոր բան եյին տապակում և թխում՝ ծխին նայելով: Ապա նա խանշինի¹ դատարկ տափաշներ² և հայտնաբերել: Նա սագերը համրել ե:

— Բանբան են յեղել:

— Բսաներկուսը:

— Գրի առեք, կապիտան:

— Ըստ յերևույթին՝ խողածուտեր են մորթելիս յեղել:

— Շատ:

— Միքանի հատ:

— Իսկ սպասավորները:

— Այնտեղ սպասավորներից բան իմանալ չի լինիլ: Յես արդեն զեկուցել եմ պարոն համհարդին, վոր վեցերորդ համարի ողու ամբողջ պաշարն սպառվել ե:

— Այս իմպանը դրի առեք, կապիտան: Յես այլևս հարցեր չունեմ:

Ոտակուրան հետ նայեց զնգապետին:

— Յես հարց ունեմ, — ասաց Ֆուձինամին:

Չինացին գլուխը բարձրացրեց: Կիսախավարում ցցվել եր աղվեսամորթու ոձիքը, և ծխագույն ապակիները պտղղում եյին:

— Ինչո՞ւ դուք ուղղակի շտար եք գալիս:

— Յես զեկուցել եմ պարոն փոխգնդապետին: Ձեր հետախույզներն իմ գործակալի վրա կրակել են հարևան գյուղում: Յես չեյի կարող անձս վտանգել և հույս դնել անծանոթ մարդկանց վրա:

— Իսկ ինչո՞ւ եք դուք ասում, թե առավոտյան Սյաոներգըրի եք յեղել, մինչդեռ դուք յեղել եք գորաբաժնի շտարում:

Գործակալն ուշուշով նայեց ծխագույն ակնոցին: Գըրխարկից շուրջ կամաց-կամաց հատակին եր թափվում:

¹ խանշին — չինական ողի:

² Տափաշներ — фляжка.

— Յես դորբաբաժնի շտաբում չեմ յեղել:

— Իսկ վճարեղ եք յեղել դուք:

— Սյառերգրելուամ: Յես արդեն ղեկուցել եմ պարոն փոխ-
դնդապետին, վոր Յան Հայ-ցղինի գործակալներին մի ցանց
կա այստեղ, վոր կարող ե մեզ մոլորութեան մեջ զցել: Պա-
րոն փոխդնդապետի տեղեկութեաններն ստուգման կարոտ
են: Պետք ե կապն ստուգել:

— Մենք այդ ստուգում ենք:

Գործակալը գլուխը կախեց և լռեց:

— Յես կարծում եմ՝ այսոր այսքանը բավական ե, —
հնչեց փոխդնդապետի չափածո, ճոճուան ձայնը: — Դուք այս-
տեղ կքիշերեք, թեև դա բոլորովին անհարմար ե: Դուք
պետք ե դուրս դաք մի յերեք ժամից հետո, դեռ մինչև լու-
սաբաց: Յես վճռականապես արգելում եմ ձեզ զծի վրա շըր-
ջել: Ձեր մյուս ներկայանալը դորբաբաժնից կլինի կախված...

Գործակալը ցնցվեց:

— Դուք այստեղ եք մնալու:

— Դա հայտնի չե: Դուք հրահանդ կատանաք ձեր գծով:
Համենայն դեպս յեթե մենք ձեզ անձամբ տեսնենք, ստիպ-
ված կլինենք միջոցներ ձեռք առնել...

— Պարոն փոխդնդապետ, — ասաց գործակալը, — յես ձեր
ուշադրութեանն եմ հրավիրում թղթեր ուղարկելու՝ անկա-
րելիութեան վրա: Յան Հայ-ցղինը Տոկիոյի գլխավոր շտաբի
նախկին սան ե, և նա հրաշալի կերպով...

— Այդ բոլորը յես գիտեմ, — շարունակեց Ֆուձինա-
մին, — և այնուամենայնիվ սխտեմը — սխտեմ ե: Այստեղ
մենք գործ ունենք վնչ ուղմական հետախուզութեան հետ:
Մենք գործ ունենք շտաբային գործակալական հետախուզու-
թեան¹ հետ: Իժարատարար այդպես են աշխատանքի պայման-

¹ Գործակալական հետախուզութեան ե կոչվում ճապոնական բանա-
ղում պատերազմական հետախուզութեանը:

ները Մանջուրիայում: Մենք ստիպված ենք սխտեմը մասերի
բաժանել: Սխտեմը — սխտեմ ե, իսկ պատերազմը — պատե-
րաղմ: Դուք կարող եք գնալ:

— Յես ուզում եյի... — սկսեց գործակալը:

— Վոչ, — ասաց փոխդնդապետը, — այդ տեսակետից յես
կարող եմ միայն մերժել ձեզ:

— Բայց այն ժամանակ...

— Դա յեկ պետք չի: Դուք հրահանդ կատանաք: Մարշ:

— Պարոն կապիտան, նրան ուղեկից տվեք մինչև պահ-
նորդական գծից գնել:

Կապիտանը և չինացին դուրս գնացին: Ոտակուրան
վեր կացավ և ճրագը տեղափոխեց փոխդնդապետի սեղանը:

— Նրա խոսքերից դատելով՝ մենք արդեն ձեռից բաց ենք
թողել այդ գեներալին, — ասաց նա:

— Նրա խոսքից մի դատեք, — հանդիստ պատասխանեց
Ֆուձինամին՝ իր առաջ ընկած գիրքը բանալով:

— Դա մեր առաջին կարգի հին գործակալ ե: Չժան
տասներկու տարի յես, վոր մեզ մտ աշխատում ե: Նա ամ-
բողջ ժամանակ սպասարկել ե Կվանտունյան դորբաբաժնակը¹:

— Յես նրան ճանաչում եմ, — գլխով արավ փոխդն-
դապետը, — յես ուսումնասիրել եմ չինական գործակալու-
թեանը: Նա սխտեմը քանդում ե: Իսկ այսպիսի գործում
սխտեմն ամենից կարևորն ե:

— Դուք նրա ասածի վրա կասկածում եք:

— Յես կասկածում եմ ամեն մի չինացի գործակալի
ասածի վրա: Յուրաքանչյուր չինացի մի դավաճան ե: Դա
յեկ ե սխտեմի մեջ մտնում: Մենք խիստ դժվարին պայման-
ներում ենք ապրում: Աշխարհիս յերեսին վոչ մի բանակ այս-
պիսի պայմաններում չի աշխատում: Բայց և աշխարհումս
վոչ մի բանակ լրտեսների այնպիսի ցանց չունի, ինչպես

¹ Մանջուրիայում գործող ճապոնական բանակը կոչվում ե Կվան-
տուն ան:

մերը: Իրապես բանակ ասածը մի մեքենա չէ, պարոն համահարգ: Բարձրում ինչ վոր մի տեղ նստած է մի վոմն, որինակ՝ № 1-ը: Նա քարտեղի վրա պայմանական քառակուսիներ է դնում և հաղորդում իրան յենթակա № 2-ին: Այդ յերկրորդ համարն իր կարգադրության տակ ունի № № 3-ը, 4-ը և 5-ը, վորոնք իրար հետ կապված չեն: Յե՛վ այլն: Իրականում ամեն ինչ կատարվում է այն քառակուսիների շնորհիվ, վորոնք շարժվում են քարտեղների վրա ինչ վոր առանձին-առանձին կենտրոններում: Դա նույնպես պարզ բան է, ինչպես մաթեմատիկան:

— Այո-ո... — ակնածությամբ ասաց Ոտակուրան, վորը գրեթե վոչինչ չէր հասկացել այն բանից, ինչ վոր ասել էր փոխգնդապետը: — Այնուամենայնիվ յեթե Յան Հայ-ցղինն արևելք չի գնացել, բայց և այնպես հարավում մենք նրան բռնի ենք ամենավայրի տեղեր...

Փուձինամին մտիկ տվավ նրան և խորասուզվեց գրքերն թերցանության մեջ:

— Հիշեցեք, պարոն համահարգ, — ասաց նա մի քանի րոպե հետո՝ փոքրիկ դեղին ձեռի չոր մատն ողի մեջ բարձրացնելով, — վոր սպան — սպա յե: Գործակալը — գործակալ է: Իսկ զինվորը — զինվոր է: Այս կատեգորիաները վոչ մի կերպ չի կարելի շփոթել: Աշխարհիկ և զինվորական մարդկանց վոչ մի կերպ չի կարելի խառնել:

Դուռը բացվեց և իր լայն ուսերը դժվարությամբ ներս թռկելով՝ հյուզակը մտավ սառնամանիքային գոլորշու քուլայով մի բարձր մարդ արջե մուշտակ հագած, ֆոտոսպարատով:

— Վոզմո՛ւյն պարոն փոխգնդապետին, — ասաց նա՝ զինվորականի պես կրունկները թիկացնելով, — վոզմո՛ւյն պարոն համահարգին: Չինացին հարթեց և ծլկվեց:

— Այս անգամ մեզնից չի պրծնիլ — չոր-չոր ասաց Փուձինամին՝ եջը դարձնելով:

Ոտակուրան սիրալիք ժպտաց՝ իր ձիու ատամների նման ատամները ցույց տալով:

— Ստոածների վերաբերմամբ ի՞նչ կասեք:

— Բոլորովին չկան:

— Իսկ իմ ներկայությամբ յերկուսին բերել են:

— Ո՞, պարոն Մակ Կեննա, այդ մասին մեզ վոչինչ հայտնի չի, — ասաց Ոտակուրան քաղաքավարի Փշշոցով:

Թղթակիցը ժպտաց:

— Չվարձալի յե, վոր զինվորները շատ ավելի հաճախ են սառչում, քան սպաները:

— Դա կախված է բարոյական դաստիարակությունից, — նկատեց Փուձինամին:

— Իմ կարծիքով ավելի շուտ սնվելուց է, — ասաց անգլիացին՝ սեղանի մոտ նստելով: Մեզ մոտ բանակում ավելի դժվար կլինեիր զինվորների հետ յուր գնալ: Փորձեցեք սպաներին զինվորի պես կերակրել...

— Սպան զինվորների հայրն է: Բանակը դրանով և կանգուն:

— Հայրը... — հառաչեց թղթակիցը: — Բայց այն, ինչ վոր այստեղ ինձ իրոք դարմացնում է, դա ձեր սոսկական զինվորների համառությունն է: Նույնիսկ նորակոչիկները հրաժարվում են ծխախոտ ընդունելուց «մինչև առանձին հրաման» ստանալը: Ինձ թվում է, թե այն գիրքը, վոր յես ուզում եյի գրել ճապոնական սպայի մասին, կփոխարկվի ճապոնական զինվորի մասին գրքի:

— Մեր զինվորը լավագույնն է աշխարհում: Նրան չի կարելի փչացնել...

— Չե, դուք ինձ այն չիմացու մասին ասացեք, — ընդհատեց թղթակիցը: — Յես այնպիսի տպավորություն եմ ստացել, վոր դուք ուզում եք լուսն ծանր թնդանոթով սպանել: Ո՞ւր և այժմ Յան Հայ-ցղինը:

— Ո՛ր, պարոն Մակ Կեննա,— քաղաքավարութեամբ ասաց Ոտակուրան,— մեզ բացարձակապէս վոչ մի բան հայտնի չէ:

— Ամենալալիս իմ տեսակետով,— ուրախ շարունակեց թղթակիցը,— հին արարական յեղանակը գործադրելը կլինի:

— Արարական:

— Այո: Վոչնչացնել գյուղերը:

— Մենք իրավունք չունենք խաղաղ ազդարնակչութեանը ձեռք տալու,— ել ավելի քաղաքավարի ասաց Ոտակուրան,— ուստի և ձեր արարական յեղանակը մեզ հարմար չի դալիս:

— Բայց հենց դուք ինքներդ... — սկսեց անգլիացին:

Դուռը նորից ձոռաց: Պահակների որապահը ներս մտալի հետեից բերելով մի մարդու, վոր խալաթի մեջ փաթաթված էր, ազվեսամորթուց կարած մեծ գլխարկով, վոր նրա գեմքի կեսը ծածկում էր: Նա սենյակի մեջտեղը դուրս յեկավ և յերկու ձեռով գլխարկը հանեց:

— Չժանո,— խստութեամբ ասաց Փուձինամին՝ գլխքը շրթկոցով փակելով,— դուք ինչո՞ւ յեք վերադարձել:

Չինացին փոխգնդապետի ականջին ընկավ և արագ-արագ մի բան փսփսաց: Փուձինամին վեր կացավ: Նրա մեծ, պանրի պես դեղին դեմքը քիչ էր սագում զարմանալի փոքր, զննող դեմքին:

— Պարոն համհարդ,— ասաց նա,— դեկուցեր պարոն գնդապետին: Դուք կարող եք գնալ, Չժանո: Նրան անցկացրեք պահակներից դէնը: Այս անգամ շատ հաջող ե, Չժանո:

Թղթակիցը մենակ մնաց: Նա դեպի իրան քաշեց սեղանի վրա փոխգնդապետի թողած գլխքը: Դա «Մեծ գենեբալ Մոլոկեյի պատմութիւնն» էր («Դայդեհնսույ Մորուտուկե սի»):

Սոսկական զինվոր Կավամուրան շեփորի ձայնը չեր լսել: Նա այն բանից զարթնեց, վոր սոսկական զինվոր Տանական նրա ականջին դռում էր:

— Տագնապ: Պարոն Կավամուրա:

Նոր էր սկսում լուսանալ: Բանջարանոցով լապտերները ձեռներին դետուդեն էյին վազում յենթասպաները՝ հողհածներին աքացիներով զարթեցնելով: Հեծելորդները քաշում էյին համառող յերիվարներին: Հինգ բոպե անգամ չեր անցել, վոր Կավամուրան քայլում էր լեռնային ճանապարհով՝ առանց իր վոտները ձյունի փոշու մեջ տեսնելու: Տանական հողհած հորանջում էր՝ աշխատելով բերանը չբանալ:

— Չինացինքը են:

— Վոչ,— ասաց Տանական,— բան չեր լսվում: Միքանիսին թողեցին: Թնդանթաձիգները քնած են: Մորիտային և ելի յերկու հողու շտարն են կանչել: Եստեղ ինչ վոր գործողութիւն և կատարվում:

— Վազել: — Դեպի բարձր վազեցին:

— Գնդապետն ասում էր գործողութիւն,— հետևով շարունակեց Տանական: — Հենց սա յե գործողութիւնը վոր կա: Պարոն գնդապետը դեղեցիկ էր խոսում:

Բարձր տափարակից վեր մանուշակագունում էյին լեռնաշղթայի սապատավոր մեջքերը: Արդեն առավոտանում էր:

Չորախումբը բաժին-բաժին արին: Գնդացիբազմորդներին տարան աջ կողմի բլուրները: Քառորդ ժամից հետո Կավամուրան պառկած էր ձյունի մեջ թաղված և իր «գոչկիսի» ունեւրերից բռնած: Մոայլ Սետցյուն պառկած էր մի կողմում՝ հեռագիտակը ձեռին: Շուրջն անխոտ լաղաղութիւն էր, և յեթե քամին չլիներ, լավ կլիներ գլուխը խրել ձյունի մեջ և քնել:

— Են ինչ և այնտեղ, ներքեում,— հարցրեց Կավամուրան՝ ցույց տալով խաղալիքանման ֆանդաները, վորոնք զլմացի լեռնալանջին էյին կպած:

— Լյանշագոու իմպանն և,— ասաց Տանական: — Հենց սա յի գործողութիւնն է, ասաց պարոն գնդապետը:

Լուսանում եր: Բլրից դենն արդեն պայծառ դեղնապը-
զընձի դույնով վառվում եր: Մարմնի կարտոցն անցավ: Պառ-
կելը հաճելի յեր, նույնիսկ տաք եր:

— Ապա նայեցեք, — աշխուժացավ հանկարծ Տանական, —
խնդրեմ ձախ կողմը նայեցեք:

Լեռան լանջը դուրս յեկավ հեծյալների մի խումբ: Կարճ-
լիկ ձիերը մի վտարից մյուսն եյին փոխվում և դուլաները
ամբոմբացնում: Նրանց անհանդատացնում եր յերկնքից
լավող խուլ դղրդյունը: Ամպերի գորշ վարագույրի տակով
նորից եյին յերկու ինքնաթիռներ սահում: Հետևից շարժ-
վելով հասնում եր ծանր և թանձրամարմին մի ուժրատար՝
սավառնող ցինի պես:

— Դա դնդի շտարն և, — շշնջաց Տանական: — Տեսնում
եք, գործողություն և:

Գնդապետն իր շտարով բռնեց ամենահարմար դիրքը,
ինչպես դորահանդիսում: Ըստ յերևույթին նա ընդդիմադրու-
թյուն չէր սպասում: Ինքնաթիռները լայն աղեղ դձեցին
Իմպանի վերևում: Ռմբատարը հայտնապես ցածրացավ:

— Ուշագրություն, — դողանջեց Սեպյուն՝ հեռադիտակն
իջեցնելով:

Փոխտեղակալ Սողավան կողքի թփի հետևից դուրս նա-
յեց՝ ջղայնորեն ուղղելով ակնոցը:

— Նշանն ստաջին համարն և — ճանապարհի թաշաձե-
վուկը: Տարածությունը յերկու հազար: Յրումը պլյուս մի-
նուս 0—10: Ողը 28—30: Յերկու հարյուր հիսուն փամ-
փուշտ: Լից:

— Սա վորա՞նք ենք խփելու, — մրթմրթաց Կավամու-
րան՝ լճակը չրխկացնելով: — Ճանապարհին մարդ չկա:

— Լուեցեք: Ո՛ր, նայեցեք խնդրեմ: — Տանական հրճվան-
բից շնչասպառվեց: — Գործողություն:

Գործանիչները թեք ուղղվեցին դեպի վեր: Ռմբատարն
անցավ Իմպանի վրայով: Փանդանների խմբի մեջտեղը փայ-

լեց պատռոտված հրաբույն մի անձեռոցիկ: Կարծես ողից
ծնունդ առավ ձյունաբույն-գորշ ձի մի դանդախ՝ ծայրե-
րին յերկար դանդուր քուլաներով: Լեռնաշղթան ցնցվեց, և
բլուրների վրայով մի խուլ ծանր դղրդյուն գլորվեց:

— Յես դիտեմ, — հրճվանքով ծոր տվավ Տանական, —
դա Յան Հայցղինն և Իմպանում թաղնվում: Տեսեք:

Փանդաններից սև կերպարանքներ դուրս վազեցին և սա-
բալանջով նետվեցին դեպի վեր: Ծիթի յերկրորդ սյուն: Դղր-
դոց: Շարժիչների խուլ մետաղաձայն քրթմնջյուն: Ելի սյուն:
Իմպանից բոցի լեզուներ վեր նետվեցին: Փանդաններն այր-
վում եյին:

Կավամուրան դեպի ձախ նայեց և պարզորեն նկատեց
փոխդնդապետ Ֆուձինամիի վոչ բարձր չոր ստվերանկարը:
Նրան թվաց, թե տեսնում և նույնիսկ փոխդնդապետի ծխա-
դույն ակնոցը:

Ֆուձինամին քարացել եր մոնղոլական սլոշատ ձիու
վրա՝ կզակը ցցած և ուսերն այնպես բարձրացրած, վոր նրա
ձոձրակը և այտերը թաղնվել եյին մորթե ոձիքում: Նա կան-
գնել եր ասպանդակների վրա և աչքերով ուտում եր իմ-
պանը: Նրանից դեպի ձախ լեռնային կիրճը բոպե առ բոպե
վարդագունում եր, և մի ձյունապատ դադաթի վերև յերե-
վաց նույնիսկ փիրուզե յերկնքի մի կտոր:

— Նստեղ են վաղում, — ասաց Տանական: — Հեյ, նա-
յեցեք: Նրանք մոտենում են ճանապարհին:

Սեպյուն արմունկների վրա բարձրացավ և նայեց այն
թփին, վորի հետևում փոխտեղակալ Սողավան եր նստած
դիտողի հետ: Թուփն անշարժ եր: Ջյուսե փոշին նետվում
եր ճանապարհով:

Կավամուրան նշանոցի շրջանակի ծածկորդում¹ վազող
կերպարանքներ եր տեսնում: Այնտեղ կային մի քանի կա-
նայք, վորոնք ուսերին տնային իրեր եյին տանում:

¹ В створе прицельной рамки.

— Իմպանից փախչում են, — հետևից ասաց ուսանող Իսիկավան: — Գիտե՞ք, դրանք խուճխուճներ չեն: Դրանք սոսկ չինացիներ են:

— Ետը դրանց վաղ արթնացրին, — ուրախ ժպտաց Տանական, — անձ նրանք...

Թփի հետևից դուրս նայեց փոխտեղակալը և անփութորեն ձեռք թափ տվավ:

Սեոցյուն հեռադիտակը վերցրեց:

— Յե՛վ ես խուճանի վրա պիտի կրակենք, — վերավորված ասաց Կավամուրան, — սա վոչ թե...

Վաղո՞ղները մոտենում էին: Առաջինը կարծես նկատեց գնդացիները և ուղղակի վազեց դեպի դրանք: Նրա ցաքուցրիվ կերպարանքը Կավամուրայի առջև յերևաց նշանոցի շրջանակի պարզ յեռանկյունու մեջ: Նրա հետևից շարժվում էին ուրիշները՝ քսակներն ուսներին: Սոսկական զինվոր Կավամուրայի մատները վարիչույց լծակի՛ վրա ընկան: Սովորության համեմատ նա շնչառությունը զսպեց:

— Կրակ, — բռնաց Սեոցյուն:

Կավամուրայի մատները դրեթե մեքենայաբար սեղմեցին լծակը: «Գոչկիսը» ցնցվեց և փոշի բարձրացրեց:

Սև կերպարանքները վեր նետվեցին և զանազան կողմեր քշվեցին՝ կարծես քամու ուժգին թափից: Յերեքը գլորվեց դառիվայրի տակ, մեկը թպրտում էր ճանապարհին վայրենի վռնոցով, մի քանի հոգի անշարժ փովեցին գետին: Մեկը բեռան հետ կախ ընկավ մի թփից և բեռը ճոճվեց կես բոպեյի չափ նախ քան չոր կաղնիները ճոճոցով կտորտելով հովիտը գլորվեց:

— Կրակ:

Նշանառու Կավամուրայի մատները վոչ մի վայրկյան չեյին ուշանում: Փոխգնդապետ Ֆուձինամին հեռադիտակին կպավ: Գնդացիների վաշտը լավ էր աշխատում: Փոխգնդա-

¹ Спусковой рычаг.

պետի պանրի պես դեղին, անշարժ դեմքն ոձիքի մորթով շրջապատված դիտում էր: Իմպանի կողմից վոչ մի զարկ չեյին տվել:

— Պարոն փոխգնդապետ Ֆուձինամի, — ասաց գնդապետն առանց դուռը դարձնելու, — ձեր գործակալ Չժաոն սխալվել է կամ ստել: Այստեղ խուճխուճներ չկան: Դրանք դյուղացիներ են:

— Կրակ, — հրամայում էր Սեոցյուն, մտիկ տալով թփին:

Գնդացիներն արդեն յերրորդ պահունակը՝ դրին: Գընդակների կարկտից տակնուվրա յեղած ձյունն ամպի պես քշվում էր: Լեռան հետևում էլի միքանի գնդացիներ թրեկ-թրեկացին, և այնտեղից աղաղակներ լավեցին: Սև կետերը սարալանջով անկարգ նետվում էին: Իմպանն այրվում էր մոմի նման և ծղոտի տանիքներից ծուրը պոկվում էր բամբակի փափուկ քուլաների պես:

— Գնրան ես հովտում բրինձ ցանող չի լինելու, — հետևից ասաց մի ձայն, և Կավամուրան իսկույն հասկացավ, Վոր դա ուսանող Իսիկավայի ձայնն է:

— Կրակ:

Սոսկական զինվոր Կավամուրայի մատները դանդաղ սեղմեցին լծակը: Նա ընդամենը մի քառորդ բոպեյով ուշացավ: Կավամուրան միշտ ճշտապահ էր, և «կրակ» բառը միշտ նրա մեջ մի տեսակ մեքենայաբար կապվում էր մատների շարժման հետ, այդ կոշտացած, հանգուցավոր դեղին մատների, վորոնք մի տարվա ընթացքում սովորել էին «գոչկիսի» սև արծնած մետաղին: Վորովհետև Կավամուրան զինվորական ծառայության մեջ էր և ուզում էր լավ ծառայել:

Ավագի ֆանդայի առաջ չափածո վզովում էին բարակ հնդկեղեգնի փայտիկները:

¹ Обойма.

Փայտե կոճղի վրա մի մարդ էր պահպանում: Նա վզից կապված էր կոճղին: Նրա վրաների վրա նստած էր մի մարմնեղ թեկնանի¹:

Թուլ, կեղտոտ մեջքն ամեն մի հարվածից կծկվում էր: Նա չէր գոռում: Նա աշխատում էր ձեռներով վեր քաշել ցած իջած անդրավարտիքը:

Մի յենթասպա համրում էր.

— Տասնյոթ:

— Տասնութ:

— Տասնինն:

— Բո՛ւն:

— Հե՛տ անել:

Այդ մարդուն հետ արին: Չինացիների ամբողջ մոռյալած հոգոց հանեց:

Ավագ Տյան Շաո-չենը դեսուզեն ընկավ և վազեց հանելու մի ձող, վորի վրա գրված էր.

ԱՅՍ ՄԱՐԻՆ ՈՒԶՈՒՄ ԵՐ ՅԵԼՈՒԶԱԿՆԵՐԻ ՄՈՏ ՓԱՆԶԵԼ
Թեկնանին ավագին աքացեց:

Հանցադործը քսաներկու տարեկանի չափ գյուղացի մի տղա յեր: Նա առանց շտապելու կապում էր անդրավարտիքը՝ մարմինը քորելով և թափահարելով, կարծես վրան ջուր ելին ածել:

— Սոսկական զինվոր Մորիտա:

— Եստեղ եմ:

— Այս մարդուն տար այնտեղ, ուր քեզ հրամայված էր:

— Լու՛ւմ եմ:

Սոսկական զինվոր Մորիտան հրացանը պատրաստի բրուհեց: Տղան տրամագին մի վոտից մյուսի վրա յեր կանգնում:

— Գն՛ա, վո՛չիտ:

Տղան քայլեց՝ շուրջը նայելով: Ամբողջ թնդաց և մի-անդամից ձայնը կտրեց, վորովհետև մի սպա ինչ վոր գիրք

¹ Ефрейтор.

բացեց և սկսեց կարդալ յեռանդով և միալար: Մորիտան խոսքերը չլսեց. նա տղային սարն էր քշում:

Սոսկական զինվոր Մորիտան լուսարացին շտար էր կանչվել և հրաման ստացել թու՛ւն-թու՛ւզ-մարդուն հասցնելու պահակային ուղեփակը: Այդ հրամանի միտքը նա միայն աղոտ կերպով էր ըմբռնում:

— Պատերազմ է, մարդ է, — ասաց Մորիտան դերուն հրացանի կոթով հրելով, — դուք մեղավոր չեք, մենք էլ չենք մեղավոր: Ասենք՝ դա լավ չի, վոր դու ուղեցել ես թու՛ւն-թու՛ւզ դատնալ:

Մարդը յերեկ այդ կարծիքին չէր, վորովհետև նա հանցավորի պես ժպտաց:

— Խու՛ն-թու՛ւցդա, — ասաց նա ֆալցետով և փնչացրեց:

— Այո, այո, — ասաց Մորիտան, — բանն էլ հենց դա յե: Այ, հիմա յես քեզ տանում եմ ուղեփակը, իսկ դա շատ վատ է, յերբ մարդուս ուղեփակ են տանում:

— Ուղեփակ, — կրկնեց թու՛ւն-թու՛ւզ-մարդը և ժպտաց:

— Այո: Դու ախր չգիտես, թե դա ինչ բան է: Դա վատ է: Անու՛նդ ի՛նչ է:

Մարդը ժպտաց:

— Նույնպես վատ է: Ե՛րու — քեղ — անվանել — ի՛նչպես:

Մանջուրական բարբառի թու՛ւլ նմանողություն լսելով՝ մարդը ցնցվեց:

— Դե՛, — գոռաց Մորիտան, փակադակը չխկացնելով:

Տղան դողի պես աչքերն այս ու այն կողմը քցեց և գլուխը կախեց:

Լու՛ւ դնում եյին: Բլու՛ւրն անցան: Հե՛ովից մի թու՛ւլ, վե-հապանձ վորոտ լավեց:

— Հո՛ւ, — ասաց Մորիտան, — դա մեր վաշտն է գործի վրա:

Չինացիին կանգ առավ և զարմացած՝ յերկինք նայեց:

— Վո՛չ, հիմա՛ր, — արհամարհանքով շարունակեց Մորիտան, — վորոտ չկա: Թնդանոթ է: Ո՛ւումը:

Տղան մատը բարձրացրեց և շրթունքներով ինքնաթիռի բզրոց արտահայտեց:

— Հն-հն, — ասաց Մորիտան:

Չինացին՝ անհասկանալի յե թե ինչու՝ կրկին ժպտաց և լնդերքը բաց արավ:

— Ի՞նչ ե անունդ: — Դու — քեզ — անվանել...

— Լու Սյա:

— Ի՞նչ:

— Լու Սյա:

— Դա անկարելի յե արտասանել: Առնձ գնա: Դեհ:

Յերկրորդ ըլուրն անցան:

— Հիմարներ, — դատում էր Մորիտան, — եսպես ցուրտ տեղն ի՞նչպե՞ս եք ապրում: Յեթե յես չինացի լինեյի, ես տեղից կիտախչեյի: Բայց բարեբախտաբար յես ճապոնացի յեմ: Ընդհանրապես բրինձ քանդելուց զլուխներն ավելի չեն խելքանում: Հեյ, դո՛ւ, Ռո՛ւ Սյա, սպասիր:

Չինացին կանգ առավ: Մորիտան ծխամորձը հանեց և սկսեց ծխել: Նա այդ արավ վոչ թե նրա համար, վոր սիրտը ծխել էր ուղում, այլ վորովհետև նա հիշեց մայրենի Տոկիոյի Ֆուկադավա թաղը և հայրենիքի կարտից ուղում էր թքել: Չինացին տեղը ծույլ-ծույլ վտաններն էր դոփում:

— Ա՛յ, կյանք էր հն, — ասաց Մորիտան: — Յես՝ ճիշտ ե՛՛ մինչև գիշեր ցցված էյի լինում դորժարանում, բայց և չե՛ վոր գիշեր էլ կա: Յեվ ելի փոքր կրպակները, վորտեղ լանգուստա յեն ծախում: Յեվ ելի ուրիշ կրպակներ, վորտեղ գո յեն խաղում: Իսկ դո՛ւք: Դո՛ւք վոնց եք ապրում: Վոչինչ չունեք: Վոչ ձուկ, վոչ արև, վոչ փողոցներ, վոչ վոստիկանատներ: Ձեր կնանիքն էլ կնանիք չեն: Շարաթը մի անգամ են լվացվում: Դուք նույնպիսի բարբարոսներ եք, ինչ վոր սուսները: Հը՛, ի՞նչ ես ուղում: Ե՛, պատվելի՛, եդ մասին որենքում բան չի գրված:

Այն, ինչ վոր ուղում էր «խունթուղ-մարդը», չափազանց հատուկ էր մարդկային բնությանը, Մորիտան էլ իր տեսակետից իրավացի յեր: Չինացին մատնացույց էր անում իրան, թիերը և վողրադին մի բան էր խնդրում:

— Ա՛յ քեզ բան, — ասաց Մորիտան, — նա պնդում է: Յես քեզ ի՞նչ անեմ: Լավ կլինի սպասես մինչև ուղեփակ հասնելը: Հը՛: Միեռույնն է, դու յերկար չես տանջվելու:

Չինացին սպասել չէր ուղում: Նա խոսում էր ավելի և ավելի բարձր և լալադին, և նրա ձեռքի շարժումներն ավելի և ավելի վորոշակի էյին դառնում:

— Թո՛ւհ, դարշելի բան է, — ասաց Մորիտան: — Ձհան-նամը գնար որպպահն, ինձ ես չինացու հետ չուղարկեր: Կնց, բայց միայն «դուրս դնալու» համար: Հեյ, լսում ես:

Մորիտան թիի մյուս կողմն անցավ և հրացանն ուսն առավ:

— Յեթե փորձես փախչել, յես տեղնուտեղը քեզ շանսատակ կանեմ: Բայց ի՞նչ սարսափելի նախշ էլ են քեզ: Վնաս չունի: Դա քեզ խրատ:

Մորիտան մեջքը դարձրեց դեպի կալանավորը:

— Փորձիր մի շարժվել... Հե: Ե՞: Վերջացրիր:

Չինացին բերանը լայն բացած ժպտում էր՝ կուրման շակելով:

Կարելի յե կարծել, թե նա թիի հետեղ մի արտակարգ ախորժելի բան էր տեսել: Նրա տեսքը Մորիտային կատաղեցրեց:

— Ժպտում ե... Հայդե: Ծո՛ւտ: Ձե, չե: Մի վաղիր: Բայլու՛: Կնց: Կեղտոտ խո՛ղ:

Չինացին քայլվածքը դանդաղեցրեց: Նա գլուխը պտրտում էր ամեն կողմ և կարծես ողջ հոտոտում:

— Մի պտտվիր: Լսում ես: Հեյ, քեզ եմ ասում: Ռո՛ւ Սյու: Թո՛ւնդ գնա: Ա՛յ, եդպես: Ձե, հարկավոր չի վազել: Պեաք չի: Պեաք չի վազել: Կնց: Ա՛խ, դարշելի:

Մորիտան հրացանն ուսից ցած քաշեց: Տղան բոլոր ուժով շավղով վեր եր թռչում: Մորիտան վազեց նրա հետեից:

— Տխմար... Կանոնադրու թյան համաձայն... Յերեք քայլի վրա... Բանտ կնստեցնեն: Յես ինչպես թույլ տվի:

Ձինացին վտարերը քցում եր, կարծես սպորտային մըրցուժյան մեջ լիներ: Սոսկական զինվոր Մորիտան վատ լեռնական եր: Նա ծնվել և մեծացել եր Տոկիոյում, մաքսատան և Ռայդոկույի կամուրջի մեջտեղը, գործարանային շրջանում, վոր ափսեյի պես հարթ եր:

— Հեյ, քեղ հետ եմ: Ձե... Ծլկվում ե... Կանգնիր:

Մորիտան հրացանը նշան բռնեց և արձակեց: Տղան շարունակում եր փախչել: Մորիտան յերկու փամփուշտ ևս արձակեց: Տղան վազելով հասավ շավիղը թեքվելու տեղը և անհետացավ մի խոշոր ճալաքարի հետևում:

— Անասն... Միթե փախչելու յե... Բանտ... Ո՞ւր և նա... Ա՛խ, ահա նա: Հիմա վերջդ ե:

Շավիղը ցած եր իջնում և վերջանում յերեք հարյուր մետրի չափ բարձրությամբ խորխորատով: Շուրջը բացվում եր մի հիանալի լեռնային անֆիթատրոն՝ ասեղնատերև փարթամ թփերով ծածկված: Յածում անաղե ժաղավենի պես ձգված եր ստոած նեղ Մուզանցյանը:

Տղան վազում եր դեպի խորխորատը: Մորիտան կրկին անգամ նշան բռնեց:

Լու Սյան վազելով հասավ ազառածին և հետ նայեց: Այդ վայրկյանին Մորիտան կարողացավ դիտել ճակատին ուռած յերակներով, քրտնած, լայն դեմքը: Ամենից սարսափելին այն եր, վոր այդ դեմքը ժպտում եր: Նա շարունակում եր յերջանիկ ժպտալ հրացանի բերանի և ժայռի մեջտեղը:

Հետևյալ մոմենտին տղան ձեռները թափահարեց և գլորվեց կարծես նավախորշի ծակի մեջ: Մորիտան ընադդորեն

ձդանը¹ սեղմեց և իսկույն եթ զգաց, վոր վրիպել ե: Նա վաղեց ժայռի մոտ:

Ձինացին վոչ մի տեղ չեր յերևում: Հարթ թեք պատն իջնում եր դեպի գետը: Հեռվում որորվում եյին յեղևները: Վոչ «խուհիտուղ-մարդու» հետքը կար, վոչ նրա մարմնի:

Սակայն դիմացի զատիվայրի վրա Մորիտան մի շատ ավելի լուրջ բան տեսավ:

Չառիվայրով յերկար շղթաներով իջնում եյին ազվեսաժորթե մեծ գլխարկներով ձիավորներ: Սառած փեղույրներ: Կարճտնյա ձիեր: Փամփշտակալներ: Թեթևսուլոց, վոր խուհիտուղների մոտ հրամանի յեր փոխարինում: Ձիավորները ցած եյին իջել և ձիերի սանձերից բաշում եյին: Ձիերը պտտում եյին դուռնները և հետ ընկրկում՝ վախով և առաջին վտաններով մանր տրորելով թեք զատիվայրը: Սմբակների տակից անձայն ցած եյին քշվում հողի և քարերի յերկար հոսանքներ:

Այս անգամ փախուստի դիմեց ինքը սոսկական զինվոր Մորիտան:

— Քանի վոր դեռ չեն հասկացել... Ուրեմն ահա թե ինչն է յեր ժպտում եղ կեղտոտ շուներ... Նա թփի հետեից նրանց տեսած և յեղել... Գուցե նույնիսկ նշաններ ե արել... Կհասնեմ յես, թե՞ չե... Սատանան տանի, նրանք լեռնաշղթան անցել են ամենաանանցանելի տեղով... Ե՛հ, յես վատ վազող եմ: Մենք կորանք: Սատանան տանի: Սա՛ ինչ ե:

Այն դուռը, վոր Մորիտան կես ժամ առաջ եր թողել, բոցավառված եր: Ծխի մի յերկար շերտ եր վորորվում մանջուրական գորշ յերկնքում: Լեռան հետևից բարձրանում եր ծխի մի սյուն ևս, և այնտեղից դնդացիլների ընդհատ-ընդհատ թթիկթիկոց եր դալիս: Հեռվում ճանապարհի վրա յերեվում եր դյուզական սայլերի մի յերկար դնացք: Դանդաղ

¹ Спущ.

քարշ եյին գալիս յեղները: Կոացած, տեսային իրերով ծանրաբեռնված մարդիկ եյին դնում...

71-երորդ Խիմեձիականը բարեխղճորեն կատարում եր իր վրա դրված խնդիրը, վոր կայանում եր «բրիգադի թևի հակառակորդի հենման կետերի վոչնչացման» մեջ:

— Դիրքը փոխել:

— Չքել¹:

— Դիրքը փոխել:

Վեր ու վայր: Վայր ու վեր: Յենթասպա Սետցյուն հուզմունքից կասկարմիր կտրած՝ բուռնցքը ձյունին և դարկում:

— Դեռ սպասեցեք, դիժը կվերադառնանք... Քնած կրիաներ: Դու Կավամուրա: Ուսանող: Շնուտ:

Հեռաստանում մանր կտկտում և անկարգ հրացանաձողթյունը:

— Ի՞նչ կա, — քրթնջում և Կավամուրան՝ դնդացիրն ուսին՝ քարից քար ցատկելով:

— Ինչ կամ: Խուռնիսուղները հարձակվել են դումակի վրա, — պատասխանում և ուսանող Իսիկավան, — շատ հասարակ բան:

Ցածում, թիերի մեջ, լեռնային կաղնուտի մացառնեբում սողում են հետևակային ջոկերի հաղիվ նկատելի քանոնակառքերը:

— Տաս բողե ևս — և հետևակը կհասնի նրանց, — ասում և Տանական: — Ի՞նչ եք կարծում, պարոն ուսանող:

— Գուցե, — ասում և ուսանողը՝ վերցնելով փամփշտի դատարկ տուփը:

— Յես կուղենայի, վոր նրանք ընկնեյին խաչաձև կրակի տակ... Գլուխներդ ցած, խնդրում եմ ձեզ, խնդրեմ:

Խուռնիսուղները հրաձգում եյին ստեպ և անհմուտ: Գընդակները ձյունը փորում եյին բլուրների և կատարներին: Իխողներն առաջ եյին շարժվում դրեթե բացելիքաց:

¹ Оставить!

— Սա միայն պաշտպանակ¹ է: Յես կարծում եմ, վոր այսոր ամբողջ գործողությունը մեզ կբացատրեն: Ահա սա յի պատերազմը:

— Ե՛, — ասում և ուսանողը, — սա դեռ պատերազմ չի: Սա...

— Իսկ ի՞նչ և ձեր կարծիքով:

— Վոչնչացում և:

— Ե՛, — վերավորվեց Տանական, — խնդրում եմ ձեզ եղպես չխոսել: Նրանք ամեն մի քայլում մեր հետքը պահում են: Պարոն դնդապետն ասաց, վոր գործողություն...

— Իսկ դուք կարծում եք, թե տակախկայից նրանց խելքը բան և կտրում:

— Ընդհատել խոսակցությունները: Պատրաստվել:

— Դիրքը փոխել:

Նոր դիրքից վորպես առաջին համար բացվեց Մուգանցյայանի ամբողջ հովիտը: Ցածում ճանապարհով ցանցառ շղթայի պես դնում եյին զրահապատները: Խուռնիսուղները լուռ եյին:

— Ազնիվ խոսք, նրանք հեռանում են, պարոն ուսանող:

— Կուղեյի գիտենալ, թե նրանք ինչպես կդնան: Նրանց ճանապարհը դեպի գետը կտրել են: Դա միակ յեղքն և: Հիմա մենք նրանց կկոտորենք, ինչպես ցանկապատի միջի վորս: Զգվելի՛ յի:

— Ինձ համար զգվելի չի, — ասաց Կավամուրան, — նրանք ուզում եյին մեր դումակը խլել:

— Իսկ մենք խլեցինք նրանց բրինձը: Վժրն և լավ:

— Բրինձը: — Կավամուրան սեղմում և դնդացիրի բռնատեղերը: Նրա բրինձը վոչվոք չի խլել: Նա դրա համար կմարտնչի: Նա դեռ կսողա ձյունի վրայով: Նրա համար նույնն և — Չինաստան դնալ, Ամերիկա, թե թուրքերին:

¹ Прикрытие.

մտա... Միայն խենթն է կարող փորձել սոսկական զինվոր
Կալամուրայից խելլու նրա որսալահիլը և ուսազիրները:
Նա լայլ ծառայող է: Նա ճշտապահ է: Նա կամակատար է:
Նա հավատարիմ է: Նա զիտակից է: Ապա մի փորձեցեք
նրան կենդանի վերցնել: Յեթն դուք նրա հրացանը խլեք,
նա իր զեղին ատամները կխրի ձեր կոկորդը:

— Ուշադրություն:

— Ախ, տեսեք, խնդրեմ, նա նրանց դատվ:

Դա կործանիչ¹ էր: Նա ուղիղ գծով ցած էր ընկնում
դորշ ամպերից յեղենիների վրա — փոքրիկ, ճարպիկ, ուրախ,
մոլեգնորեն թեք վեր ցցած, — կողքին, ինչպես կռվող աքա-
զադ: Յե՛վ քիչ էր մնում, վոր ծառերի կատարներին կպչի,
յերբ վեր սլացավ և լրիվ շրջան դժեց: Քամին հետևակին
հասցրեց գնդացիության զարկերի ձայնը:

— Հիմա նրանք դուրս սլո՞նել չեն կարող: Ի՞նչ ճար-
պիկորեն և մտածված...

Դիմացի սարալանջը սեացավ: Չինական ձիավորներին
մի սյուն, վորն անտառով ծածկված հեռանում էր, զանա-
զան կողմեր ցրվեց: Միքանի ձիավորներ դուրս յեկան ուղ-
ղակի ճանապարհը՝ դուր աշխատելով հետ դարձնել խենթա-
ցած ձիերին:

Յեֆշեյտուր Սեոյյուն աչքերով ուտում էր հարևան
թուփը՝ աղդանշանի սպասելով: Վերջապես:

— Կրակ: Ընդհատել կրակը: Կրակ:

Նորից նշանոցի շրջանակի ծածկորդում պարտոց ցիրու-
ցան կերպարանքներ: Նորից «գոչկիսի» վորոշ հատիկը²
սահուն կերպով գնում է ձախից աջ և ընդհակառակն՝ 45
աստիճանի գեղեցիկազեղ դժելով: Կարճացրած փողովն առաջ

¹ Կործանիչ — ինքնաթիռի մի տեսակն է, վորը ծառայում է հետե-
վակի, այրուձիու և գումակի վրա ողից հարձակվելու և ողային ճա-
կատամարտի համար:

² Мухка.

դողում է: «Դոչկիսը» ճրճտում է, նա կարում է կարի մե-
քենայի պես, նա սողցում է և ճոճվում է յեռոտանու վրա:

— Յես ղեռ եղպիսի հիմարներ չեմ տեսել, — փընթ-
փընթում է Կալամուրան՝ լծակը սեղմելով, — նրանք մինչև
անդամ վազել չեն կարողանում:

— Դա վերջն է, — ասում է ուսանողը, — զրահապատ-
ները կընկնեն մնացածի հետևից: Թ՛նհ:

— Ընդհատել կրակը:

— Նայեցեք խնդրեմ:

Դրո՛հիչը¹ ձեռնածուլթյուն էր անում: Նա նորից էր
շեշտակի ներքև գլսելում:

— Տեսա՞ր: Աղնիվ թոսք, նա ուղղակի նրանց գլխներին
է նիղակում²: Տասնհինգ մետրից ավելի չի:

— Յես զիտեմ, թե դա ով է, — հանկարծ հիշեց Կալա-
մուրան: — Սա կարող է միայն մի մարդ լինել...

— Ո՞վ:

— Տակայանա՞ղին: Նշանավոր Տակայանա՞ղին:

— Տեսա՞ք: Նա խիստ կպատժվի: Նա թփերի վրա յե
նիղակում:

Տակայանա՞ղի: «Թոչոլ կրակը»: Հենց այն Տակայանա-
ղին, վոր դորախողերում նիղակել էր դիվիդիական հանձ-
նախմբի վրա՝ ստիպելով նրան դետնին փովել, վորի համար
վեց որ տնային բանդարկության յենթարկվեց և հանդի-
մանություն ստացավ «ողային խուլիգանության» համար:
Տակայանա՞ղին: Չորս օեկորդային մրցանակի տերը: Ճա-
պոնական ողի պարժանքը:

— Պարոն ուսանող: Տեսե՞ք: Նա ավելի ցած դնաց: Մտիկ
արեք, նա, նա...

¹ Штурмовик.

² Նիղակել — ինքնաթիռի այն դրությունն է, յերբ հանկարծակի իջ-
նելով՝ նա գնում է յերկրից քիչ վեր և գնդակահարում հակառակորդին,
և ապա թափով վեր է բարձրանում:

— Վայր ընկալ:

— Վոչ: Մենք չենք տեսնում: Նա սարի հետեն է:

— Վոչ, ընկալ:

Սեպտյուբի զսպված հայհոյանքը: Անկասկած գրոհչի կողքը կամ մի ուրիշ տեղը ծակել են: Կպցրել են պոչին: Վտարն:

— Հիմա, յեթե զրահապատները նրան ազատեն...

— Ի՞նչ եք ասում: Դա սարի հետեն է...

— Նշանոցը տեղափոխել: Տարածությունը յերկու հազար հինգ հարյուր: Յերկու զրո դեպի ձախ: Կրակ: Ջքել...

— Եղպես, եղպես: Ջրահապատները շարժվեցին: Վոչ, դա անհուսալի գործ է: Նա անտառումն է: Ընկել է ամենախիտ տեղը:

— Խոսակցությունները չքել:

Լավեց շեփորի յերկար, տխուր հնչյունը: Հետևակը ծավալվում էր:

— Տեսնեմ վճրակեղ ես ճարում: Վտաքով այրուծիու հետեկց: Մարդը կորավ: Անիծված բանդիտներ:

— Սա ինչ են շեփորում: Սա ավարտ է:

— Պարոն փոխգնդապետ: Թ՛ոչլ տվեք զեկուցել նամակ կա:

— Ո՞վ է բերել, — հարցրեց Ֆուձինամին՝ շոշափելով հաստ, վարդազույն ծրարը, վոր ծածկված էր չինական գեղեցիկ հյուսաղբերով:

— Սոսկական զինվոր Մորիտան: Գնդացիրային վաշտի առաջին դասակից: Առավոտվանից պահակումն էր:

— Սոսկական զինվոր Մորիտա, մտո յեկ: Դու վճրակեղ վերցրիր այս նամակը:

— Չինացին բերավ:

— Ի՞նչ չինացի:

— Նա, վոր շտաբում գիշերեց: Ներողություն եմ խնդրում:

— Գիշերեց: Դա ինչ նորություններ են: Ավելի մոտեցիր: Դու վճրակեղ դտար:

— Նամակը, թե՞ չինացուն:

— Իհարկե՞ նամակը: Տխմար:

— Կանգնած եյի պահակում հյուսիսային ցանկապատի մոտ, դոնն: Եղ չինացին մոտեցավ, նամակը ցույց տվեց ու դոտաց. «Անձամբ պարոն փոխգնդապետին», ներումն եմ խնդրում...

— Ե՛: Ավելի մոտեցիր:

— Յես հրացանը պատրաստի վերցրի, բայց նա նամակը գետնին դրեց ու փախավ...

— Ուրիշ վոչինչ:

— Ուրիշ վոչինչ, ներումն եմ խնդրում:

— Վերադարձին վեց որ բանտ: Կարող ես դնալ:

Ֆուձինամին առանց շտապելու բացեց ծրարը և ակնոցն ուղղեց:

«Անհանդատության համար հազար ներողություն: Ամենաձիշտ տեղեկանքներ ստացա: Բանից յերևում է, վոր գենեբրալ Յան Հայցղինը վոչ այլ վոք է, յեթե վոչ յես ինքս, ձեր չնչին դործակալ Չժաոն: Աղաչում են ներել ինձ վատ ձեռաղբիս համար: Յերեք անգամ յերեսս փռում եմ պարոն փոխգնդապետի առաջ: Հազար ներողություններ»:

ՍԱՄՈՒՐԱՅԱՆ ՎԱՇՏԸ

Ճապոնական զինվորական շեփորն ամեն տեղ միատեսակ թախձալի յե: Ահա հնչեց նա ամբողջ ձերմակ հրակնատները¹ վրայով, ամբողջ, ուր գնդի շտաբն էր տեղավորված, հեռաղբալարերի վրայով, զինվորական միալար փնչա-

¹ Հրակնատ — бойница.

ցող բաղնիքի և արույրա պատհեղակները վրայով և մարեց լոտոսներով ծածկված խաղաղ լճի վրա:

Ոտարեկրացիներին միշտ ապշեցնում է ճապոնական բանակները վրա առավոտից մինչև յերեկո հնչող այդ մեկամաղձոտ մեղեդին:

Գարունն ամեն տեղ միատեսակ է: Նա գծերը լվանալով վոչնչացնում է և բծերից իր նոր աշխարհն է կառուցում: Գորշ բծի պես է յերևում զորանոցի կզմիտրե ցած տանիքը: Նրա շուրջը բալենիների կանաչ ծուխն է Նույնիսկ հեռադրալարերը ճապարկում և դառնում են ալեծածան բծեր:

Զորանոցներն ել են հաճախ իրար նման: Տախտակե հատակներ: Լիզոլի հոտ: Պղնձե պտուկների անվերջ շարքերով լվացարանների տողաններ: Յուզաների: Բուրգերում հրացանների սև ցանկապատ: Յերկաթե բարկացած լապտերներ առաստաղից կախ: Անդորր:

Ճապոնական զորանոցների առանձնահատկությունն է հանդիսանում թերևս փայտե արկղների ահագին քանակությունը, վորոնք կախված են զորանոցի մահճակալների գլխիցներին՝ ինչպես վագոնում՝ գլխավերևում: Դրանց մեջ են դրվում նամակներ, կոճակներ, լուսանկարներ, ածելիներ, գավաթներ, ժամացույցներ, ասեղնակար թաշկինակներ, «Տոկիո-Ասախի»-յի պատկերադարձ հավելված նկարներ, յերևվելի ըմբիշների պատկերներ, բուրգայական բուրվառներ և անփոփոխ Սեսայու Սայակավան, վոր ժպտում է «Մրախաղության ուսուցչից» և «Միրահարվածների ինքնասպանությունից» վերցրած կադրերում:

Սա հայրենիքն է: Յեվրոպայում նա գտնվում է մահճակալների տակ, չի յերևում, ցածուֆն է: Դա կարելի չէ նկատել միայն դադարի ժամանակ խուփերի թրթևոցից և թեքած գլուխներից, վորոնք հիանում են խուփի ներսի կողմը կպցրված լուսանկարներով: Ճապոնիայում դա վերեն և, աչքի առաջ, կարգի համար:

Սաղաղություն է: Զինվորական քաղաքն է՝ հեռու նավահանգստից, սուրղ փայտատարներից և պոստատարներից, շաշող ծորակներից և բարձող-կանանց թախծալի յերգեցողությունից: Զինվորական քաղաքն ընկզմված է բալենու պուրակներում իր ցած, կարմիր, ծոված ծածկերով: Հինգհարյուրամյա ամրոցի աշտարակն է բարձրացած՝ ծալքված սփոոցների պես իրար վրա քցված տանյակ տանիքներով:

Այստեղ ամեն մի տեղի հետ մի պատմություն է կապված: Բրոնզե ջրամբարի մոտ, վորից խաղաղություն մեջ դանդաղորեն ջուր է կաթկթում, մի իշխան սպանել է մի ուրիշ իշխանի: Իսկ լճի ափին, ուր լոտոսների խտություն մեջ սպիտակին է տալիս ստապատավոր մի կամրջիկ, սպանված իշխանի հավատարիմ վաստակները վրեժ են հանել մարդասպանից՝ նրան լիճը նետելով:

Քիչ հեռու, գանգաղիկներով դարգարված զրուցարանի մոտ իր փոքն է պատռել մարդասպանի վորդին:

Ավելի հեռուն, պուրակի մուտքի մոտ, հակառակորդի ինքնասպանությունը արատավորված գլխավոր վաստակի վորդին, սափրել է իր գլուխը և հրաժեշտ տվել բարեկամներին, վորպեսզի դնա ճգնավոր դառնա:

Ուր վոր լինի այդ լճակը, նա անփոփոխ կոչվում է «Հավատարիմ կնոջ կորստյան լիճ» կամ «Տասներեք ծառաների նվիրածություն լիճ», և նրա պատմությունը մութված է մերձակա զորանոցում տեղի ունեցող պարսպմունքների թեմայի ժողովածվի մեջ:

Գարուն է: Հեռճաշյա անդորր ժամ է: Սոսկական զինվորներ Կավամուրան և Իսիկավան դրադված են անդրավարտիքները կարկատելով: Տանական ձանձրալիորեն ծամում է ծնոտներով և պատուհանով մտախոհ նայում: Մորիտան ճանտներով և պատուհանով կարդում է կանոնադրությունը:

Անդորր է:

— Սա յերբ ե վերջանալու,— մտախոհ ասում ե Տանա-
կան՝ առանց լուսամուտից կտրվելու:

— Դեռ կսպասեք,— պատասխանում ե Մորիտան՝ աչ-
քերը դրքից բարձրացնելով:— Դուք ելի նշանածի համար
եք մտածում:

— Ելի,— հառաչում ե Տանական:— Նամակ չի գալիս:
Ծնողներին հարցնել չի լինում: Նա չի գրում: Կոչ վոք մի
բան չի գրում: Յես արձակուրդ կդնայի ենտեղ— դա ախր
եստեղից մի որվա ճանապարհ ե: Բայց արձակուրդ չեն տա-
լիս: Անիծված կյանք:

— Ինչո՞ւ մեզ դադտնի յեն պահում,— հարցնում ե Կա-
վամուրան:— Դուք ի՞նչ եք կարծում, պարոն ուսանող:

— Շատ պարզ ե... Ո՞ր, խողն ողտակար կենդանի յե:

Կավամուրան շուրջն ե նայում:

Այդ «բուրիչ սաղմոնը», յեֆրեյտոր Նոգուցին: Նա այդ
որն որապահ ե: Նա անցնում ե իր անխելի չափածո քայլ-
վածքով, ժպտում ուսանող Իսիկավայի յերեսին:

— Կարող եք խոսել, նա գնաց:

— Յես արդեն վաղուց ե, վոր տեղեկություն չեմ ստա-
ցել: Բայց կարծես թե այս շրջանում գյուղացիական խլըր-
տումներ կան, այնպես վոր մենք կգործենք:

— Յես մի տեսակ արամադրություն չունեմ մտադա-
ամսում կոյելու,— ասում ե Կավամուրան,— ե բացի դրա-
նից՝ դիվիդիայի հրամանատարը հանգիստ ե խոստացել: Մեզ-
նից ուղիղ քառասունինն հոգի յե առողջ մնացել:

— Դուք հավատացած եք... — սկսում ե ուսանողը, բայց
Կավամուրան նրան ընդհատում ե.

— Խնդրեմ, եղպես մի խոսեք: Դուք եղ դեռ նավում
եյիք ասում: Մեր վաշտը սամուրայյան վաշտն ե: Դա հայ-
տարարվել ե յերկու անգամ ե ավել, վոր իբրև վարձա-
տրություն մեզ ուղարկում են հանդատանալու, հայրենիք:
Խոստացել ե ինքը դիվիդիայի հրամանատարը:

— Այն ժամանակ ինչո՞ւ յեն մեզ դադել ե զինվորական
քաղաքի սահմանից դենը վոչ մի տեղ չեն թողնում: Դուք
այս մասին մտածել եք:

— Դա, յես յենթադրում եմ, նրա համար ե, վոր ոտար-
երկրացիները...

— Կոր ոտարերկրացիները չիմանան, թե ճապոնական
զորքերը հայրենիք են վերադառնում: Մի վախենաք, այդ
մասին ամեն տեղ կգոռային: Թեև ավելք խեղդեմ:

— Չե, սա ուրիշ բան ե,— ասում ե Մորիտան:— Պա-
րոն ուսանողն իրավացի յե: Եստեղ մի ծուռ բան կա:

— Շատ պարզ ե, Մորիտա: Այստեղ շատ ծուռ բան կա:
Ուստի ե ճակատից վերցրել են մեզ, վորպես հուսալի դո-
բամաս, քառասունինն փորձված մարդկանց:

— Մի՞թե դուք կարծում եք, վոր մեզ...

Տանական շուրջը նայեց:

— Այո: Հենց մեզ: Խուսվությունները դսպելու համար:

— Բայց դրա համար հո ժանդարմերիա կա: Բանակը
քաղաքականությամբ չի դրադվում:

— Դուք այդպե՞ս եք կարծում: Յես այլ կերպ եմ մտա-
ծում: Այս բոլորը մեզ նրա համար են ասում, վորպեսզի
մենք հավատացած լինենք, թե հայրենիքին ենք ծառայում:
Իսկ յեթե մեզ ճապոնացիները դեմ նետեն, դա յե՞լ կլինի
հայրենիքին ծառայել:

— Դա չի կարող լինել:

— Իզուր եք այդպես կարծում, պարոն Կավամուրա:
Ի դեպ, մախաթը վերցրեք: Բանն այն ե, թե ինչ ե հայրե-
նիքը...

— Հայրենիքը — դա, իհարկե, մեր գյուղն ե,— յերազ-
կոտ ասում ե Տանական՝ լուսամուտից չկտրվելով:

— Ե՛-ե՛ն,— բառաչում ե Մորիտան կանոնադրության
մեջ,— լավ տեղ ենք ընկել: Եսպիսի կյանքից կարելի յե
սատկել:

— Իսկ չինական դուրի ավերումը շատ ողուտ կրերի ձեր դյուզինն, Տանակա:

— Մեր... ավելի ճիշտը...

— Իսկ յեթե ձեր դյուզը գնդացիների հատիկի տակ լիներ, դուք ի՞նչ կանեյիք:

— Կվախենար իր ծնողների համար, — քրքջում է Մորիտան: — Նա ընտանիքատեր մարդ է... Բայց դուք, պարոն ուսանող, դուք եք եղպես ձենդ բարձրացնում:

— Ո՛ր, խողը մեծ ողուտ է բերում ընտանեկան տընտեսություն մեջ:

Նոգուցին անցնում է՝ քնքույշ ժպտալով:

— Յես, — հանկարծ ներս է ընկնում Տանական, — դրազեաներից կհարցնեյի. արդարացի՞ յե սա, և յեթե անարդարացի դուրս դար, յես կսկսեյի...

— Տեղդ, պարոն Տանակա: Կանգնիր:

Մորիտան կանոնադրությունը փակում է:

— Դուք ելի հարցնելու բան ունե՞ք:

Տանական հանցավորի պես դադաթը քորում է:

— Դուք յերբևիցե յեղե՞լ եք Տոկիոյում: Վոչ: Ուրեմն լսեցեք:

Մամուրայան վաշտի միջուկում չորս հողի կային, վորոնք կապված էին անհասկանալի կապերով: Յերկարավոտ Մորիտան, տոկիացի փողոցային մի տղա, «կոսով աքլորի» հեղինակություն և վայելում: «Դոչկիտների» լավ աշխատանքն էյապես կախված էր նրանից, թե Մորիտան ժամանակ ունեցնի՞ նշանաության միջոցին կծու նկատողություն անել, թե՞ չունեցավ: Արհեստը նրան կապում էր Կամուրայի հետ: Գնդացիների մոտ առաջին և յերկրորդ համարը մի մարմին են:

Մինչդեռ Կամուրայա Կիթատին վոչ մի առընչություն չունեք սրախոսություն հետ: Նա ամրակազմ էր, մկանոտ, կարճ և լրակյաց: Բայց այնպես էր դուրս դալիս, վոր Մորիտայի

մայրաքաղաքային շաղակրատանքը դուր էր կորչում, յեթե Կամուրայան չէր ժպտում: Նա ժպտում էր ծանր և վճռական, առանց իր ժպիտը հետ վերցնելու ամենափոքր ցանկություն: Նրա հետևից ուրախ տարածվում էր Տանականի ցցված լայն քիթը, Տանականի հետևից գլուխն էր ձուձում խաղաղ բրոնզադույն գեմքով հարավացի Իսուսայան, և վաշտի արամադրությունը վերականգնում էր: Մորիտան և Կամուրայան իրար հետ գրեթե չէին խոսում վորպես ամբողջ դպրոցական շրջանը մի նստարանի նստած դպրոցականներ: Նրանք առանձին «ձտի լեզու» ունեյին, վոր բաղկացած էր միայն միջարկություններից և հայացքներից:

— Բայց ի՞նչպես է լեզուդ բացվել, պարոն ուսանող, — հանկարծ ասաց Մորիտան: — Իսկ յես հիշում եմ՝ հիվանդանոցում, քարանտինում և առաջին սրերն եստեղ — ամենից մոայլ տիպն էյիք վաշտում: Աչքերդ ցած քցած, ձեռքերդ ազդրերիդ կպցրած: Շատ էլ նեղանում էյիք, վոր Սետցյուն անքաղաքավարի յե վարվում ձեզ հետ: Հիշում եք:

— Այո, յես շատ էլ յերջանիկ չեյի այդ դործից: Յես դեռ չգիտեյի, թե ի՞նչ «աքաղաղների» պիտի հանդիպեմ:

— Յեվ դեռ ձեզ էլ տվին յենթասպայի մոտ «նորակոչիկ»: Յես հիշում եմ, թե ի՞նչպես էյիք դուք բոլոր զորանոցները ման դալիս առաջին յերեկոն կապոցը ձեռքներիդ, վորից կախ էր ընկած յենթասպայի անդրավարտիքը: Դուք շոր չե՞ք լվացել:

— Լվացել եմ: Սետցյուն ձերմակեղենն ամեն ուր փոխում է, և յես խեղդվում էյի...

— Իսկ ի՞նչ վերցրին հանկարծ, հարսանիքիցս մի ուր առաջ, — հառաչում է Տանական:

— Դու հարսնացվիդ մասին ես մտածում: Մի տես: Դու նրա մոտ կվերադառնաս յերեք աստղով:

— Թողեք, Մորիտա:

— Անհանդիստ մի լինեք, պարսն ուսանող, նա չի վիճարկում: Բայց թե եստեղ ով ե իսկական կամավոր, դա, իհարկե, Կավամուրան է: Յուսյց տվեք ձեր թուղթը, Կավամուրա Կուն:

— Ե՛, ցույց տալու ի՞նչ կարիք կա, — փնթփնթում է Կավամուրան:

— Վոչ, անպայման ցույց տվեք: Նա ինձ հենց առաջին յերեկոն պատմեց ենպես ծոր տալով, վոր կարծես աղոթելիս լինեք, թե իրան անպետք հանեցին զորակոչական հանձնաժողովում: Հա, հա, մի ծիծաղեք: Պահանջվող ղինվորների թիվը լրացած եր յիզել: Իսկ ի՞նչ է անում հնարիչ Կավամուրան: Նա վորոշեց ամբողջ աշխարհը դարմացնել:

— Հերիք է, — մրթմրթում է Կավամուրան:

— Կացեք: Կավամուրա Կիթատին ռադմական մինիստրությանը խնդրեք է տալիս՝ լավ կարմիր արյունով դրված: Են ժամանակ խնդրեքը հետ են ուղարկում իրան՝ լրագրից կտրած մի կտորի հետ... Խնդրում եմ ձեզ, եզ կտրե՛վածքը ցույց տվեք:

— Դա կարևոր չի, — փնթփնթում է Կավամուրան:

— Յեթե դուք չեք ուղում, յես ինքս կհանեմ: Նա ձեր արկղումն է: Մտիկ արեք, պարսն ուսանող:

«Այս տարի բանակին ներկայացրած 950 խնդիր՝ արյունով է գրված: Ուսանողներն արյունով խնդիր են գրում իրանց պահապանի տեղ տալու մասին և այլն:

Այդ դրությունն անթույլատրելի յե: Ուստի վոստիկանության դեպարտամենտը և ռադմական մինիստրությունը տեղեկացնում են, վոր արյունով գրված խնդիրներին, մյուսներին հետ համեմատած, առանձին առավելություն չի տրվելու»:

— Կարող եք ստուգել: Սա «Ոսակա Ասախին»¹ է: Հնարիչ Կավամուրան անձնատուր չի լինում: Նրա հայրը, մի

¹ Ճապոնիայի խոշորագույն թերթերից մեկն է:

պատկառելի ծերուկ, վերցնում է մահակը և վոտքով ուղեվորվում նահանգական վարչություն: Յեվ յեթե նա ուսուճապոնական պատերազմից հաշմանդամ դարձած չլինեք, Կավամուրան եստեղ նստած չեք լինիլ: Հայրն իր ծառայության ցուցակը տվեց, և հոր հաշմանդամության պատճառով վորդուն զորքի մեջ ընդունեցին: Յես սա ինչի՞ համար եմ ասում, նրա համար, վոր, չնայած աղոթական ձայնին, Կավամուրան յերջանիկ եր և կերակրվելու մասին եր հարցնում:

— Իսկ դուք կարծում եք, թե մեր դյուղում շատ ենք բրինձ ուտում, — համբերությունից դուրս է գալիս Կավամուրան: — Վերջին յերկու տարին յես ամենեին բրինձ չեմ կերել: Մենք տոներին եյինք մուգի ուտում: Դուք ես բաներից վոչինչ չեք հասկանում:

— Յես հիանալի հասկանում եմ: Շատակերից աղատվել են: Դուք մի տեսնեյիք, թե սա վո՞նց եր խժու՞մ առաջին որերը:

— Իսկ դուք ինքնեք չեյի՞ք խժում:

— Յես — ուրիշ բան: Եստեղ ուրիշ բան կար:

— Ի՞նչ բան:

— Առանձին բան: Դուք յերեկ լսել եք Ուխարայի անունը: Դերմանացիների դեմ պատերազմելուց հետո նրան անվանեցին «Փչացած պահածոներ»: Բանակին նա դեղեցիկ տուփեր եր հայթհայթում մեջը թեցդետինի փոխարեն հոտած տառեխ ածած: Յես նրա մոտ եյի աշխատում պահածոյի գործարանում Ֆուկագայայում: Ենտեղ գործը ձերինից միքիչ ավելի բարդ եր. ինձ արձակեցին «գործարանի նեղվածքության պատճառով»: Դուք ի՞նչ եք ծիծաղում, միթե ես պիտի դեպքերի մասին չեք լսած: Գործարանատերն ինքը յեկավ մեր սոլիդ համքարությունը մի սպայի հետ և ասում է. «Յես ձեր բոլորիդ հերն եմ, դուք իմ յերեխաներս եք, իմ դրությունը հիմա վատ է, ենպիսի նեղվածք է, վոր չեմ կար

բող բոլորիդ կերակրել: Բայց այ Ֆուձիտան, Կիմոգավան, Մորիտան և ուրիշները, վորոնք՝ միևնույն ե՛ շուտով բանակ պիտի դնան»: Եստեղ նա մի տաս հանդուդն տղաների անուններ և տալիս: «Ուտաի, — ասում ե, — յես ուզում եմ, վոր դուք ինձ սգնեք, իսկ դու, Մորիտա, ես թուզի՞ն ստորագրել, դուք ել ես տարի բանակ կգնաք: Ենտեղ ձեզ կկերակրեն, իսկ յես մի քանի աշխատավորներից կազատվեմ»: Յես իսկույն հրաժարվեցի: Են ժամանակ սպան ինձ և մոտենում ու մնչում: «Տուգանքի վաշտը, պարոն Մորիտա, տուգանքի վաշտը»: Յեվ ինձ յերեկոյան դեմ արձակեցին հերիք չի, դեռ սպառնացին ել, վոր յես կայսերական բանակը վիրավորել եմ սպայի ներկայութեամբ:

Մեզնից յերեսուն հոգուց ավելի արձակեցին և դրասենյակը մենք պաշարեցինք: Բայց բանից դուրս յեկավ, վոր «Փչացած պահածոները» կուրորտ եր փախել և ենտեղ իրան սնանկ հայտարարել: Ել ինչ եյինք կարող անել: Գործարան յեկավ կառավարական վերստուգիչը, սկսեցին կոմունիստներին փնտրել, իսկ ինձ ուրիշ բան չեր մնում, յեթե վոչ փրկվել հենց բանակ մտնելով: Յես զիմեցի արհեստակցական միութեաններին, և գիտեք, նրանք ես բանն ինձ համար հաջողեցրին: Գիտե՞ք ինչպե՞ս: «Սողոմեյ»-ի՛ փոքրիկ վոսկե ակնոցով մի գորտ կա, նա ինձանից ստորագրութեան առավ, վոր յես պարտավորվում եմ «պատերազմը վերջանալուց իմ աշխատանքի մի յերրորդը արհմիութենական նպատակների տալ և բանակում պրոպագանդ չանել»: Իսկ նրանք զինվորական հանձնաժողովի մոտ ինձ համար յերաշխավորեցին: Եսպիսով ել յես եստեղ ընկա: Հիմի վոր տուն վերադառնամ առանց «Սողոմեյ»-ի աշխատանք չեմ ճարելու: Նրանք ինձ ստրկացրել են: Իսկ «Փչացած պահածոները» մինչև հիմի յել կուրորտում նստած ե: Ա՛յ, ձեզ շողգամն և

1 Դեզին արհմիութենական կազմակերպութեան:

հետաքրքրում, իսկ ինձ հետաքրքրում ե, թե եստեղ ինչ կարգ կա:

Մորիտան բաց և անում կանոնադրութեանը:

— Հայրենիք: Դատարկ բան: Զինացիները խող շատ ունեն: Ոգտակար կենդանի յե:

— Դուք իրավացի յեք: Ներեցեք: Ասեղը տվեք:

Խաղաղութեան և: Չորս գլուխներ կոացած են անդրավարտիքների վրա: Որապահ յեֆրեյտոր Նոգուցին անլսելիորեն անցնում և և մոմերը շակում: Նա նայում և պատահանից: Աշտարակները և հրակնատները լուծվում են, ինչպես խմորը վարդագույն շաքարաջրում, և յեֆրեյտորը ժըպւտում ե, վորովհետե յեֆրեյտորը գուցե անուշաբույր հոգի ունի:

ՅԵՖՐԵՅՏՈՐ ՆՈԳՈՒՑԻ ՈՐԱԳԻՐԸ

«Ոգտակար բան և զինվորների մեջ տեղավորել այնպիսի մեկին, վորի մտածելակերպը վրա կարելի յե հույս դնել: Նա չպետք և ամբաստանութեաններով զբաղվի, բայց պետք և համոզի և շողալրատների բերանը փակել»:

Մ ա ռ շ ա լ Յ ա մ ա գ ա տ ա

Ա. պրիլի 15: Սոսկական զինվոր պ. Տահական 1 ժամով բաց և թողնված զինվորական քաղաքի սահմաններում ծխախոտ ձեռք բերելու համար: Վերադարձավ ժամանակին: Յեֆրեյտորների պարտումները: Թեման. «Արշավային շարժումների ժամանակ հարկավոր և ուշադրութեան դարձնել, վոր պահեստից զինակոչված հասարակ զինվորներն իրանց վտանները չհարեն կաշվե վտանամաններով, վոր գյուղում հազնեկիս չեն յեղել»:

Ներքին կանոնադրութիւն: Թեման. «Բամբերը պետք է միշտ սպայի մոտ գտնվի, բայց այնպես, վոր նրա ուշադրութիւնը չհոգնեցնի»:

Լվացվելու յե տրված պարոն կրտսեր յենթասպայի 6 սաւանը, մութաքայի 2 ծածկույթը, 2 զուլդ վարաիքը, 1 մետաքսե թաշկինակը, 1 զուլդ գուլբան: Լվացքի որապահ են և կարգի սոսկական զինվորներ պ. Իսիկավան և պ. Կավամուրան:

Ապրիլի 16: Բաղնիք: Սոսկական զինվոր պ. Իսուսայան ականջները չի լվանում: Սոսկական զինվոր պ. Տանական բաղնիքից վերջինը դուրս յեկավ (2 բոպեյով):

Սոսկական զինվոր պ. Իսիկավան այսոր ծխելու ժամանակ սոսկական զինվոր պ. Մորիտային ասաց. «Այս բոլորի մեջ ամենալալն այն է, վոր սա ընդմիշտ չէ, այլ միայն 2 տարով»:

Սոսկական զինվոր պ. Մորիտան վոչինչ չպատասխանեց: Սոսկական զինվոր պ. Տանական խնդրեց բաց թողնել ծխախոտի գնալու, թեպետ և ամենքն ել ծխախոտ ունեն: Մերժվեց: Պարապմունքներ: Թեման. «Գնդացիները քանդելու կրկնութիւն»:

Պ. Տանական շատ վատ է: Ներքին կանոնադրութիւն: «Յերը սպան ձիով զրոսանք է կատարում, բամբերը պետք է վոտքով նրան հետեի՝ 1 կեն տարածութիւն պահպանելով»:

Յեֆրեյտորների պարապմունք: Թեման. «Պետք է ժրջանութիւնը կատարելագործել մտավոր ընդունակութիւնները: Այլև ուրիշ բարի անվանը չպետք է քսասել»:

Սոսկական զինվոր պ. Իսիկավան (ուսանող) ավարտից հետո յերկար փսփսում եր սոսկական զինվոր պ. Մորիտայի հետ: Վերջին ֆրագն եր. «...դա այն պատճառով է, վոր քաղաքում շատ սովյալներ են կուտակվել, վորոնք գլուզից են գալիս»:

Ապրիլի 17: Ամբողջ ջոկը պարոն կրտսեր յենթասպայի հետ զինվորական քաղաքի սահմաններում գտնվող թեյա-

տունը գնաց: Աղախններէից մեկը սոսկական զինվոր պ. Տանական մի տոմս տվեց:

Վնասակար մտքերի մասին հարցի վերաբերմամբ հրահանգներ ստանալու համար ինձ կանչեցին պ. փոխսպայի¹ և գնդի համհարզ պ. Ռտակուրայի մոտ:

Պարապմունքներ. գնդացիները քանդելը: Շատ վատ է պ. Տանական:

Յեֆրեյտորների պարապմունքներ: Թեման. «Քաջութիւնը — կյանքի գնով ծառայութեան շահը վաստակելն է»:

Ներքին կանոնադրութիւն: «Սպաններին յերկրպագութիւններ — 15 աստիճան: Նորին մեծութեան պատկերի առջև յերկրպագութիւններ — 45 աստիճան»:

(Նկար — յերկրպագող զինվոր: Կետադժով նշանակված է իրանի դրութիւնը):

Ապրիլի 15-ին բոլոր թված շորերը լվացել բերել են: Լավ են լվանում: Սովորել են:

Ապրիլի 18: Ո կանեսան աղախնից սոսկական զինվոր պ. Տանականի ստացած տոմսի բովանդակութիւնը.

«Գուռս կողպեքով փակել են: Գործարանի սահմաններից դենն ինձ բաց չեն թողնում, վորովհետև հիմա արձակուրդները վերացված են և բոլոր նամակները կառավարչի ձեռքով են անցնում: Այս նամակը յես ուղարկում եմ մի աղջկա միջոցով, վորը գալիս է ձեր գնդում ծառայելու: Յերը վոր քո ժամկետը վերջանա, աշխատիր»...

Սոսկական զինվոր պ. Տանական թղթի վերջը կտրել է ծխախոտ քաշելու համար:

Այսոր ճաշի ժամանակ պ. Իսիկավան (ուսանող) պ. Կավամուրային մեր գնդի գաղտնի դրութեան մասին մի բան ասաց:

Պ-ն Կավամուրան դրականորեն գլխով արավ:

¹ Подпрапорщик.

Պարապմունքներ. դնդացիրը քանդելը և սարքելը:
Սոսկական զինվոր պ. Տանական պատվեց անուշա-
գրության համար:

Յեֆրեյտորների պարապմունքներ: Թեման. «Վրան արևի
սկավառակ նկարված դրոշակը ճապոնիայի դրոշակն է: Միթե
լավ դրոշակ չի»:

Ռազմական կանոնադրություն: — «Հետևակը պետք է
առանձնապես լավ սովորած լինի դիշեր ժամանակվա ուղ-
մական գործողությունները»:

Ներքին կանոնադրություն: «Բամբերը պարտավոր և
սահմանված յերկրպագություններով վողջունել վոչ միայն
պ. պ. սպաներին, այլև պ. սպայի բնակարանը յեկող նրա
ծանոթներին»:

Ապրիլի 19: Սոսկական զինվոր պ. Տանական 1/2 ժա-
մով բաց և թողնված զինվորական քաղաքի սահմաններում
ձխախոտ դնելու համար: Վերադարձավ 2 ըսպե ուշացումով:

Այսոր մաքրման ժամանակ պ. Իսիկավան պ. Կավամու-
րային մեր դնդի վերաբերմամբ ինչ վոր բան ասաց: Պ. Կա-
վամուրան պատասխանեց. «Եղպես կերակրելու համար յես
պատրաստ եմ»...

Պարապմունքներ. դնդացիրը քանդելը:

Ապրիլի 20: Նախաճաշից հետո սոսկական զինվոր
պ. Տանական պ. Իսիկավային մի տոմս տվավ, վորը նա նորից
եր ստացել ինչ վոր մի տեղից: Յերևի յերեկ, ձխախոտի
դնացած ժամանակ: Պ. Իսիկավան տոմսը թաղցրեց ներքին
ձախ գրպանում:

Պ. Իսիկավան ձխելու ժամանակ ասաց. «Մենք անա-
սունների հոտ ենք, և մեղ աղբ են հրամցնում»: Ավարտից
հետո պ. Իսիկավան ինչ վոր բան եր փսփսում պ. Կավա-
մուրայի հետ: Որապահի կանչին պ. Կավամուրան պատաս-
խանեց. «Մենք քնում ենք, պարոն որապահ»:

Պարապմունքներ. դնդացիրը քանդելը և սարքելը:

Յեֆրեյտորների պարապմունքներ. «Կայսրին հավատա-
րիմ լինելը միշտ ոգուտ է բերում պետութայնը»:

Ներքին կանոնադրություն: «Բամբերը պետք է իր միջոց-
ներից փոխհատուցի իր մեղքով կորած առարկայի արժեքը»:

Ապրիլի 21: Բազնիք: Պ-ն Տանական շարք մտնելիս
1 ըսպե ուշացավ:

Բազնիքում պ. պ. Տանական, Մորիտան և Իսիկավան
խոսում էյին զանազան բաների մասին, վորոնց թվում
տնեցիների մասին: Պ-ն Տանական ասաց, վոր նշանած ունի,
վորին ծնողները պայմանադրով տվել են քաղաքում մի գոր-
ծարան: Ապա պ. Իսիկավան սկսեց կիսաձայն ինչ վոր բան
պատմել: Պ. պ. Տանական և Մորիտան ուշի ուշով լսում
էյին, իսկ հետո պ. Մորիտան ասաց. «Դատողություններ
տալը մեր գործը չի: Խոզը չափազանց ոգտակար է տնտե-
սության մեջ»: Իսկ պ. Տանական անհանդիստ ձայնով հարց-
րեց. «Տոտորի պրեֆեկտուրայում», — և լռեց:

Բազնիքի ժամանակ խուզարկեցի սոսկական զինվոր
պ. Իսիկավայի կուռտիկը և մի տոմս արտադրեցի հետևյալ
բովանդակությամբ. «Մազմոնը լավ է դնում: Մենք բոլոր
ձկնորսներին նախադրուշացնում ենք, վոր վորսից չուշա-
նան: Մանավանդ լավ վորս ենք սպասում Տոտորի պրե-
ֆեկտուրայի ծովափում: (Գրված է կանացի ձեռագրով.
Ունայ—Գանա):

Հաղորդված է պ. որապահ դերասպային¹:

Յեֆրեյտորների պարապմունք: Թեման. «Մարդ թեկուզ
թշվառություններ ել կրելու լինի, պարտավոր է բանակի և
պետութայն ողտին դործը գլուխ բերել»: (Հավատարիմ
հպատակության պարտականություն):

Ռազմական կանոնադրություն: «Անհրաժեշտ է ապա-
հովել կրակելու կարելիությունը նույնիսկ այն դեպքում,
յեթե դնդացիրի մոտ քնա միայն մի հողի»:

¹ Зауряд-офицер.

Այլ բիլի 22: Զոկը պ. կրտսեր յենթասպայի հետ թե-
յատուեն եր գնում: Ուսանող Իսիկավան աննկատելիորեն
փսփսում եր Ո Կանե-սան աղախնի հետ՝ հաճախակի հիշելով
«Տոկիտ», «Ինտուե», «Եյենթասպա» և «միություն» բառերը:
Ապա մատիտով մի բան եր գրում թղթի մի թերթի վրա՝
ինձ վրա մտիկ տալով: Մանրամասնությունները չկարողացա
չոկել, վորովհետև տանտիկինն ամբողջ ժամանակ անտա-
նելի շաղակրատում եր: Հաղորդված ե պ. որապահ փոխ-
սպային:

Ճաշից հետո հրացանները սրբելու ժամանակ Իսիկավան
տոսկական զինվոր պ. Կավամուրային ինչ վոր բան եր ասում
գնդի գաղտնի գրության առթիվ: Վերջում նա ասաց. «...մեզ
բանացնում են շուն ձեծելու փայտի պես: Մի՞թե դու գաղա-
փար ունես այն մասին...»

Սոսկական զինվոր պ. Կավամուրան պատասխանեց.
«Ինչ վոր հրամայված ե — հրամայված ե: Եսպես կերակրելու
համար...»

Պարապմունքներ. անցածի կրկնություն: Կրկին շատ
վատ ե պ. Տանական: Յեֆրեյտորների պարապմունքներ:
«Ճապոնական յենթասպայի հոգու ուղմական դերը»: (Ի՞նչ
բան ե հոգին):

Քաղաքավարության մասին և բալենու ծագկին զին-
վորի նմանվելու մասին»:

Լրացումն: Պիշերը վաշտի պ. հրամանատարի պատվերով
կապիտան Սիմադան յեկավ պ. որապահ սպայի տրամադրու-
թյան տակ Ո Կանե-սան աղախնի բնակարանում խուզար-
կություն կատարելու համար: Շրթունքները սրբելու թղթի
մի շերտի վրա գրված մի տոմս գտնվեց, վոր այդ աղջիկը
թագցնում եր իր կոնատակին:

Այլ բիլի 28: Առավոտյան հաստոցավոր գնդացիներին
շարժվող հետևակ մասսայի վրա կրակելու նախապատրաս-

տական ուսմունք կա: Պ. Տանական հետ ե ֆուտ: Յերեկը
պահակային ծառայության պարապմունքներ են: «Պահակա-
պանի պարտականությունները պոստի վրա քաղաքացիական
զգեստ հագած գաղտնի զինված մարդկանց խմբի հարձակ-
ման դեպքում»:

Յեֆրեյտորների պարապմունքներ: «Գեղջիկական հավա-
տարմության և բարձրագույն հավատարմության տարբե-
րության մասին»:

Ռազմական կանոնադրություն: «Հրաձիգ վաշտի գրոհը
ծրտված հակառակորդի մեծ կուտակի վրա, վորը մոտեցել և
պաշտպանողական շերտի առջևի յեզրին»:

«Զինվորը պարտավոր ե գաղտնի պահել այն, ինչ վոր
պատահամար լսել ե պ. պ. սպաների խոսակցությունից, և
ընկերների հետ քաղաքական խոսակցություններ ունենա-
լուց խուսափի»:

Այլ բիլի 28: Պ. կրտսեր յենթասպայի հետ թեյատուն
այցելելը: Սոսկական զինվոր պ. Տանական ուսանող Իսիկա-
վային ասում եր. «Այստե՞ր յես խոսելու յեմ Ո Կանեյի հետ»:
Յերկուսն ել շատ զարմացան իմանալով, վոր աղախին
Ո Կանեն բացակայում ե:

Հրացանները սրբելու ժամանակ ուսանող Իսիկավան
ընկերներին մի բան եր կարգում: Ականջին հասան հետևյալ
խոսքերը. «Մեր թշնամին — ընդհանուր թշնամի յե... Մեր
ուղին — ընդհանուր ուղի ե... Ժողովուրդներին իրար դեմ
են գրգռում... հայրենիքի սիրտ պրոպագանդ... արկածախնդ-
րությունը Մանջուրիայում... և այլն: Հետո պ. Կավամու-
րան ասաց. «Փառավոր ե գրված, բայց ավելի լավ ե՝ պատ-
ոք», հետո նորից խոզի վերաբերմամբ մի բան ասվեց:

Յեֆրեյտորների պարապմունքներ: Թեման. «Այն ամ-
բողի պատմությունը, վորտեղ զետեղված ե գնդի շտաբը, և
իշխան Ողայի ձեռքով անհավատարիմ վաստակների ապս-
տամբության ճնշումը»: Պարապմունքներ վաշտում: «Ան-

կազմակերպ հակառակորդի ամբոխումների ցրումն ընդհատ
գնդացիրային կրակով»: «Գործնական հրաձգութունն դաշ-
տում»:

Ռազմական կանոնադրություն: (Պարապմունքներ չեղան):

Առողջապահական նպատակով արկղների ընդհանրական
դննություն: Ուսանող Իսիկավան իր արկղը բանալուց հրա-
ժարվեց: Պ. յենթասպան ականջին լուխեց: Բաց և թողնված
հիվանդանոց՝ վնասված ականջը բժշկելու համար: Վերադար-
ձավ ժամանակին: Արկղում վոչ մի հակառողջապահական
բան չգտնվեց: Զուգարանի հատակին մի թուղթ դատ կո-
մունիստ Սեն-կատայամայի պատկերով: Ըստ յերևույթին
այդ թուղթը մեկը քցել և արկղներն ստուգելու ժամանակ:

Ընդմիջումի ժամանակ իմ ներկայությունը ձեռքիս ստա-
կարան զինվոր Տանական նկատեց, թե պ. կրտսեր յենթա-
սպան անխոհուն կերպով և վարվել՝ սոսկական զինվոր
պ. Իսիկավային հարվածելով, և վոր ինքը — պ. Տանական —
համաձայն և ուսանողի փոխարեն կրել այդ հարվածը:

Ապրիլի 29: Պ. որանյահ գերասպան ինձ կանչեց հա-
տուկ հանձնարարությունների համար:

Ռազմական կանոնադրություն: «Հրաձիգ խմբերի գոր-
ծադրություն անկազմակերպ հակառակորդի դեմ կովելլա»:

Ներքին կանոնադրություն. «Պ. պ. սպաների և զինվոր-
ների հարաբերությունները նման են հոր և կրտսեր վորդի-
ների հարաբերություններին: Պ. պ. սպաների և յեֆրեյտոր-
ների հարաբերությունները նման են հոր և ավագ վորդու-
հարաբերություններին»:

Պ. փոխսպայի հանձնարարությունը կատարված և նույն
որը՝ պարապմունքների պատճառով զորանոցից սոսկական
զինվորների բացակայություն հետևանքով...

.....
(Մի նկար. բանակային հնգաթև աստղ և նրա տակն աչք):
.....

Պարապմունքներ են: Յենթասպա Սևոյցուն յեռանդով
քրտնելով մատով կարդում և «Նորակոչ զինվորների համար
մտքերի ժողովածուն»:

— «Տակեոն այդ դարնանը դննություն յենթարկվեց և
բարեբախտաբար բոլոր պահանջներին դոհացում տվավ: Հետո
նա վիճակ հանեց և հաջող անցավ: Տակեոն ուրախությամբ
լցված՝ զորանոց մտնելու որվան եր սպասում: (Տանակա:
Պետք և մտիկ տալ ինձ, վնչ թե պատահանով): Վերջապես
այդ որը յեկավ: Տակեոն տան հեռավոր մի սենյակում՝
ուղեորվելու պատրաստվելով՝ հարգանքով խոսակցում և
հոր հետ.

— Հնչյր, գիտակցելով, վոր զինվորական ծառայություն
եմ մտնում հողուտ պետություն, յես չեմ կարող ուրախու-
թյունս գալել: Այսուհետև, շարքերը մտնելով և ուսում ստա-
նալով, պատերազմի ժամանակ կյանքս չխնայելով, յես կաշ-
խատեմ և ցույց կտամ ճապոնական քաջի ամբողջ ույժը:

— Ահա: Լավ տրամադրություն և: Եղպես ել պիտի լինի:
(Գորելուն վերջ տալ: Տանակա և Իսուամայ): Կյանքդ չխնա-
յես: Տան գործերի համար մի մտածիր: Ապա նորին կայսե-
րական մեծությունից զինվորականներին ուղարկված բարձ-
րագույն հրովարտակը շարունակ պահպանիր: Եսպես պետք և
վարվել:

Թեյասենյակում մայրը գյուղի բնակիչներից ուրախու-
թյամբ շնորհավորանքներ եր ընդունում:

— Պարոններ, այս զարնանն իմ վորդին պ. Տակեոյի
հետ միասին դննություն և յենթարկվել, սակայն որդանիղմի
անպետքություն պատճառով դոհաց... դոհաց... (Տանակա, յես
արդեն մի անգամ ասել եմ): Գոհացում չի ավել պահանջնե-
րին: Մի անգամ, վոր ասացին, թե որդանիղմն անբավարար և,
եկ, իհարկե, բան չես կարող անել, բայց այնուամենայնիվ

մեղ համար վոչինչ չի կարող լինել... չի կարող լինել... (պարհն Իսիկավա: Սա ի՞նչ նշան է):

— Դա «Խի» յե — «վշտալի»: Վատ սիրտ:

— Կարող եք նստել... մեղ համար վոչինչ չի կարող լինել դրանից ավելի վշտալի:

Տակեոն դուրս յեկավ հոր հետ միասին: Գյուղի բնակիչները դիմում եյին նրան և իրանց մեծ շնորհավորանքներն արտահայտում: Իսկ Տակեոն ասաց. «Հայր, մայր, մնաք բարձր», և գնաց: Բնակիչները շարունակում եյին իրանց վողջույնները՝ գոչելով. «Տակեո, Կոն, բանդոյ»:

Նորին մեծության անունը լսելիս՝ պարոն յենթասպաները պետք է հանդիսավոր տեսք ընդունելով և ձայնի լուրջ տոն յուրացնելով միանգամայն բավարար չստիով արտահայտեն իրանց համակրությունը: Ը՛ր... Իսիկավա: Սա ի՞նչ նշան է:

— Դա «ցյուկայ» է — «ծանոթություն»:

— Հայ, ծանոթություն է... Կարող եք նստել: Սա ձեզ չի վերաբերում: Անցնում ենք հարցերին:

— «Յերը նորագենների հավաքման կարգով Տակեոն զննության յենթարկվեց, ի՞նչ հանգամանք առաջ յեկավ: Ապա, Իսուամայա: Ի՞նչ հանգամանք առաջ յեկավ: Չգիտես: Մորթտա: Ուղիղ է: Բոլոր պահանջները բախտավոր կերպով բավարարելու հանգամանք առաջացավ:

— Հետևյալ հարցը: «Այդ մասին իմանալով՝ պարոն Տակեոն պետությանն ի՞նչ ծառայություն ցանկացավ մատուցանել»: Կավամուրա: Ճիշտ է: Տակեոն կամեցավ պետությանը ծառայություն մատուցել՝ մտնելով բանակի շարքերը, վորպեսզի ցույց տա ճապոնացի քաջի ամբողջ հզորությունը:

— Հետևյալ հարցը: «Պարոն Տակեոն ի՞նչ զբաղմունքից յենելով կամեցավ ծառայություն մատուցանել»: Իսուամայա, Մորթտա: Վոչվոք չի հասկացել: Մինչդեռ պ. Տակեոյի զբաղմունքը լիովին հասկանալի յե: Դա հայրենիքի սիրո և նորին

մեծությանը նվիրված լինելու զբաղումն է: Դուք արդեն պատերազմում յեղել եք և նույնիսկ արժանացել եք սամուրայան վաշտի կոչումին: Մինչդեռ դուք նույնիսկ չգիտեք, թե ձեզ ինչ զբաղմունք է ղեկավարել: Դա վատ է: Ձեր մասին թերթերում գրել են: Ոտարերկրացիներ են յեկել ձեզ վրա նայելու: Քառասունինն հոգուց վոչ մեկը վոչինչ չի հասկանում: Ձեզ ի՞նչի համար են Մանջուրիա ուղարկել: Հայրենիքը պաշտպանելու համար: Ո՞վ է ցանկանում հարց տալ: Դո՞ւ: Հարցրո՞ւ: Մեզ ինչու եյին այստեղ դադտնի պահում: Քո գործը չի: Դա պ. պ. սպաների իմանալու բանն է: Քանի վոր պահում են, նշանակում է հարկավոր է պահել: Ելի՞ ով: Առաջարկիր: Հիմար հարց: Այն մարդիկը վորոնց դեմ դու Մանջուրիայում պատերազմում եյիր, սովորական գյուղացի մարդիկ չեն: Դրանք վտանգավոր բանդիտներ են, վորոնք ուզում են վոչնչացնել ճապոնական ժողովրդին և նրան սովի դուռը հասցնել: Ելի՞ ով: Հը՛: Ել վոչվոք: Անցնում ենք հետևյալ հարցին:

— «Պարոններ, այս պատմությունը լսելով, դուք ի՞նչ եք զգում»: Հը՛: Ո՞վ է ուզում ասել: Տանակա: Ասա: Կսենք, թե դու ի՞նչ ես զգում:

— «Պարոն կրտսեր յենթասպա: Թո՛ւյլ տվեք զնամ դուրաբան»:

— Տիմար: Նստիր: Ասենք՝ չե, զնա: Կզեկուցեմ: Արդ, պարոններ, ի՞նչ եք զգում, այս պատմությունը լսելով . . .

.

Ձորանոցը լաղաղ և դատարկ է: Որապահ յեֆրեյտոր Նոգուցին մահճակալների գլխին մեկի արկղն է քրքրում և քայլեր լսելով՝ կախարհն արագ փակում է:

— Ո՞վ է: Տանական: Դուք ինչո՞ւ յեք պարապմունքների ժամանակ զորանոցում ման գալիս:

— Ձեկի պարոն հրամանատարն է բաց թողել:

— Գնացեք: Եստեղ թրև գալու կարիք չկա:

Սոսկական զինվոր Տանական մտնում և դասարանական
աննյակը և Իսիկավայի տկանջին շշնջում:

— Անուշաբույր սագմոնը ձեր արկղի շուրջն և պտտվում:
Յես մտա, նա սաստիկ վախեցավ:

— Նա նորից և որապան:

— Նորից:

Իսիկավան ուսերը թոթվում և:

— Թող անի: Նա այնտեղ վոչինչ չի գտնի:

— Տանակա և Իսիկավա: Լոել: Դուք ի՞նչ եք մտածում՝
լսելով այս...

Շեփոր: «Ընդմիջում»: Վտաների թմբիթմիոց և ձայների
խուլ աղմուկ:

— Գուժարտանկ, զգաստ:

Նողուցիլի զիլ, առույգ ձայնը: Նա գեկուցում և:

— Ելի՛ ինչ կա: Ո՛հ, ամբողջ մի հանձնաժողով և:

— Յերեթի միջատների համար և...

— Վոչ: Գնդի համհարզն և: Մա...

— Ազատ:

— Մա ի՞նչ պիտի լինի: Նորից առողջապահութիւն:

— Մա...

— Յուրաքանչյուրն իր մահճակալի մոտ կանգնի:

— Այ քեզ բան: Մա վերմակի սարքի բարձրության
վերաբերյալ բան և:

— Յես ետոր չեմ չափել: Սուճուկին թոցրել և սանտի-
մետրային քանոնը:

— Պատժել՞ւ յեն:

— Արկղներին չկպչել:

— Վոչ, եստեղ վերմակը գործ չունի: Մա նորից առող-
ջապահութիւն և...

— Չգաստ:

— Ո՛հ: Սկսվում և:

— Սոսկական զինվոր Կավամուրա: Բացեք արկղը:

«Շենց եղ և վոր կա: Առողջապահութիւն և»:

— Փակեցեք: Սոսկական զինվոր Մորիտա: Արկղը բացեք:

— Փակեցեք: Սոսկական զինվոր Տանակա: Այդպես: Փա-
կեցեք:

— Սոսկական զինվոր Իսիկավա: Արկղը բացեք: Սոսկա-
կան զինվոր Իսիկավա: Սոսկական զինվոր Իսիկավա: Դուք
չեք լսում: Ի՞նչ և: Չեք բանալու: Դուք թւմ հետ եք խոսում:
Լուռ թյուն:

— Որապան:

— Այստեղ եմ, պարոն համհարզ:

— Բացեք, արկղը:

Հանձնաժողովը խմբիկաց ուսանող Իսիկավայի արկղի
շուրջը: Լուռ թյուն:

— Պարոն կապիտան: Գրի առեք: Սեն-Կատայամայի
գրվածքների գիրքը:

— Դա ի՞նչ և: Չգիտեմ: Տվեք ինձ, յեֆրեյտոր:

Լուռ թյուն: Թղթի շեկշեկոց:

Սոսկական զինվոր Կավամուրան նայում և լրագրի
թղթում գտնվող փոքրիկ կապոցին, վոր գնդի համհարզը
վստահ մատներով դանդաղ թերթում և: Նրա աչքին և ընկ-
նում մի ժպտուն ճապոնուհի:

Յուրաքանչյուր ճապոնացի պարտավոր և
լավ տեսողութիւն ունենալ՝
Գործածելով «Մենի-ՈՐԻՆ» աչքի կաթիլներ:
Յուրաքանչյուր ճապոնացի պարտավոր և
հերոս լինել:

— Նողկալի բովանդակութիւն ունեցող մի կապոց պը-
կլամացիաներ: Սոսկական զինվոր Իսիկավա: Վերտեղից եք
ստացել այս թուղթիկները:

— Իրանք յես առաջին անգամ եմ տեսնում, պարոն համհարզ:

— Առաջին անգամ: Որպա՞ն:

— Այստեղ եմ, պարոն համհարզ:

— Նույն վաշտի յերեք սոսկական զինվոր կանչեցեք:

— Պարոններ... Յես չեմ գրել դա այստեղ... Դա...

— Լո՛ւր, սոսկական զինվոր Իսիկավա:

Մի բոպե անց սոսկական զինվոր Իսիկավան քայլում ե յերկու զինվորների արանքում: Խուլ շառաչում են իրար կպած սվինները: Սոսկական զինվոր Իսիկավան գլուխը կախել է: Նա գետնին է նայում: Չորանոցը լուռ է:

— Հետևյալը: Սոսկական զինվոր Իսուճնյա: Արկղը բացեք:

Խոր լուսթյուն եր տիրում նաև ծխարանում զննությունից մի ժամ հետո: Վերջապես կավամուրան արտահայտվեց.

— Պարոն ուսանողը վատ գործ է կատարել: Յե՛վ դա շատ արորինակ է... Մենք բոլորս ճանաչում ենք պ. ուսանողին... Մենք ճակատամարտել ենք Մանջուրիայում... Յե՛վ նա... մենք...

— Այո, — ասաց Մորիտան՝ իր ականջը սուստիկ կատաղությամբ քաշելով, — ճակատամարտել ենք... Լավ բան չի... Այո: Տարորինակ է:

Այն ժամանակ խոսեց Տանական:

— Յես ետը տեսա, թե ինչպես անուշաբույր սաղմոնը... Իհարկե, գուցե յես ելի չեմ հասկացել...

— Ի՞նչ կա, — բարկացած հարցրեց Մորիտան:

— Եսոր պարապմունքի ժամանակ զորանոցով անցնելիս յես տեսա... Ո՛ր, խողն ողտակար կենդանի յես:

— Մի վախենաք: Նա ուրիշ կողմ է գնում: Անցավ: Ի՞նչ կա վոր:

— Անուշաբույր սաղմոն Նոգուցին քրքրում եր պարոն ուսանողի արկղը: Ինձ տեսնելուց նա հետ ցատկեց: Յես կիսադրագետ մարդ եմ: Դա չի կարող պատահել... Բայց...

— Չի կարող պատահել, — կրկին հարցրեց Մորիտան: — Իուք հավատացած եք: Իուք Տոկիո յեղևի եք: Վե՛չ: Ուրեմն լուցեք: Թուուցիկները գաղտնի դրել են նրա արկղը:

Ավարտից դեռ յերկու ժամ ել չեր անցել, վոր կավամուրան զարթնեց ուսին հասցրված խիստ հրոցից: Նրա աչքին թփեց լապտերի դեղին լույսը: Որպա՞նք կանգնած եր միջանցքում: Հարևան մահճակալի վրա քնաթաթաթ աչքերը ձգձգացնելով՝ Մորիտան վարտիքն եր հաղնում:

— Հաղնվել է հետևել սոսկական զինվոր Մորիտային, — ասաց որպա՞հը, — վերցնել հրացանները և փամփշտամանները: Գնդակավոր փամփուշտներ ունե՞ք:

— Ունենք, պարոն որպա՞հ:

— Չուշանալ:

Չորանոցի առջևի հրապարակիկը լուսնի լուսով բռնված եր: Չորանոցները քնած եյին:

— Ես ո՛ւր, — հարցրեց կավամուրան՝ գոտին ձգելով և քաղաքավարությամբ դենը հորանջելով:

— Գնդի շտաբը, — մոայլված ասաց Մորիտան: — Յես ի՞նչ գիտեմ, յես ձեզանից ավելի չգիտեմ: Գնդի շտաբը, վաշտի հրամանադարի կարգադրության տակ:

Գնդի շտաբի շենքում լույս եր վառվում: Վերջին շարթում դա ամեն գիշեր կրկնվում եր: Գիշերները քաղաքից այդտեղ ավտոմոբիլներ եյին գալիս, կանգնում մինչև լուսաբաց և առավոտյան մինչև քնից վեր կենալն անխելի կերպով հետ գնում:

Մորիտան դուրս յեկավ և յերկու բոպեից վերադարձավ:

— Հրամայված է սպասել:

— Ենտեղ ո՞վ կս:

— Ամբողջ մի նիստ է: Համհարզը: Փոխգնդապետը: Հայհոյեցի և հրամայեցին կորչել:

— Ինչի՞ պետք է վերադրել դա:

— Վատ յեղանակին, կարծում եմ: Ծխախոտ վերցրե՛ք եք:

— Իսկ գիշերը լավ ե, — ասաց Կավամուրան, — վոչ վոք քեզ չի շտապեցնում: Արդեն բանից դուրս ե գալիս, վոք ապրիլն ե: Արդեն բրինձը ծլել ե: Գյուղում ճոռաններով են ման գալիս:

— Յես թքել եմ ապրիլի վրա, — փնթփնթաց Մորիտան: — Յես կուզեյի գիշերները քնել: Մինչև քնից վեր կենալը ճինգ ժամ ե մնացել: Վաղը կամ ավելի ճիշտն՝ ետք քունդ տանելու յե... Ը՛ն՛ը՛, գալիս են:

Շենքից դուրս յեկան գնդի համհարդը թղթակալով ե կապիտան Սիմադան:

Խթանները զընդացին: Սպաները ձեռքները տարան զեպի գլխարկների շքոցիկները¹: Համհարդը գնաց:

— Այստեղ հվ ե, — հարցրեց Սիմադան: — Ինչո՞ւ յերկուսդ ել նույն դասակից եք: Ո՞վ ե ուղարկել: Որապահ՞նք: Յես տանն անգամ ասել եմ... Հետեխցա:

Յերկար ժամանակ դնում եյին: Անցան բաղնիքը ե ուսուճապոնական պատերազմի հերոսների գերեզմանատունը:

Անցան հրետանային գոմերի մոտով, ուր ձիերը քնից զարթնած՝ վոտները ծանր վերցնում դնում եյին տախտակներին: Անցան ավտովաշտի գարածների մոտով, ուր զեռ հայհոյելով լվանում եյին «Փորդերն» ու «կավասակիները» ջրհաններով լիալուսնի լույսով: Մտեցան զինվորական քաղաքի բոլորովին ծայրին:

— Հրաձգարանն ենք գնում, թնչ ե:

— Եղպես մի բան:

— Մտվերոտ կողմով գնալ: Արագ: Հետեխցա, հետեխցա: Կանգ առ: Այստեղ:

Մապատավոր սպիտակ կամուրջն ե քարե լապտերներով ե կրիաներով: Բալենիների խիտ սաղարթ: Այստեղ ինչ վոր

¹ Շքոցիկ — козырек.

մի իշխան վրեժ ե հանել մի ուրիշ իշխանից, թե՛ խեղդվել ե հավատարիմ կինը: Աջ կողմն զգացվում ե, վոք ավազան կա:

Մթուփյունից մի կերպարանք ե դուրս գալիս ե կապիտանին զեկուցում: Դա յենթասպա Սետցյուն ե:

— Պատրաստ ե:

— Այո, պարոն կապիտան:

— Յետ դարձ: Պառկիր: Լցրո՛ւ:

— Քանի՞ փամփուշտ, ներողությո՛ւն:

— Յենթասպա, յես պահանջել եյի ավելի լավ հրաձիգներ:

— Սրանք լավագուշտ հրաձիգներն են: Սոսկական զինվորներ Կավամուրան ե Մորիտան:

— Մի-մի փամփուշտ: Պետք ե հասկանալ: Նշանը — սյ, այն սպիտակ առարկան ե:

Աչքի առաջ ե արծաթե, լուսնե սփռոցով ծածկվա ծհրաձգարանը: Կապիտանի ձեռքը մատնանշում ե ցանկապատին կապած մի տձև սպիտակ նշան:

— Նշանոց չորս, — քթմնջում ե Մորիտան, — յես ճանաչում եմ եղ ցանկապատը: Նա՛ ինչ ե: Շարժվում ե:

— Այո: Նա շարժվում ե, համարձակվում եմ զեկուցել:

— Չեր գործը չե: Մի բոպե ժամանակ եմ տալիս: Յես համբելու յեմ: Մեկ: Յերկու: Յերեք: Կրակ:

Լուսթյուն: Անվստահ զարկ:

— Գարշելիներ: Խոջեր: Սա՛ հրաձգությո՛ւն ե: Կավամուրա: Քնած ես: Անպիտան:

— Չբացվեց, պարոն կապիտան: Փամփուշտը ծոեց:

— Ապու՛շ: Հրացանը տո՛ւր: Ա՛ղբ: Կորիր այստեղից: Տես թե ինչպես են կրակում:

(Նա վորոշակի շարժվում ե: Հրացանը՝ դուրս ե սողում Մորիտայի ձեռներից):

— Դուրս կորիր կրակի գծից, գարշահոտ անասուն:

Պարոնկ ապիտանն ինքն և պառկում: Սոսկական զին-
վորները բութ հայացքով նայում են կապիտանի փուլած
փայլուն սոնապաններին և լայն թիկունքին:

— Յենթասպա, հրաման տվեք:

Զարկ: Կրկին զարկ: Փակադակի չբխոց:

— Պահունակ:

— Զարկ: Ելի: Ելի:

(Նա արդեն չի շարժվում: Ճանապարհի վրա փոշու նեղ-
լիկ քուլա յե բարձրանում):

— Մարշ դեպի հետ: Լավագուցն հրաձիգներ: Հիմարներ:

Զինվորի քունն անհավասար և զգաստ և: Լուսնի սպի-
տակ շողը վերջապես հասավ գլխավերևները կախած վերնի-
ձած արկղներին, և դրանց հետ միասին փայլեց հայրենիքը:

Որապահն անցավ կլոր լապտերը ձեռքում՝ դեմքերին
մտիկ տալով: Յեվ այն ժամանակ սոսկական զինվոր Մորի-
տան աչքերը բացեց:

Գիշերը զինվորական որվա լավագուցն մասն և: Զորա-
նոցային մեքենան կանգ և առնում: Պղնձե շեփորը — վաշ-
տային ժամանակի զիրիժյորը — ընկած և որավորակի¹ և ժա-
մացույցի մեջտեղը: Նա փայլում և, և նրա հետ միասին
պսպղում են լուսնի տակ փայտե արկղները, վորոնց մեջ և
ածված փոքրիկ, տեղափոխվող, գրպանի բանակային հայրե-
նիքը: Սոսկական զինվոր Մորիտային վոչվոք չի կարող
արգելել բանալու աչքերը: Նա դառնում և և հանդիպում
սոսկական զինվոր Կավամուրայի լայն բացված աչքերին:

Նրանք յերկուսով սկզբում լուռ են:

— Դուք գիտե՞ք, — շշնջում և Մորիտան, — են նշանը...
դա պարոն ուսանողն էր:

Կավամուրան լուռ և, բայց յերևում և, վոր նա շատ
լավ գիտե:

— Եստեղ մի ինչ վոր սխալ բան կա, — շարունակում և
Մորիտան: — Մենք նրա հետ միասին կովել ենք Մանջու-
րիայում: Նա վաշտում միակն և, վոր ամբողջ տարին վոչ
մի նամակ չի ստացել... Յեվ, այ, հիմի... քառասունութ
հողի մնացինք:

Կավամուրան լուռ և:

— Յես ելի հասկանում եմ, յերբ մենք դուրս եյինք
յեկել չինացի բանդիտների դեմ... Հայրենիքի թշնամիներ
եյին... Բայց պարոն ուսանող Իսիկավան...

Կավամուրան լուռ և:

— Յես ուղղակի պետք և հայտնեմ իմ անմիտ կարծիքը,
վոր յերբ նա յերեկ ինձ ծխախոտ տվեց, յես չեյի կարող
կարծել, վոր յես անձամբ... Յես չեյի վերցնել...

— Դա պարոն կապիտանն էր կրակողը, — պատասխա-
նում և Կավամուրան:

— Ձեր փոխարեն էր նա կրակում, իսկ ինձ մոտ փուստ
չեր դուրս գալիս:

— Ինչ վոր հրամայված և, են ել... Յես ասում եմ...
այսինքն պարոն կրտսեր յենթասպան ասում և, թե զինվորը
պետք և կովի մտնի հայրենիքի թշնամիների դեմ սպայի
առաջին հրամանին: Հենց սա յե վոր կա զինվորական ծա-
ռայությունը:

— Կովի՞ մտնի: Ձեր ասելով՝ պարոն ուսանողը չինացի
բանդիտների հետ խոսք մեկ արած և յեղել:

— Վոչ: Յես ել ուղղակի կասեմ: Ձեմ կարծում:

— Դա առաջին ճապոնացին և, — ասում և Մորիտան, —
վորին յես գեղակահարեցի: Յես յերբեք նույնպես չեյի
կարծում, վոր ճապոնական Արիսակա հրացանը կարող և
ճապոնացու դեմ դառնալ: Պարոն Իսիկավան հայրենիքի
թշնամի յեր: Յեֆրեյտորի եղ դեպքից հետո... Դուք հաս-
կանում եք, թե՞ չե: Հը՞: Յեֆրեյտորը — գլխավորն և...

— Յես հասկանում եմ... Հայրենիքը — դա... դա...

¹ Дневальный

Անա նա պսպղում է, այդ հայրենիքը, վերնիճած արկղում, մարտիկների, զեյշանների և ականավոր Մեսոյու Հայա-կավայի այդ պատկերները: Դա հիրավի սքանչելի հայրենիք է — ձկնորսական վրաններից, Հոկկայդոյի ափերում փայտերի վրա կախտված չորացրած ձկներից մինչև փայտահատների և Կիուսիույի քափուրի պուրակների մեջ ծառի հյուսթ ժողովողների վրաններից, Ներքին ծովի հնդկեղեղների անտառներից մինչև Իոկոհամայի աստիճանավոր նրբանցքների զեղատնային կանաչ գնդակները, Նագոյի ծծմբային աղբյուրներից մինչև կինոների թղթե լապտերները և Ոսակիի կեղտոտ առուների վրայի գործարանային խուփ լուսամուտները: Գեղեցիկ հայրենիք հրարուխներով, բանաններով, արևով և բրնձի արտերով: Պարոն ուսանողը նրա թշնամին եր: Ավելի ձիշաք՝ նա նրա թշնամին դարձավ այն ժամանակվանից, յերբ սամուբայյան վաշտի աչքերի առաջ նրա վերնիճած արկղը խոթեցին մահաբեր թուռցիկների մի կապ: Յեֆրեյտոր Նոգուցին... Անուշաբույր սաղմոնը... հայրենասեր է...

— Մեծ դեպքեր են մոտենում, դուք լսե՛մ եք, պարոն Կավամուրա: Մեղ հեռ ի՞նչ են խոսում հողու մասին, յերբ մենք միևնույնն ենք, ինչ պնդացիք լծակը նշանաովի ձեռքերում...

Կավամուրան լուռ է:

— Իսկ դուք ի՞նչ կասե՞յիք, յեթե ձեզ հրամայված լինեք գնդակահարել սոսկական զինվոր Տանակային կամ... ասենք՝ պարոն յենթասոպային: Դուք կասե՞յիք — հայրենիք... քառասունութ հոգի...

— Ո՞վ էր խոսում առաջին դասակում, — գոռում է որսպահը:

Խաղաղություն է: Մահճակալների մեջ ճոճվում է պարեկի թղթե կտոր լապտերը: Որսպահը կողքին է դարձնում նրանց, վորոնք մեջքին կամ փորին են պռակած: Լուսնի

շողը դեպի աջ է շարժվել: Հայրենիքը խամրել է, և այժմ լուսինը լուսավորում է սոսկական զինվոր Կավամուրայի սափրած կտոր գլուխը: Նրա լայն բացված աչքերն ուղղված են դեպի սև յերկինքը:

ՌՅՈՒԳԱՍԱԿԻ

Բեռնատար ավտոները խուլ գոգոսով մաղցում էյին սարալանջերով: Հանգած լապտերների տակ յերևում է մեռյալ-սպիտակ ճանապարհը: Քամին գլխարկները պոկում եր: Բեռնատարներն ամբողջ ույժով աշխատում էյին: Նրանք ծանր ճոնչում էյին պտույտներում, մի ակնթարթ կանգ էյին առնում աղղանշանային վահանակների մոտ խաչուղիներում և նորից թռչում Տոյամա պրեֆեկտուրայի ճանապարհների սպիտակ գծով:

Պրեֆեկտուրան կտոր պար եր բռնել հեռադրասյուներով, հեռադրալարերի բարակ ցանցով, թթենիների պուրակներով, կտոր դարպասներ ունեցող ցածր սպիտակ տաճարներով և բրնձի արտերի թախծալի քառակուսիներով, վորոնցում ջուրը բարակ ալեկոծվում եր լուսնի լույսի տակ:

Կավամուրան և Մորիտան այս կողմ, այն կողմ էյին որորվում: Գիշերային այդ կատաղի վազքից սպիտակ, կարծես ապակյա, կաթնադույն ճանապարհներով ամայության և խաղաղության մեջ խելագարության տպավորություն եր ստացվում: Վաշտը լուռ եր, թռչում եր և վեր-վեր ցատկառու: Սոսկական զինվորները չէյին դարմանալ յեթե բեռնատարների շղթան հողից կտրվեք և թաթառի պես թռչեք ողի միջով, աղային սպիտակ գծով՝ պլակատներ կպցրած սյուների և վառ սյուների վրայով վոստներով:

— Պատերա՞զմ է:

— Յերկրաշարժ է:

— Սամուրայների շավիղն և: Սամուրայների շավիղը: Հիշում եք:

Սամուրայյան վաշտը գիշերը նորից արթնացրին: Այս անգամ ֆանֆարներն անեղ և խլացուցիչ ելին վորոտում:

Տաղնապ և: Սպանների ձեռքում վայրկենաչափներ կան: Բակում սուր ձչում են արեչափները: Բեռնատարների բոլորքով մըջուներն պես սողացող կերպարանքներ: Գնդացիներն ողում ձոճվում և գլուխների վրայով:

— Զգաստ: Յուրաքանչյուրն իր համարակալված տեղը: Կապիտանը կարճ և մութ եր խոսում:

— Հայրենիքի թշնամիներ: Վտանդավոր բանդիաներ: Հրամանատարության հրամանը սամուրայյան վաշտին: Դուք պետք և արդարացնեք ձեր կոչումը: Հառաջ, մարշ:

Զորայուների գլխին առաջ եր շարժվում հրամանատարի թեթև «Փորդը»: Նա շուտով անհետացավ փոշու արծաթադույն ամպի մեջ:

Բեռնատարների շղթան, վոր հեռվից լուցկու կատաղած տուփերի յեր նման, մի կիլոմետր ձգված եր:

Հրամայված և լուռ մնալ: Վոչ մի հնչյուն:

Խելագար վազքը շարունակվում և մինչև առավոտ: Միայն լուսաբացին սամուրայյան վաշտն իջեցնում են մի պուրակի ծայրում և դասակների բաժանում:

Ուղղակի խաչուղու վրա մարտկոցների վեց գնդացի դրեցին:

Դա այլ մոլորակ չեր, այլ հենց նույն յերկիրն եր, բայց տարրինակ:

Մորիտան մոայլված՝ քիթը դետուղեն եր տանում: Դրժբախտության հոտ եր փչում: Կարճոտնյա Կավամուրան պպղած, մտացիլը, փայտիկով կոշիկն եր մաքրում: Մորիտան ծխում եր: Լուռ ելին: Սպասում ելին:

Հեռվից մի տարրինակ աղմուկ եր գալիս — վոռնոցի և հեկեկանքի մեջտեղի պես: Աղմուկը հառաչանքների պես եր

դլորվելով հասնում քամու թափով: Յերբեմն կարճ, խուլ դարկ եր հնչում:

Լուսանում եր: Մորիտան անտարրեր ծխում եր: Փոխտեղակալ Սողավան՝ մեծ քայլերով շրջում եր ճանապարհով՝ ձեռները մեջքին դրած և գլխակոր:

— Ոյուգաստիկն և, — հանկարծ ապշած ասաց Տանա-կան՝ խորը մտիկ տալով հարևան բլուրներին:

— Դուք եստեղ յեղեղ եք, — հարցրեց Կավամուրան:

— Սա...

— Ընդհատել խոսակցութունները:

Սմբակներ թմիթմիացին: Անցավ ձիավոր վոստիկանու-թյան մի պարեկ:

— Հը, ինչ կա տղերք, — հարցրեց գնդացորդներից մեկը ճանապարհի յեղրին:

— Գործներդ այ թե ծանր և լինելու, — ասաց մի բարե-միտ վոստիկան՝ ամբողջ բերանով ժպտալով: — Նրանք յեր-կու հոգու քարկոծեցին: Յերկրորդ սրն և:

Առավոտվա վեցին հրաման տրվեց դիրքը փոխել:

Սարալանջից ամեն բան հանկարծ պարզվեց:

Ժողովրդի մի մեծ, առավոտյան մառախուղում մոխրա-դույն յերեացող ամբոխը կանգնած եր բրնձի դաշտում մինչև ծակները ջրի մեջ:

Վոստիկանների մի յերկար շղթա ձգված եր մարզերի վրա այդ ամբոխի շուրջը:

Ճանապարհին մոտոցիկլների մի ամբողջ կույտ կար: Այդտեղ դույզ-դույզ և յերեք-յերեք խորհրդակցում ելին հուզված խմբակներ:

Սմբոխը հառաչեց և միանգամից թնդաց: Գլուխներից վեր կարմիր յերկար լաթ յերեաց:

Նա ծալծվում եր և քամուց ծածանում:

Քամին մի հրաման բերեց: Վոստիկանները շղթան հետ եր քաշվում և շարք կանգնում: Մոտոցիկլներն աղմկեցին:

Մի ձեռովոր դուրս յեկավ մարզը և մտրակը շարժելով ինչ վոր բան գոռաց՝ ամբոխին դարձած:

Ամբոխը պատասխանեց միանգամից: Բամին դնդաց-
րորդներին հասցրեց կարճ. «Կորչի՛ր վոստիկանու թյունը» բա-
սերը: Կարմիր լաթը ցնցվում և փողփողում էր:

Մի ուրիշ վազեց դնդացրորդների մոտ: Կառքից դուրս
յեկավ կարճիկ հաստ մի մարդ անդլեարի, վանդակավոր
անդրբավարտիքով և դեղին կոշիկներով: Մանրիկ քայլե-
րով նա մոտեցավ կապիտանին և զինվորակապի պես ձեռ-
վեց:

— Յերկու որ և, պարոն կապիտան, յերկու որ:

Յերևում էր, վոր նա իսկապես քիչ էր քնել վերջին
որերը: Կլոր դեմքը սրվել էր: Փոքրիկ ընչացքները թրջվել
և կախվել էին վերին շրթունքի վրա ձիւրպի պես:

— Պարոն Մացուղան արտերի վրա կալանք և դրել դա-
տարանի փորոշման համաձայն: Սրանք ախր կապալառու-
ներ են: Արգարություն և հարկավոր:

Կապիտանը քաղաքավարի ժպտաց և ասաց.

— Միություն և:

— Միություն և: Կոմիտե յե: Մեր պրեֆեկտուրայում
յերբեք այսպիսի բան չի յեղել: Մենք հեռագրել ենք պա-
րոն նահանգապետին: Պարոն Մացուղան բոլորովին հի-
վանդ է: Նա պառկած է:

— Իսկ վոստիկանու թյունը:

— Վոստիկանու թյունը: Մենք զինվորական պարեկ ենք
հրավիրել: Վոստիկանու թյունը բավական չէ: Գուք գիտեք,
թե ինչ և յեղել նազանո պրեֆեկտուրայում: Մենք յեր-
կյուղ էյինք կրում, վոր ագարակը կարող են վաճնչացնել:
Նրանք դատական վերակացվին քարերով դուրս արին, և
անա յերկու որ և, վոր յես աչքս չեմ փակել: Գյուղացիական
կոմիտե: Հավատացնում եմ ձեզ, վոր մեր կողմերն այդպիսի
բան չի յեղել: Յես այլևս չեմ կարող:

— Յես կարծում եմ, վոր ձեզ հարկավոր է տուն գնալ, —
ասաց կապիտանը:

— Յես գնում եմ: Սա այնպիսի խայտառակություն է,
այնպիսի խայտառակություն է, պարոն Մացուղան բոլորո-
վին հիվանդ է: Այժմ, դուք գիտեք, մարդիկ վագրեր են
դարձել...

— Ամեն ինչ բարեհաջող կվերջանա, — հանդստացուցիչ
կերպով ասաց կապիտանը:

— Այո, յես շատ կցանկանայի: Համողեցեք նրանց:
Ապացուցեցեք նրանց: Նրանք պարտապաններ են: Պետք է
վոր արգարություն լինի:

— Լսում եմ, — ձանձրացած ձայնով ասաց կապիտանը՝
ձեռները հետևելով:

Կառավարիչը շտկվեց և դնաց դեպի շարարանը: Անյի-
ները թեկթեկացին:

— Կնիկ, — արհամարհանքով ասաց կապիտան Սիմա-
ղան՝ շարարանի հետևից նայելով: — Յերկու որ: Թուն:

Վոստիկանու թյունը մոտով անցավ: Ձիավորները թուան
անցան: Մի ժանդարմային կապիտան չոր-չոր, պղրուն, ակ-
նոցով մի ձերուկ — ձիուց կռանալով՝ կապիտանին ասաց.

— Աշխատեցեք հորդորանքով համոզել: Գուցե զինվո-
րական տարազը...

— Շատ լավ, — ասաց կապիտանն ևլ ավելի ձանձրա-
ցած թավով, — պարոն փոխտեղակալ: Կարելի յե սկսել:

— Պատրաստ:

Ամբոխը վոստիկանության նահանջը տեսնելով սկսեց
շարժվել: Պատռոտված ծածանվող խալաթը հազին մի կերպա-
րանք առաջ դուրս յեկավ և ձեռները թափահարելով ինչ վոր
բան գոռաց: Նրա հետևից դուրս յեկան մի քանի՝ մարդիկ և:

Գորշ դանդախածն առաջ շարժվեց: Նրանք բոլորովին մո-
տեցան ձանապարհին: Գալիս էյին լուռ, անձայն, միայն
յերկար կարմիր պլակատն էր ծածանում ձողի վրա:

Կապիտան Սիմադան հանկարծ վճռականապես առաջ քայլեց, դուրս յեկավ ճանապարհը և կանգնեց վտաները չռած և կարճ պարանոցը լարած: Նրա մատները հետևում արագ-արագ կարճ ութնյակ եյին խփում:

Ամբոխը մոտենում էր: Կապիտանը կանգնած էր:

— Ռյուգասակի, — ասաց Տանական ծոր տալով:

— Ծանոթ տեղ է, պարոն Տանակա:

— Սա իմ գյուղն է, — ելի դեռ ասլշած ասում էր Տանական:

Ամբոխն ավելի յեր մոտենում: Կապիտանը տեղից չէր շարժվում: Առաջին շարքերը տատանվեցին:

— Կանգնել, — գոչեց կապիտանը:

Առաջին շարքերը կանգ առան, դրանց հետևեցին և՛ վերջինները:

Կապիտանը մի քայլ առաջ անցավ:

— Ո՞վ է գլխավորը:

Լուսթյուն:

— Ո՞վ է գլխավորը, թող դուրս գա:

Վոչ վոք դուրս չեկավ:

— Ցրվել, — գոռաց կապիտանը՝ մի քայլ ևս առաջ գնալով:

Մարդիկ մի տեղ կիսվեցին:

Կարմիր լաթը փողփողաց և նրա հետ ողում ճախրեցին այս նշանները:

«ՄԻ՝ ՍԱՏԿՈՏԵՔ ԱՂԲԻ ՃԻՃՈՒՆԵՐԻ ՊԵՍ,

ՊԱՅՔԱՐԵՑԵՔ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ»:

— Չեք ցանկանում ցրվել:

Լուսթյուն:

Խաղաղության մեջ գնդացիների մոտ միայն Տանակայի շշուռջն է, վոք անընդհատ կրկնում է.

— Արդարություն... արդարություն... Իմ գյուղն է...

Մորիտան շուրջը նայեց: Տանական գունատ էր: Վիզը ծուռ: Նա շշուռում էր և ամբողջ մարմնով որորվում:

— Ցրվել չեք կամենում: Չեք հնազանդվում իշխանություններին: Համրում եմ մինչև յերեք. մեկ:

Մորիտան կնձովեց և թքեց: Կավամուրան բոունցքը գետնին դեմ տված՝ դիտում էր կապիտանի փայլուն պաճիճները:

— Ա՛ղբ, — ասաց Մորիտան:

— Պարոն Տանակա, եդ ի՞նչ եք անում: Պարոն փոխտեղակալը կտեսնի...

— Տանակա, հրացանը դե՛ն դիր: Վորտեղ ես նշան բըռնում:

— Համրում եմ, յերկու:

Լսվեց պայթյուն: Կապիտան Սիմադան մի քայլ հետ գնաց, յերեսը դեպի գնդացիները դարձրեց և հանկարծ առանց բուռնցքները բանալու՝ ծանր գետնի կործանվեց:

Հեռախոսը յերկար, կարծես շնչասպառվելով զանգահարում էր: Նա արթնացրեց շտաբի որապահին և պահանջեց գնդի որապահին: Նա գնդի որապահին ուղարկեց համհարդի յետևից: Նա համհարդին ել ուղարկեց փոխգնդապետի յետևից և դեռ ելի շարունակում էր շնչասպառվել պատին, կարմիր գծերով դժագրված կապույտ քարտեզների արանքում: Շտաբում լեթաններ զընդացին, թղթի միջնորմեր շրխկացին: Պատուհանի մոտ մի ձիավոր հիվանդանոցի տեղն էր հարցնում:

Համհարդ Ոտակուրան Ֆուձինամիյին բերավ: Փոխգնդապետը միջնորմը փակեց: Համհարդը տեղը ստոած կանգնեց: Միջնորմի հետևում խոսակցությունն արտասովոր էր հնչում:

— Փոխգնդապետ Ֆուձինամի: Լուում եմ: Լուում եմ: Ինչպե՛ս: Ա՛խ, Ռյուգասակին է... Իհարկե: Ի՞նչ:

Լուսթյուն:

- Կոր դասակարգում:
- Աղբանոցներ:
- Տանակահան: Չեմ ճանաչում:
- Կապիտան Սիմոնյան:
- Վոչ: Չգիտեմ:
- Ինչո՞ւ:
- Բանակային տեսակի գնդակ: Կրկնեցեր:
- Կգամ հիվանդանոց:
- Լսում եմ: Կգամ:

Սոսակցությունն ընդհատվեց: Հեռախոսի լծակը չըլծկաց: Ոտակուրան ելի, կանգնեց հինգ ըսպելից վոչ պակաս: Յերը նա սենյակը մտավ, փոխգնդապետը կանգնած եր հենց հեռախոսի մոտ՝ ձեռներն աղղրելին ձգած, ինչպես զորատեսին:

- Դասակցություն Սիմոնյանի վաշտում, — ասաց նա: Ոտակուրայի սապատավոր քիթը վեր ցցվեց:
- Ո՞վ ե:
- Ինչ վոր սոսկական ղինվոր Տանակա:
- Արշավանքի ժամանակ:
- Յեա դասնալիս: Պարոն կապիտանը վերավորված ե:
- Ապտամբվել են:
- Վոչ: Մեջքից, բանակային տեսակի գնդակով:

Փուձինամին հանկարծ կրունկների վրա դարձավ և բաց բուռնցքն ուժգին հարեց կապույտ քարտեղին, կարծես ուզում եր պատը խրել այն: Մյուս ձեռքով նա ակնոցը պոկեց աչքերից:

Պարոն փոխգնդապետը գեղեցիկ, ջահել, ակնոցից ուռած, նեղ-նեղ աչքեր ուներ:

Ապարդյուն բան կլինեք համհարզ Ոտակուրայի դեմքի վրա արտահայտությունն վորոնեք: Նա հպարտանում եր նրանով, վոր դեմքի արտահայտությունն ամենեին չունեք: Նա հավատացնում եր, վոր յերկար վարժություններով ե հասել դրան:

Յեվ, իրոք, այդ յերկար, գունատ դեմքը, վոր կարծես լեռթված եր քառակուսի ուսերի մեջ, նման եր գիմակի: Դիվիդիայի զորատեսին Ոտակուրայի անտարբեր գունատ դեմքը նկատել եր ղիվիդիայի հրամանատարը և, կարելի չե ասել, վոր դա գնդի պատմությունն մեջ եր անցել, չնայած վոր համհարզի մասին թաղուն ասում ելին, թե նա, «հրեյական քիթ» ունի, և դա վատ վկայություն եր:

Համհարզը հենց վոր ճանապարհի պտույտին դաշտային հեռադիտակով մի ձիավոր տեսավ, դուրս վազեց բակը: Յեվ դուրս վազելուց իսկույն ուշքի յեկավ, վոր իր դեմքին մի անարժան ժպտի պես բան պետք ե յերևալին լինի:

— Դնդապետ ե, քաղաքից...

Ճանապարհի պտույտում մի յերկաեղանի «բենց» յերեկաց: Նա փոշու ամպ բարձրացրեց և սլացավ ձիավորների մոտով ատանց ընթացքը դանդաղեցնելու:

— Սա ո՞վ ե դալիս: Ուրեմն դա գնդապետը չի: Դնդապետն ավտոյում: Ասենք՝ ավելի լավ: Չե, դա գնդապետը չի: Դժբախտարար: Սա... ի՞նչ բան ե: Ս-սա...

— Վողջույն պարոն համհարզ, — ասաց վաղուց չլուված մի ձայն:

Մի ավաղակային, թուխ դեմք եր ժպտում հրաշալի ատամնաշարքով: Չայնը գրեթե քաղցր եր հնչում:

— Ի՞նչպես թե, — ասաց Ոտակուրան: — Դձուք: Այստեղ: Յեկել եր:

— Յես ղիվիդիայի շտաբից դուրս պրծա, — պատասխանեց թուխ մարդը, — և յեկա, վոր տղերանցը տեսնեմ: Չեղ

մոտ ի՞նչ կա, ի՞նչ չկա: Ո՞ւր և Սողազան, Սիմադան: Փոխ-
գնդապետը: Դուք քիչ եք փոխվել:

Ոտակուրան ուշքի յեկավ, վոր իր դեմքը նորից արտա-
հայտութեան պես բան պետք և ստացած լինի: Այդ որն անա-
ջողակ որ եր: Այո, նրա դեմքին պարզիպարզո դարմանքի,
սոսկուծի և գայրույթի մեջտեղը դտնվող մի բան եր յերե-
վում:

— Դո՞ւք, — ասաց նա: — Այստե՞ղ: Պարոն Տակայանադի:
Սավառնորդը ծիծաղեց:

— Չե, դուք ամենևին չեք փոխվել: Գեներալները հանձ-
նածողովն ինձ արգարացրեց: Լիակատար ամբխտիա: Դուք
լսել եք, վոր կողքս գնդակով ծակել եյին: Խուճախուղներն
անմիջապես վրաս եյին թափվել: Ամեն ինչ բարեհաջող կլի-
նեք, յեթե չշտապեյին ինձ գերի վերցնել, ձեռքս ել մի քիչ
փչացրին: Յես փախա: Ի՞նչ լավ ե, վոր նորից ձապոնիա
յեմ: Ձեզ ի՞նչ պատահեց, Ոտակուրա՞սան:

— Յեզ դուք գնդի ժողովարանն եք դալիս այսպիսի
մոմենտում, — ասաց Ոտակուրան՝ վերջապես զգալով, վոր իր
դեմքը դունատ քարի յե փոխարկվել:

— Յես ուզում եյի ընկերներս տեսնել: Սպայական մի
փոքր տոն ե:

— Ի՞զուր, — չորութեամբ արտասանեց Ոտակուրան՝ մի
քայլ յետ գնալով և կուրծքը ցցելով, — այսինքն յես չեմ
կարող ձեզ հաղորդել... ավելի ճիշտը՝ դիմել ձեզ հասարակու-
թեան անունից, այսինքն սպաների հասարակութեան կող-
մից, ինչպես կարող եյի ասել, այսինքն... Բայց իմ անձնա-
վորութեանից, ավելի ճիշտը՝ իմ անձնական անունից յես
չեմ կարող թույլ տալ, այսինքն ձեզ հետ հարաբերութեան
մեջ մտնել: Ահա թե յես ի՞նչ եյի ուզում ասել:

— Յես բան չեմ հասկանում, — ուրախուրախ ասաց
Տակայանադին: — Իսկ ճշմարիտ ե արդյոք, Ոտակուրա՞սան,
վոր գնդապետի այստեղ դալուն են սպասում, հո՞:

— Յես կուղեյի պարզարանել իմ ֆրագը, — դանդաղ
խոսում եր Ոտակուրան, — վորը կայանում ե նրանում, վոր
յես անձամբ չեմ կարող հարաբերութեան մեջ մտնել: Կա մո-
րալ, պարտականութուն, դժգոհունք... յես ասում եմ, յես
կասեյի, մասամբ իմ կողմից, վոչ թե պարոն սպաները կող-
մից:

— Վորքան վոր յես ձեզ հասկացա, Ոտակուրա, դուք
ինձ հետ գործ ունենալ չե՞ք ուզում, — հարցրեց սավառ-
նորդը:

— Յես... նաև պարոն սպաները... ասենք՝ յես անձնա-
պես... զոյութուն ունի մի կանոն, վորով, յեթե թույլ
կարվի այսպես արտահայտվել, ձապոնական սպան, այսինքն
կայսերական բանակի սպան, այսպես ասած, ավելի ճիշտը,
յես կասեյի, գերի չի դնում:

— Ա՛խ, ահա թե ի՞նչ, — ասաց Տակայանադին: — Դե՞ն
քցեցեք այդ ձևականութուններին, Ոտակուրա: Դուք ինձ
դեռ տասներկու ինն եք պարտ, վոր յես Դայրենում ձեզ-
նից տարա...

Ոտակուրան սկսեց քայլել, ինչպես զորատեսին: Պատ-
նեչին մի ձիավոր մոտեցավ: Ժամապահը հրացանով պատիվ
տվավ, թեև դա քաղաքացիական մարդ եր: Յեզ Տակայա-
նադին ծանոթ ծիծաղ լսեց:

— Հա՛լլո, Ոտակուրա, ձեր ձեռքը: Դուք, իհարկե, հե-
ռադիտակով հետևում եյիք, — ուրախուրախ ասաց թղթա-
կիցը՝ ձիուց ցատկելով: — Ո՛ր, սո՞ ինչ ե: Սա հո պարոն Տա-
կայանադին ե: Թոչող կրճիկը:

— Այո, — չարութեամբ ասաց Ոտակուրան, — սա պա-
րոն Տակայանադին ե: Դուք ուզում եք տոն մտնել:

— Հա՛լլո, Տակայանադի: Ուրախ եմ ձեզ տեսնելու համար:
— Դուք, կարծեմ, առաջինն եք, վոր ինձ տեսնելու հա-
մար ուրախանում եք, — դանդաղ մոտենալով՝ ասաց Տակա-
յանադին: — Վողջ՞ւլն, Մակ կեննա:

— Յես չեյի լսել, վոր դուք վերադարձել եք: Ի՞նչ է յեղել: Գնանք, պարտնենք:

Սպայական մի փոքր տոնակատարութիւնն և ճամբարներ դուրս գալու առիթով: Սպայական ակումբում մտուքավոր գեներալ Նոգիի պատկերի տակ վերջին անդամն էյին սենյակը դարգարում յեղենու թարմ ճուղերը:

Գավառական փոքրիկ ակումբը սրտառուչորեն մաքուր և աղքատիկ էր: Բեռտոնէ հատակի վրա ավազը խրչում էր: Սեղանի վրա դրված էյին գլուղական ծաղիկներ, և բալենիները խիտ սաղարթը պատուհաններով ներս էր խուժում: Սպայական այդ ժողովի անդամները դռան մոտ շատ էյին կանգնել և անձոռնի կերպով մի վոտքից մյուսի վրա փոփոխվելով պատասխանում էյին Մակ Կեննիի ձեռքի ամուր սեղմումներին:

Նրա կողքին յերևում էր Ոտակուրայի դժգոյն դեմքը: Համհարզը չափազանց ծանր էր և պաղարյուն:

— Տակայանագին այստեղ ե:

— Մ-սա... Մ'յ թե ի՞նչ:

— Տակայանագին բակումն է:

— Ո՛: Յերևացել է:

— Տակայանագին յեկել է:

— Խայտառակութիւնն:

Այդ խոսքն ակումբում շրթունքից շրթունք անցավ: Դեմքերը մոայլվում էյին: Նույնիսկ կարծես թե գեներալ Նոգիի պատկերն էլ մոայլվեց:

Ներս մտավ գնդապետը: Խաղաղվեց: Սպաները վեր կացան և լարի պես ձգվեցին: Հենց շեմքի մոտ յերևաց լայն ուսերի վրա սավառնորդի ավազակային թուխ դեմքը:

Սավառնորդը դռան մոտ կանգ առավ: Նա հայացքը տարածեց ժողովի վրա և ժպտալը դադարեցրեց:

Ծանոթ, պարզասիրտ, այրված դեմքերի մի ամբողջ գալիւրէրէա յե: Փոխտեղակալ Սոգավայից իր ծանր ակնոցներով

հանդերձ մինչև մեծ ընչացքներով մայր Կոտոյին մոայլ վճռականութուն էյին արտահայտում: Զեռքերն ազդրներով ձգված էյին: Աչքերն անշարժ էյին նայում, ուղիղ, դեպի առաջ:

Սավառնորդն իր առաջ նորից տեսավ Ոտակուրայի դժգոյն դիմակը: Նա նայում էր աննկատելիորեն մտած գնդապետին:

— Պարոն գնդապետ: Համարձակվում եմ դիմել...

— Խոսեցեք:

— Պարոն Տակայանագի, այսպես ասած, ներկայութիւնն այստեղ...

— Բավականն է: Պարոն Տակայանագի, խնդրեմ հետևիցս գալ:

Տակայանագին անցավ սպաների անշարժ շարքերի մոտով և մեջքին հառած հայացքներ չգալով՝ գնդապետի հետևից դուրս յեկավ մի նեղ գալիւրէա:

— Պարոն սպաներ,— ասաց մի ձայն նրա թիկունքից,— չմոռանաք սպայական կորստեցիայի վորոշումները:

— Խնդրում եմ նստել, բարբ յեղեք,— ասաց գնդապետը:— Յերևի դուք գլխի յեք ընկնում բանը:

— Պարոն գնդապետ, յես այստեղ էյի գալիս...

— Խնդրեմ նստել: Ահա սիգարետներ: Իհարկէ, ճապոնական սպային ճանաչելով՝ դուք կարող էյիք հասկանալ, վոր ձեր Խիմեձի գալը վատ կազդի ձեր նախկին բարեկամների վրա:

— Իմ գործը քննվել է...

— Գիտեմ: Մի ավելի բարձր բան կա, քան որենքը: Ճապոնական սպայի սամուրայան եթիկան նրան արդեւ լում է իր մոտ ընդունել մի մարդու, վորն ոտարեկրացիների մոտ գերութեան մեջ է յեղել: Յեւ սա չէ՞ վոր ձեզ համար նոր բան չէ:

— Յես կարծում էյի, թե դա զպրոցական քրեստոմատիաների համար է:

— Վոչ, դուք սխալվել եք: Այժմ ուղղակի վողու, ազգային ուղղակի վողու վերածնությունն որեր են, վորին մեզ ընտելացրել են մանկությունից: Միթե դուք սրախաղությունն չեք սովորել: Դուք հերոսների պատկերներ չեք ունեցել:

— Պարոն գնդապետ, յես սովորել եմ ամերիկական կուլտուրում մինչև ողապետություն դարձող մտնելս:

— Վաս ե: Մենք բոլորս դա ունեցել ենք: Դրանք լավ հիշողություններ են: Յես անկեղծորեն խղճում եմ ձեզ, պարոն Տակայանազի: Յես միշտ ձեր բարեկամն եմ յեղել, բայց այժմ սպայական կորպորացիան վորոշել է ձեզ չընդունել: Դուք պետք է բանակը թողնեք:

— Յես: Բանակը թողնեմ: Ի՞նչ եք ասում, պարոն գնդապետ, իմ պրոֆեսիան սովառնորդությունն է...

— Բայց կորպորացիան...

— Թո՛ւյլ տվեք հարցնել, դա ի՞նչ կորպորացիա յես, պարոն գնդապետ:

— «Արևմուտքի սպաների կորպորացիան»¹: Գնդում նրանք են տերը: Այստեղ վիճելու հարկ չկա:

— Ախ, այդպես...

Գնդապետը նայեց սավառնորդին: Տակայանազին նշատել էր իր լայն ուսերը բարձրացրած և մտիկ էր տալիս կողքից: Նրա աչքերը կկոցած էյին, կարծես նշան էր դնում:

— Ինձ համար դժվար է ստիպվել այսպիսի խոսքեր ասելու ձեզ, — ասաց գնդապետը, — բայց այդպես են հանդամանքները: Յես ստիպված եմ խնդրել ձեզ հեռանալ այստեղից: Ձեզ բոյկոտ է հայտարարված...

— Ախ հա...

Տակայանազին ամբողջ մարմնով որորվեց:

¹ Զինվորական-Փաշխտական մի կազմակերպություն է, վոր ընդգրկում է ճապոնական սպայության մի մասը:

— ... Յեկ խորհուրդ տալ ձեզ այլևս չերևալ սպայական ժողովարանում: Պարոն համարդ Ռտակուրան կորպորացիայի ղեկավարներից մեկն է... Նա ազնվական մի հին տոհմից է...

— Ախ հա, Ռտակուրան, իմ բարեկամ Ռտակուրան... Պարոն գնդապետ, մի հարցի ազնվորեն պատասխանեցեք:

— Յես ձեզ լսում եմ:

— Միթե դուք լուրջ կերպով հավատում եք այդ խաղալիքներին:

— Այդ խաղալիքները վտանգի հանդեպ մարդկանց միացնում են:

— Բայց դուք... Վոչ, չեմ կարող հավատալ: Ռտակուրան միշտ մի բան չի յեղել: Բայց դուք...

— Պարոն Տակայանազի, այժմ ել դո՛ւք թույլ տվեք ինձ մի հարց առաջարկել ձեզ. միթե դուք ճապոնիա վերադառնալիս չեյիք կարող հասկանալ, վոր յերկու յեղք ունեք դուք — բանակից հեռանալ կամ փորդ պատել:

— Փորս պատել: Դուք կատակ եք անում:

— Խայտառակություն, պարոն Տակայանազի: Մենք կանգնած ենք սամուրայների շավղի վրա: Գերի ճապոնացին կենդանի չի վերադառնում:

— Բանակից հեռանալ: Յես, Տակայանազի ճապոնիայի լավագույն սավառնորդն եմ: Յես դեռ ուզում եմ թշնամու զեմ կովել: Յես նպատակիս կհասնեմ:

— Ձեզ վոչ մի բան չի ողնիլ: Ասենք՝ դա ձեր գործն է...

— Յես կհասնեմ:

— Կասկածում եմ: Ասենք՝ դա...

Շեմքում յերեսաց Ռտակուրայի գունատ կերպարանքը: Նրա հետևից ցրում էր Մակ Կեննայի ժպտացող դեմքը:

— Պարոն գնդապետ: Սպայական դաշնակցությունն ինձ լիազորել է պարոն Տակայանազիին ասելու...

— Ձեմ համարձակվում ձեզ պահել, — ասաց Տակայանազին վեր կենալով, — ներողություն եմ խնդրում:

— Յես շատ կուղեյի, — անկեղծորեն ասաց գնդապետը, — վոր դուք ելի մտածեյիք իմ խոսքերի վրա: Դուք այդպեղից եք գնում: Ո՞ւր եք գնում:

— Պարսն Տակայանազի, — դոչեց Մակ Կեննան, — այդ սէր եք գնում: Մեկ բոպե: Նա սէր ե փախում:

Սավառնորդը մի շարժումով ցատկեց դալլերեայի մահաջարների վրայով և արդեն գնալիս ձեռքով արավ թղթակցին: Մեքենան փոշու ամպեր բարձրացրեց և կտրավ ուղեպտույտի հետևում:

Տնից ծիծաղ լավեց: Դա մի սիրուն փոքրիկ տոնախրամբուխուն եր ճամբար դուրս դալուց առաջ: Առջևում միայն վրանների թրջված կտափե եր, արշավանքային խարույկների ծուխը, խորխորատներով ու լճակներով սողալը և ուսուցման դադային թրերի սուր ֆշշոցը: Այդ տոնի համար բաց եր թողնված նուշնիսկ միքիչ լավ դինի: Մակ Կեննան բակում կանգնած եր մտում: Կղակը շփելով՝ նա անորոշ շշնջում եր.

— Զվարճալի յե... Զվարճալի յե...

Մ Ո Ր Ա Լ

Գնդապետ Փուձինամին վոչ նշանավոր տոհմից եր, վոչ հարուստ: Նա դիտեր, վոր գեներայի ուսադիրներից դենը չի գնալու: Նա չեր պատկանում վոչ Սատցումայի ազնվական տանը, վոչ Յյոսյու տոհմին, վոչ «Կիուսիու սպայական միությանը»¹: Միակ բանը, վորը կարող եր նրան բարձրացնել, — դա «ազգայնական կարգն» եր, ղինվորականների իշխանությունը:

¹ Սատցումա և Յյոսյու — արիստոկրատ տոհմեր են, վոր մնացել են ավատական ժամանակներից և մինչև այժմ ճապոնական բանակում և նավատորմում պահպանել են իրանց ազդեցությունը: Սպայական կորպորացիաներ են — եյապես ղինվորական ֆաշիստական միություններ:

Շատերը, ինչպես որինակ՝ գնդապետը — 17-երորդ խիմեձիական փառապանծ գնդի հրամանատարը, դա հասկանալ չեյին կարող, վորովհետև Փուձինամին այն ժամանակ սոսկ փոխգնդապետ եր, այն ել վոչ նրանցից, վորոնց անունները փայլում եյին պղնձե տախտակների վրա, Մեյձի կայսեր դաճարանի մոտ: Դա տարիներ ծառայելու շնորհիվ փոխգնդապետ եր: Նա յերբեք չեր կարող դասնալ Յյոսյու մարդկանց ցեղի մեջ փոքրագույնը, վորոնք ստեղծել եյին ճապոնական նոր կայսրությունը:

Գնդապետը նրան չհասկացավ, և նյդպես ել նրանք բաժանվեցին՝ քաղաքավարի գլուխ առալ իրար: Գնդապետը ձեռքում սեղմել եր Փուձինամին շտարի կարգադրության տակ դործուղելու և նրան գնդապետ նշանակելու հրամանը:

Յեվ թեև այդ ժամանակ նրանք յերկուսն ել միևնույն աստիճանն ունեյին, բայց խիմեձիի հրամանատարի հստակ, չոր, սպիտակ դեմքը նայում եր Փուձինամին պանրի պես դեղին, հասարակ կերպարանքին ղիջող բարեմտությամբ: Փուձինամին ազնվական չեր:

Փուձինամին դա դիտեր:

Նա համեստորեն քայլում եր իր խաղաղ ուղիով: Նա կարող եր դեռ խրվել պոլիտիկանության կեղտոտ շփոթի մեջ, բայց դեպի մաքուր շեմքի մյուս կողմը, Յյոսյուի տան շեմքի մյուս կողմը, տոհմական ղինանշաններ կրող ճյուղի պես ձերմակ խտրները նա ճանապարհ չուներ:

Նա նստած եր տանը դատարկ սենյակում, հատակի վրա լապտերին բոլորովին մոտ, և՛ կարգում եր, և՛ գրում, և ուսաց լեզուն սովորում, վորովհետև այդ բոլորն շտարին պետք եր: Սև շրջանակների պես աչքի վրա կախ եր ընկած ակնոցը:

¹ Պղնձե տախտակների վրա գրված են 1868 թվի հեղաշրջման մասնակիցների անունները, վորոնք ճապոնիան գարձրել են իմպերիալիստական յերկիր:

Ինչն ընկած էյին յերկար թղթիկների խնամքով դարսված կույտեր, վորոնց վրա դժվարությամբ էյին տեղավորվում այս լայն, անհարմար բառերը. хорошо (kharasho), голова (galava), лед (lyod), осел (asyol), маневр (maneyvr), охват (okhvat), гауптвахта (ghauptvakhta).

Իրսի շրջանակների յուզած թղթում Տոկիոյի արվարձանում ելեքտրական փայլը խառնվում դառնում եր կաթնա-վարդագույն շղարշ: Այնտեղ, փոքրիկ պարտեզից դենը, վորի մեջ ջրաշուշաններ և արաքիլներ կային փշալար ունեցող բարձր պատի հետեք, տաք անձրևի, տրամվայի արծաթահնչյուն զողանջի և Ուենո պուրակի գունավոր լապտերների հետեք տիկին Աիկո Փուձինամին նստած եր սպաների կանանց ժողովում:

Փոքրիկ և աննկատելի տիկին Աիկոն վանդակավոր խալաթով, վտանները բազի պես ծալած—ծայրերը դեպի ներս, նստած եր նեղվածքի մեջ վերջին շարքերից մեկում: Բարձրության վրա նստած եր բարոնուհի Նիրանոյան: Նա ձեռին բռնել եր մի մեծ թերթ և բարկությամբ կարդում եր այն սողաոտող՝ մեջքը դարձրած դեպի ժողովը և դեմքը դեպի իշխանուհի Յասուխիտո Յասուկոն, վորը մեքենայորեն մեծ գլուխն ուրորում եր:

Մեծ իշխանուհի Յասուկոյի յեվրոպական արծաթագույն տուալետը շողշողում եր ջահի տակ: Բարոնուհին կարդում եր կատաղի բարխտոնով՝ ամենավերամբարձ տեղերում ձայնը հասցնելով հզոր թավի և արանքներում իջեցնելով մինչև սոխակի դայլայնների:

— Բարոն Նիրանոյայի կինը... Կյանքի բարեկամուհին... Տիկին Նիրանոյան ոժտված և դեղեցիկ ձեռագրով... Բարոնը դուրս չի գալիս իր լեռնային ամառանոցից... Հրաշալի յե գրված...

Բարոնուհին լարում եր ձայնը՝ հասցնելով գրեթե մըռնչյունի: Տիկին Աիկոն վախեցած նայում եր նրա ծոծրակին, վորի վրա սկսեցին կարմիր բծեր յերևալ:

«Զինվորականները ժողովրդի համար որինակ են հանդիսանում: Իսկ յեթե նրանց կանայք ոգնեն, նրանց պարտականությունն ավելի կարեոր կդառնա: Մեր ընկերության անդամները — բանակի և նավատորմի մեր սպաների կանայք — միշտ շատ լավ են կատարել բարձրագույն կամքը՝ աչքի ընկնելով լավ վարքով և իրանց մեջ զարդացնելով ճապոնացի կնոջ համեստությունը և այլ առաքինությունները: Թնդ նրանք աշխատեն անել ամենայն հնարավորը սպայի կնոջ պարտականությունը կատարելու համար:

Այս թերթում նշանակված են — Փուկուսիմա և Կուրոմիձա դեներալների, Սայի, Արիմա և Նիսիգորի գեներալ-լեյտենանտների կանայք, հինգ հոգի գեներալ-մայորների կանայք և այլ սպաների կանայք, ընդամենը 127 կին»:

Բարոնուհին խորը յերկրպագություն արավ և թերթը տվավ մեծ իշխանուհի Յասուկոյին: Ապա կատաղած դեպի ժողովը դառնալով՝ ձեռքը թափահարեց: Դահլիճում գոչեցին «Բանդայ»:

Ամբիոնը լցված եր խաղատիկնիկներով: Ճապոնական հասալիկ նինգյոները¹, վորոնք պատկերացնում էյին ֆեաներ, թիթեռներ, կուլյսեր, կաքավչուհիներ, կախարդներ, սամուրայներ և յերաժիշտներ, կուլյո-կուլյո թափված էյին: Նրանցից ամեն մեկի մեջքին մի կապոց շոկոլադ և մի տուփ ծխախոտ եր կապած: Այս բոլորն ուղարկվում եր գործող բանակը, Մանջուրիա: Տիկին Աիկոն առավտովանից աշխատում եր դահլիճում այդ ծրարների վրա՝ նրանք փաթաթելով քաթանով, տուփերը վերնիճած ֆուալյարներում դարսելով, ուղղելով խաղալիքային գթության քույրերի կապերը և վարդագույն ձիերի վրա նստած զորականների հյուսները սոսնձելով: Տիկին Աիկոն գրավված եր աշխատում. նրա տանը դեռ մի ամբողջ արկղ տիկնիկներ կային, վոր նրան նվիրել

¹ Նինգյո — նվիրվելիք տիկնիկներ:

եյին ամեն տարի «տիկնիկներն տոնին»¹ և նա յերեկոները խաղում էր նրանց հետ, յերբ գնդապետ Ֆուձինամին առանձնանում էր շիրմաների հետևում իր մշտնջենական վրձնիկը և թղթիկները ձեռքն առնելու համար: Աղջիկ-սպասավորն արդեն քնած էր լինում, փոքրիկ պարտեզում արագիլը քնով էր անցնում, և տիկին Աիկոյին վոչ վոք չէր խանդարում տիկնիկներին հեքյաթներ պատմել:

Մանջուրիա ուղարկվող ամեն մի ծրարի մեջ Աիկոյի ձեռքով դրված էր մետաքսի մի յերկար շերտ՝ սղաշրջանակը յեղբերին: Մեջտեղն աչքի-յեր ընկնում հետևյալ սեթևեթ մակազրությունը. «Յերբ դուք այս նամակը կստանաք, կրակն արդեն վոչնչացրած կլինի այն հերոսի աճյունը, վոր պատերազմում ընկավ՝ Ճապոնիայի փառքի և մեծության մասին մտածելով: Նրան չսղաք, այլ նախանձեցեք նրա փառավոր մահվան և նրա անունը հաճախ հիշեցեք վորպես խրատ մյուսներին»: Յաժում աղբանվան համար տեղ էր թողնված:

— Սա հարմարության համար է, — ասաց Աիկոն իր հարևանուհուն, — յերբ սպան մեռնում է, այստեղ դնում են գնդի կնիքը և ծնողներին ուղարկում: Նրանք ծանուցում են ստանում մյուս աշխարհից: Դա շատ հարմար է: Յես կուզենայի, վոր յեղբայրս այս տիկնիկն ստանար: Սա լավ ձիավոր է, չէ:

— Չեր յեղբայրը Մանջուրիա յե, — հարցրեց հարևանուհին:

— Այո: Նա սավառնորդ է: Նրա անունը Տակայանագի յե: Նա լավ սավառնորդ է:

— Տակայանագի:

Հարևանուհին դուրսը բարձրացրեց:

¹ Խինա-մատուրի—մաբալ 3-ը, աղջիկների տոնը, յերբ վոր նրանց տիկնիկներ են նվիրում:

— Այո: Դուք յերեկ լսել էք: Նա շատ լավ սավառնորդ է:
— Յես լսել եմ ձեր յեղբոր մասին, — ասաց հարևանուհին՝ ծրարի վրա կոանալով:

Ահա արդեն վերջն է: Մեծ իշխանուհին թերթն ընդունեց: Այդ թերթի վրա ամենից վերջում չորս հյուսադերեր էյին յերևում, վորոնք պատկերացնում էյին Աիկո Ֆուձինամի անունը, վերջում, գրեթե թվականի հենց կողքին — «Սյովայի 7-երորդ տարվա ապրիլի 20-ին»: Դահլիճում որհներդ են յերգում:

Փողոցում տաք անձրև է: Կուզանի վրա սպայական ժողովարանի մուտքի մոտ գրգռում են արծաթե «ռոյսները», ցածրիկ «կավասակիները» և յերկար «շեվրոլները»: Տիկին Աիկոն վազում է՝ իր գետաներով մանրիկ թրխիթրխացներով:

Դա արծաթե ամիսն է: Ամեն տեղ արծաթ է — մեծ իշխանուհու զգեստի վրա, մեքենաների ուղիատորների վրա, ողի մեջ մեծ լապտեր-հովանոցների առաջ, ուր ուտինե և վոսկրե խաղալիքների առևտուր են անում: Արծաթը լսողությամբ էլ է զգացվում լուսով լցված Գինդեյի¹ վրա և նույնիսկ կարծես համն էլ է տալիս: Արծաթը ծափում է ջրանցքներում և առուների պես հոսում է կենդանի ցանկապատերի արանքով և ներքին թաղամասերի սաղատավոր տանիքների թեքության վրա:

Իսկ գնդապետ Ֆուձինամին վրձնիկով գրոտում է յերկար թերթերի վրա և կույտին ավելացնում: Խալաթը հետ է բացվել, և յերևում է գնդապետի դեղին, անմազ կուրծքը:

«Լրտեսության համար խաղաղ և պատերազմական ժամանակի մեջ տարբերություն գոյություն չունի: Ինչպիսի էլ լինեն կատարվող հանձնարարության գրությունը և պայմանները, լրտեսները կամ գործակալները խաղաղ ժամանակ

¹ Գինդե—Տոկիոյի գլխավոր փողոցը:

շարունակ դատի և բանտի վտանգի մեջ են, իսկ պատերազմի ժամանակ — մահվան վտանգի, և այն ել վոչ փառավոր, կովի դաշտում, այլ դավաճանի մահվան, վորը գեղակահար՝ վում և մերձակա գյուղում:

Հենց միայն այս բանը մեզ ստիպում և մեծագույն զգաստութեամբ վերաբերվել դեպի գործակալները աշխատանքը: Լրտեսի կուլտան անմիտ բան և թվում, բայց աշխատանքի ժամանակ մեռած լրտեսը պետք և պատիվների արժանանա վորպես մեծագույն սողապիտ հերոսա:

Վերանդայում բացվող շիրման ճուղաց: Քաղաքի հեռավոր ուրախ ձայներն ավելի լսելի դարձան:

«Արկուն վերադարձավ, — մտածեց գնդապետը, — ժողովը շուտ և վերջացելը»:

«Մ ա ն ո թ ու թ յ ու ն: Մենք գերազանցում ենք լրտեսութեան գերմանական սխտանը, վոր խիտ գործնական և, հիմնված բոլոր պիտանի տեղեկությունների մեծ քանակով ժողովումի վրա՝ մինչև նույնիսկ ռեստորանային հաշիվները և փողոց շարտված ծրարների կտորները: Հարկավոր և այդ մանր աշխատանքի խակական հերոսութեան գիտակցութեանն արմատացնել, աշխատանքի, ուր սպան հաճախ ստիպված և դուրս գալ լուսանկարչի, շրջել գործակալի, միամիտ ձեռնածվի, խելագարի, արհեստով զողի, գաղան զսպողի, պարի ուսուցչի և փողոցային բժշկի գերում...»

Գնդապետի հետևը պարզ վոտնաձայներ լսվեցին: Փուռ-ձինամին վեր ցատկեց և լապտերը վեր բարձրացրեց:

— Ո՞վ և դա: Այստեղ յեկ: Ի՞նչ կա: Դա... դա դժբեք է:

— Պարոն Փուռ-ձինամի, — պատասխանեց մտնողը՝ ձեռքը մեկնելով:

— Պարոն Տակայանագի, — պատասխանեց գնդապետը՝ հետ նահանջելով և լապտերն առջևը բռնած:

— Յես ուզում եմ... յես կուղենայի ձեզ հետ միքիչ խոսել, — ասաց սավառնորդը՝ ձեռները ցած քցելով:

Յերկար լուսթյուն տիրեց: Վերջապես գնդապետը լապտերը ցած գրեց:

— Յես կարծում եյի, թե դուք կենդանի չեք, — ասաց նա:

— Յես ուզում եյի խոսել այդ բանի մասին:

— Մենք խոսելու բան չունենք: Իրան հարգող ճապոնացի սպան գերությունից վերադառնում և միայն նրա համար, վոր սեպուղու կատարի:

— Բայց լսեցեք, պարոն գնդապետ: Յես այդ մասին արդեն ամեն բան գիտեմ: Բուսիդո՞: Սամուրայյան հավատարմություն: Միթե այսպիսի գրություններ չեն յեղել:

— Վոչինչ չգիտեմ: Գրված որենքներ չկան, բայց կան սովորություններ:

— Պարոն Փուռ-ձինամի: Յես քսանութ տարեկան եմ: Յես ճապոնական ողանավատորմի լավագույն սավառնորդներից մեկն եմ:

— Վոչինչ չգիտեմ:

— Բայց չե՞ վոր դա ձևականություն է: Յես ցանկանում եմ հայրենիքիս ծառայել:

— Յես ձեզ չեմ ստիպել մեռնել:

— Բայց չե՞ վոր ինքներդ չեք հավատում այդ թատրոնական ձևականություններին: Դուք քրոջս ամուսինն եք: Յես ճանաչում եմ ձեր մտածելակերպը: Մենք յերկուսս մեծ տոհմերից չենք: Իմ մահն ընդ և հարկավոր, բացի ոտար-երկրյա տուրիստներից:

— Դուք խորապես սխալվում եք, Տակայանագի-սան: Այդ դեպքի մասին բոլոր թերթերը գրել են: Ձեր մահը հարկավոր չի: Հարկավոր է ճապոնական սպայի հավատարմություն:

— Դուք չեք ուզում ինձ հետ մարդավարի խոսել:

— Յես համաձայն եմ բացատրելու ձեզ այդ: Մեզ պետք չի ձեր մահը: Բայց մեզ պետք է բանակի պատիվը: Մեզ ատում են բոլոր յերկրներում և սպասում են այնպիսի

1 «Ռազմիկի ուղին» — ավատական ժամանակների սամուրայների վարքի կանոնների որենագիրը:

գեղքի, վոր մեզ հասցնեն չինացիների մակարդակին: Յես հնամյա թատրոնական եֆֆեկտները պաշտպան չեմ, բայց յես զինվորական մասնագետ եմ: Ավատական ժամանակների որենքների այն ժողովածուն, վոր ծաղրում են ուսանողները և կոմունիստները, պետք և նորից կենդանանա, վորպեսզի վերածնվի ազգի կարգապահությունը հենց այժմ, յերբ ճգնաժամի հարվածների տակ պայթում են ձեռնարկությունները: Ամեն ինչ բանակից և կախված: Բանակն իր ճանապարհից կվերացնի բոլոր դավաճաններին:

— Դա թեորիա յե, — ասաց Տակայանազին՝ պուխը կախելով:

— Վոչ, պրակտիկա յե: Յեթե կարգապահություն չլինի, կսկսվի քոտո և անարիբիա: Յեվ այդ կոպտադեմ գեղջուկները վաղը սվինները կբարձրացնեն կարգի դեմ, մեր դեմ: Կայսրությունը վորոշ սխտեմի վրա յե հիմնված:

— Գաղտնի սխտեմ, — դռչեց Տակայանազին:

— Հանդարտ, խնդրում եմ ձեզ: Գուցե գաղտնի յե: Մենք պարանի վրայով ենք գնում և չենք կարող սխալ քայլեր անել: Յեթե մենք սայթակելու լինենք, այն ժամանակ այնտեղ... ներքեում մեզ ծվեն-ծվեն կանեն անդլիացիները, ամերիկացիները... և ուրիշները:

— Բայց յես նպատակիս կհասնեմ, — հանկարծակի ասաց սավառնորդը: — Յես կնետվեմ կայսերական պալատի դռները և խնդիրք կտամ: Յես կհասնեմ նպատակիս:

— Ուշ ե, պարոն սավառնորդ:

— Այն ժամանակ... այն ժամանակ յես ուումը կնետեմ Մեյձիի դամբարանը:

— Չեզ կգլխատեն: Բուռնցքներով սխտեմի դեմ... Գուք միշտ այդպես եք յեղել:

— Յես: Տակայանազին: Յես կթքեմ նրանց վրա:

— Խնդրում եմ ձեզ, հանդարտ: Գուք միշտ այդպես եք յեղել, — արտամած ասում եր Ֆուձինամին:

— Գուք հիշեցիք հունական արձանը... Գուք... ս, այդ դուք եք, պարոն Ֆուձինամին, հայրենիքին հարկավոր:

Սավառնորդը վեր կացավ:

— Քրոջո, — ասաց նա, — բան չասեք:

— Նա կիմանա, — ստոնությամբ ասաց գնդապետը:

— Մնաք բարով, — ասաց սավառնորդը և ծանր քայլերով գնաց գեպի՝ դուռը:

— Պարոն Տակայանազի, — զարմացած ասաց գնդապետը, — դուք ուր եք գնում:

— Յես ուղում եմ, վոր ինձ մի քիչ ել բացատրելիք, պարոն Ֆուձինամին, — քաղաքավարությամբ ասաց սավառնորդը և դեն հրեց շիրման:

Տիկին Աիկոն վաղում եր՝ փայտի սանդալները թրբելով:

Յերկնահաս աներով պատած տոկիոյական «մատի» մեծ թողերի ներսում դալարվում են նեղ նրբանցքներ, վորոնցով միայն յերկու հետեակ կամ մի ուկլա և կարող անցնել:

Քարե բարձր ցանկապատերից վեր լողում են բալենիների թիտ կանաչ խմբեր և թղթե վերանդաններով փայտե տնակների կղմինդրե կորացված տանիքները: Տիկին Աիկոն վաղեց անցավ մի նրբանցքով և թեքվեց մյուսը: Անկյունում գրեթե դեմառդեմ նա հանդիպեց քթին քաշած յեվրոպական փափուկ գլխարկով մի մարդու և յերկու ձեռքով բռնեց իր ամուր ձգած շարֆ-դոտուց:

— Յուկեո-կոն, — բացականչեց նա: — Պարոն յեղբայր:

Անցորդը թափով դարձավ և առանց մի խոսք ասելու՝ նետվեց մյուս կողմը: Աիկոն լայն չոած աչքերով նայեց նրա հետեից:

— Թվաց, — շշնջաց Աիկոն, — դա բան չեք, նույնիսկ տեսիլ չեք:

Գնդապետ Ֆուձինամին դեռ նստած եր լապտերի մոտ: Քայլերի ձայն լսելով՝ նա հարցրեց:

— Աբկո:

Աիկոն խորը յերկրպագեց: Ամուսինը լուռ եր:

— Ինձ թվաց, թե յես յեղորոս տեսա:

— Դուք նրան տեսել եք, — պատասխանեց գնդապետն՝ առանց վեր կենալու:

— Մթթե նա այստեղ է, — հարցրեց Աիկոն զողզոջուհու ձայնով:

— Նա այստեղ է: Նա գերի յեր ընկել բանդիտների ձեռքը, բայց նրանցից փախել է և վերադարձել ճապոնիս:

— Նա վերադարձել է... վերադարձել է:

— Այո: Այժմ նա պետք է մեռնի: Բայց նա չի ուզում:

Դա խայտառակություն է սպայի համար:

— Խայտառակություն է...

— Այո: Այժմ ամենից լաջն այն կլինի, վոր դուք մեռնեյիք յեղորոս փոխարեն:

— Յես: Յես մեռնեմ:

— Այո, այո, դուք: Դուք կարող եյիք դրություն թողնել այն մասին, վոր չկարողացաք տանել յեղորոս նախատինքը:

Դա լավ կլինի, դուք գիտեք այդ, դա գեղեցիկ բան կլինի:

— Մեռնել: Իսկապէս: Յես պարտավոր եմ մեռնել:

— Ջինքներդ հավաքեցէք: Անցեք ձեր սենյակը:

Աիկոն հնազանդվեց: Նա ընկավ հատակին և դեմքը ձեռներով ծածկեց: Հարեան սենյակում գնդապետ Փուձինամին ծառայութեան յեռանդով շարունակում էր վրձնիկը շարժել:

Աիկոն յերկար ժամանակ մեզմ լալիս եր: Նա սովոր չեր մի բանի մասին յերկար մտածել, և նույնիսկ առանձին բառերը դժվարութեամբ եյին տեղավորվում նրա նրբագեղ գլխում:

— Մեռնել... գեներալ-մայորների կանայք... մնացած կանայք... տիկնիկները... յեղրայրս... մեռնել... Մանջուրիա... յեղր... յեղր... տիկ... մեռն...

Գնդապետ Փուձինամին միայն լուսաբացին վերջացրեց: Նա ժողովեց գրենական պիտույքները, քունքերը շփեց և կնոջ սենյակից իրան բաժանող շիրմաները մի կողմ շարժեց:

Աիկոն քնած եր հատակին: Նրա այտերն արտասուհներից ուռել եյին: Յերկու ձեռներով նա իրան եր սեղմել տիկնիկների մի կույտ: Անկյունում անշարժ պզգամ եր դարմացած աղախինը:

ՇՐՋԱՆԱԿԱՆ ԹՅՈՒՆ

Ի է ն. 10 ապրիլի 32,3

11 ապրիլի 32,1

12 ապրիլի 32,0

13 ապրիլի 28,2

14 ապրիլի 27,0

(1932 թվի V կիսամյակի Տոկիոյի

բորսայի հաշվետվութունը):

Վտմանք ասում եյին, թե նախկին սավառնորդ Տակայա-նագին խելագարվել է: Ուրիշները պնդում եյին, թե նա իր հանցանքը քավելու նպատակով մի դարմանալի ու խտաղնացություն է կատարում: Գործարանատեր Ոխարան, վորը հայտնի յեր «Փչացած պահածոներ» մականունով, վճռակա-նապես պնդում եր, թե իսկական Տակայանագին անձնասպան է յեղել: «Շանգայ Դեյլի Ռեյլյու» թերթն եր մեջ գետեղել եր այդ թեմայով մի նկատողություն ճշմարտական սավառնորդի պատահարն՝ ընդհանուր վերնադրով՝ «Լրտես-ների և խարակիլի յերկրում» յենթավերնագրով: Ասենք՝ մյուս որն այդ թերթի ուշադրությունը գրավեց ավստրա-լիական պրեմյերի ճառով և չիլիական Ասուֆրե հրարուղիի վիժմամով:

Իսկ Տակայանադին չեր մեռել: Նա շարունակում էր ծապոնիայում թափառել:

Մայիսյան սքանչելի յերեկոններից մեկում նա նույնիսկ գտնվում էր Ոսականում Կիտախամայից արևմուտք, դործաբանային շրջանում, վոր մինչև այժմ վատ և լուսավորվում, գաղով: Զբանցքում լողում էին ձմերուկի կճեղներ, կանգնած գեղին ջրից քայքայման թախծալի հոտ էր բարձրանում: Սավառնորդը սուլում էր և ջրի մեջ թքում: Կարելի չէր նույնիսկ ասել, վոր նա իրան հիանալի յե դուռ: Բանակային մահուղե կուռտիկը նրան այլևս չէր խանգարում: Մերկ վտաններն գետաները թրթկթրթկում էին: Վանդակավոր պատուոված խալաթը նրա շարժումներին չէր խանգարում: Նա գլխարաց էր: Դեմքն ավելի չէր այրվել: Գուցե մասամբ իրավացի էին նրանք, վորոնք ասում էին, թե նախկին սավառնորդը «մի քիչ ցնորվել է», բայց նա այդ նոր դրություն մեջ, ըստ յերևույթին, վոչ մի բանից չէր տառապում: Նա սուլում և հիշում էր:

Հիշելու բան շատ կար. հարավային ծովափի խոշոր ավազով ծածկված ճանապարհները, ալեկոծությունը, ավարային թնդանոթներով շրջապատված՝ ճապոնա-չինական պատերազմի դոհերի հուշարձանները, բուստի յերանդով արևամուտքները, բենդինի համար պատրաստված սյունաձև անոթները, ճոխ վիլլաների մահակավոր պահապանները, շները, մուրացկանները, հեծանավորները, ականակիրների ազոտ սավերները հորիզոնում, եժանադին ճաշարանների տաք-տաք բարկ ծուխը, զորանոցների մոտ հրապարակներում և դպրոցների առջև հրապարակիկներում անդադար հնչող շեփորը, Ուենո պուրակում արկնիկային ջաղը, ճակատային բյուլե-անները Տոկիոյում, ծծմբային աղբյուրները Նագոյայում:

Ի դեպ՝ ծծմբային աղբյուրների մասին: Տեսակցություն պարոն Ոխարայի — «Փչացած պահածոներ» հետ նստաբանի վրա դափնե ձեմելիքի ստփերում, հենց փայտե բաղ-

նիքների մուտքի մոտ: Ոխարայի փայտանման հաստ ընչացքները և հաստ հովանոցը և նրա միալար, փողոցային յերգչի վտանացող ձայնը:

— Հավատացեք ինձ, մարդիկ դարձել են վագրեր, վագրեր, ոճեր: Մարդիկ, վորոնց յես փող էյի տալիս վոչնչի համար, ինչ վոր կասկածելի ազգականներ, ինչ վոր վարախրավոր ուսանողներ, ինչ վոր հարեցողներ: Յես շատ եմ խնդրում ձեզնից այստեղ չբանալ իմ իսկական անունը, յես այստեղ ճանաչված եմ վորպես պարոն Կուրտտա, Հոկկայդոյի կալվածատեր: Թե չե նրանք ինձ այստեղ ել կխուզեն: Ուրվականներ, թուչող կին-թիթեռներ: Արճմիություն ասոցիացիա: Ինձներ, մարդագայլեր, իժեր: Մի՞թե միայն յես եմ տնաքանդվել: Յես հայտարարել եմ սնանկանալու մասին: Դուք դիտե՛ք՝ ինձ ինչ առաջարկեցին: Վերասարքավորել դործարանը: Այո, այո, վերասարքավորել: Գործարանումս նստած և կոտավարություն մի աստիճանավոր: Ստուգում և իմ հաշիվները: Յեկ յերբ յես խնդիր ավի նպաստի մասին, — յես՝ պատվավոր մարդս, յես՝ զոհարեբողս, յես յերկիրն նվիրել եմ յերկու ողանավ, — ինձ ասացին. «Կես տարուց հետո»: Ի՞նչ եմ անում յես այն ժամանակ: Յես ասրում եմ վերջին փշրանքներով, յես թաղնվում եմ: Բանվորները յերկու անգամ պաշարել են տունս: Կալ և, վոր կարողացա ընտանիքս տեղավորել հորեղբորս մոտ Կիոտոյում: Ինձ ասում են. «Ճգնաժամ է»: Մի՞թե յես չեմ նվիրարել մանջուրական այդ դործի համար: Դա յերբ հետ կստացվի: Յես ձեզնից շատ եմ խնդրում իմ անունը չբանալ:

Պարոն «Փչացած պահածոներ» շատ էր հուզվում և հովանոցը թափահարում: Հուզմունքից նա նույնիսկ քրտնեց:

— Բայց չե՞ վոր կատավարությունը ձեզ և թողել դործարանը և շահը, — ասաց Տակայանադին: — Ել ի՞նչ եք ուզում:

— Թողել և: Յես պետք է կես տարի նստեմ, իսկ ի՞նչ կլինի այս ժամանակամիջոցում: Գուցե պատերազմ, գուցե

ելի մի սւրբիշ բան... Յեթե ձեռս փող տային, այս բոպէյիս, յես մինչև ձմեռ կարգի կընկնէյի: Յես պետք ե գլուխ գլխի զնեմ արհմիությունների և աստիճանավորների հետ: Յես ձեզ նից հարցնում եմ, յերկրին պահածոներ հարկավոր են, թե՞ վոչ: Բանակին պահածոներ հարկավոր են: Նրանք չեն ուզում թույլ տալ ինձ փող վաստակելու, վորպեսզի աղքատության մեջ չմեռնեմ: Ընձառյուծներ: Շնաձկներ:

— Ուրեմն ի՞նչ եք ուզում դուք, Ուսրա-սան:

— Արդարադատություն: Ուրիշ վոչինչ: Յես վոչ մի բանով չեմ կարող ձեզ ոգնել, պարոն Տակայանազի, թեև յես ձեզ հարգում եմ վորպես առաջնակարգ մասնադետի և տեսնում, վոր ճգնաժամը ձեզ ել ե հարվածել: Բայց վոչ: Յես ել մի բարի պտուղ չեմ: Դուք պատասխարվելու տեղ չունեք: Իսկ յես: Դուք կորցրել եք ձեր աշխատանքը, իսկ յես կորցրել եմ հանգիստս: Վոչ, վոչ, վոչինչ չեմ կարող անել ձեզ համար: Արդարադատություն: Այ թե յես ինչ եմ ուզում:

«Փչացած պահածոները» կաթսայաձև գլխարկը հանեց և վախեցած՝ շուրջը նայեց:

— Արդեն մի ամիս ե, վոր ինձ հետևում են: Ո՞վ ե այդ կիմոնոյով պարոնը: Ո՞ր, դա նրանք են... Յես նրանց ուսումնասիրել եմ... Կամ քուցե դա ձեզ են հետևում: Իսկ դուք ի՞նչ եք անելու:

— Դեռ կան հասարակ ճաշարաններն ու ջրանցքները: Ուսրա-սան. — սոսայ սավառնորդը, նստարանից վեր կենտրով: — Բի՛ջ դեպքեր են լինում ճապոնիայի մեծ ճանապարհների: Յես այտեղ վոտքով եմ յեկել...

— Յես հասկանում եմ: Դուք ուզում եք մեռնել: Զեզնից ուզում են, վոր դուք սեպպուկու անեք, բայց դուք ուզում եք խեղդվել: Դուք իրավացի յեք: Դիտե՛ք ինչ: Փախեք: Դա ձեզ են հետևում: Յես դնում եմ, ներեցեք: Արդարադատություն...

Տակայանազին սուլում և թքում ե:

Հիշելու բան շատ: Ծերեր: Ծերերը շրջանակներում կախված եյին հանգստանալու դահլիճում: Սիտ ուսադիրներով մորուքավոր մարշալներ: Ուսերի վրայով առլաս ժապավեններ քցած ուս-ճապոնական պատերազմի առաջնորդներ: Հին ժամանակների մինիստրներ և խորհրդականներ ածիլված դուխներով և պառաված, խորամանկ, ծակող աչքերով: Մղմուղի ընչացքներով զարդարված ահազին սաղավարտներով ուղմիկներ կատաղի ծնոտներով և կատաղության ծամածուծյամբ հին մարտիկներ:

Դա ամերիկական դպրոցում եր, ուր սովորում եյին հոգաչափների և ատամնարույժների զավակներ: Դպրոցը բարեգործական եր և եժան: Առաջնորդների արանքում համեստորեն ծվարել եյին ինչ վոր գլխադիրներով մարդասեր ամերիկացի տիկիներ և բարձրադիր ուլայած ոճիքներով նվիրատուների պատկերներ: Յերկու մանուկներ — Տակայանազին և Ֆուձիւնամին — բարեկամանում եյին այդ ցուրտ, լուսավոր դահլիճում: Ֆուձիւնամին մի տարով մեծ եր: Ուստի նա իրան մեծավարի յեր պահում փոքր Տակայանազիի վերաբերմամբ: Իրոք նրանց յերկուսին զոզում եր նախանձը և գաղտնի խիստ ատելությունը: Նրանք նախանձում եյին «յուզոտ» փոքրիկ կաղետներին, վորոնց ընտանեկան ավտոմոբիլներով բերում եյին կաղետական դպրոցի այգիների մոտ և վորոնք իրար հանդիպելիս քաղաքավարությամբ ֆըշչացնում եյին և ձևապաշտորեն իրար գլուխ տալիս սուսերներից բռնած:

Ատում եյին նրանք միևնույն արարածը — դա հանգստի դահլիճում գրված հունական ըմբշի մի գաճե արձան եր:

Մարմնամարզության դասին ուսուցիչ-ամերիկացին նրա վրա մատնանշելով ասում եր.

— Նայեցեք: Սա հունական ըմբիշ ե: Նա հենց նոր և հաղթել հակառակորդին և դասին սոսակ դրել գլխին: Տեսեք,

ինչպես են դարգացած փորի մկանները: Տղաներից վորք փորի մկաններն են դարգացած: Միմիայն Տակայանադիինը:

Տակայանադին հոլարտ ժպտում էր: Նա կարծես թե ծընվել էր մկաններով պատած:

— Տակայանադի: Դուրս յեկ: Փորդ ձգիր: Տեսեք նա, ինչ մկաններ ունի: Իսկ դուք: Միթե դուք կարող եք հակառակորդին հաղթել:

— Աբբ, — վերջին շարքերից լավեց մի ձայն, — յես լսել եմ, վոր թշնամիներին հաղթում են ղենքով և խորամանկությամբ:

— Դա ո՞վ ասաց: Փուձինամին: Դուրս արի: Կրկնիր, ինչ վոր ասացիր:

Փուձինամին կրկնեց:

— Հիմարություններ են, — ասաց ուսուցիչն՝ ընչացքները վտրելով, — դա քեզ ո՞վ ասաց: Ի՞նչպես ես կրկնում այդ դու, անմկանունի աշակերտդ:

— Յես լսել եմ, — պատասխանեց Փուձինամին, — վոր այս ձերերը (նա մատնանշեց ուղմիկների պատկերները) թշնամիներին հաղթել են ամենեին վսչ մկաններով:

— Իսկ ինչո՞վ:

— Ձենքով, ճարպկությամբ, խորամանկությամբ:

— Լավ, — ասաց ուսուցիչը, — իսկ դու, Տակայանադի, ինչ ես կարծում:

Փոքրիկ ամբակազմ աղան կլոր գլուխը կախ քցեց: Նրա թուխ դեմքին խիստ ժպտի պես մի բան ցույց:

— Յես ել եմ այդպես կարծում, սը՛ր, — սկսեց նա խելամտորեն, — թեև յես լավ բուռնցքներ ել ունեմ և յես կարող եմ...

— Լուել, — ասաց ուսուցիչը, — յերկուսդ ել տեղներդ:

Այդ յերեկոյան հանդատի դահլիճի ցուրտ խավարում Տակայանադին տեսավ իր ընկերոջը հունական բմբջի արձանի առաջ:

Փուձինամին կանգնած էր՝ ձեռներն աղղրերով ձգած և ուղիղ առջևն էր նայում:

— Մի շվարիր, — ներողարար ասաց Տակայանադին, — դա դատարկ բան է: Ժամանակով դու յել կդարգացնես մկաններդ:

Փուձինամին լուռ էր:

— Յես քեզ կսովորեցնեմ... Ուղճում ես:

Փուձինամին հանկարծ թափով դարձավ: Նրա աչքերն ատելությամբ փայլում էին:

— Դու, — ասաց նա, — դու սիրո՞ւմ ես դափնեպսակավոր այդ բարձրանասակ մարդուն:

— Վոչ, կասեյի յես... Ավելի ճիշտը... յես ասել չեմ կարողանում:

Փուձինամին յերկու ձեռները հենեց բմբջի կրճքին: Նա կրճքից վեր հասնել չկարողացավ: Ըմբիշը միայն թեթևակի յերերաց:

— Ուղճում ես, յես սղնեմ, — ասաց Տակայանադին և յերկու ձեռների ուժգին հարվածով արձանը գլորեց:

Լավեց մի հնչյուն: Գաճի կտորաանքները ցրվեցին ամեն կողմ: Մի բուպե հետո որսպան տեսուչը դողդոջուն ձեռներով դահլիճի լույսը զառեց, բայց նրա բարձրացրած ձեռն ողում սառած մնաց:

Տակայանադին կանգնած էր բեկորների կույտի վրա լայնաթիկունք և մարմնեզ, վտտից վտտ փոխելով: Նա պատկառանքով նայում էր իր բարեկամին, վորը թվում էր թե քարացել է՝ ձեռներն աղղրերով ձգած:

— Դա յես արի, սը՛ր, — չորությամբ ասաց Փուձինամին:

Հետևյալ ուսուցիչական տարում մի կաղես դպրոցի մտալ մայթով անցնելիս իր ճանապարհը կտրող Փուձինամի մեջքին հրեց: Փուձինամին քիչ մնաց վայր ընկնի: Մարմնամարդության ուսուցիչը ցանկասրտի հետևից նայեց և հավա-

նությամբ գլուխը շարժեց: Տակայանազին՝ պատրաստ եր բարեկամի վրեժը հանել: Նա մտտեցավ կողետին և բոլոր կանոնների համաձայն դիրք բռնեց:

— Վոտներդ լսյն դրեք, — գոչեց ուսուցիչը, — և ատամներին չխփեք, Տակայանազի: Դուք այդպիսի զղվելի սովորություն ունեք:

Տակայանազին խիզախ վոստյունի յեր պատրաստվում: Նա հիրավի վատ սովորություն ուներ խփելու ատամներին և գլխին: Կռվի մեջ նա կատաղում եր:

— Չքեղ, — հանկարծ խոսեց Ֆուձինամին, — կորի՛ր այս բոպեյիս, դու, գորտ: Տակայանազի:

— Ի՞նչ, — ապշած ասաց Տակայանազին, — ի՞նչ ես ասում:

— Թո՛ղ անց կենա: Կորի՛ր այստեղից:

— Յե՛ս: Անցե՛նք: Ա՛խ, այ թե ինչ...

Տակայանազին դեն գնաց: Ուսուցիչը սուլում եր՝ ցանկապատին կռթնած: Կողետը վեհորեն հեռանում եր:

— Ձեզ շփոթեցրեց իմ ձայնի հնչյունը, Ֆուձինամի, — հարցրեց ուսուցիչը: — Յես ցավում եմ, վոր ինձ չպահեցի...

— Ձեր ձայնն այստեղ մեղավոր չի, — հանդիստ պատասխանեց Ֆուձինամին՝ ցանկապատի առջև ձգվելով:

— Վախկոտությունը, — ասաց ուսուցիչը:

— Վոչ, սը՛ր: Կարգապահությունը:

Ամերիկյան դպրոցի աշակերտները Ֆուձինամիի համար ասում էին, թե նա տարորինակ տղա յե: Ավարտելուց առաջ նա ժամերով կանգնում եր հանդստի դահլիճում ծերերի պատկերների առջև: Նրա հետ միայն Տակայանազին եր:

— Յես կհասնեմ ուղածիս, — համոզված ասում եր Տակայանազին: — Յես կհասնեմ: Յես ծնողներիս հայտնել եմ, վոր սուղում եմ զինվորական դպրոց մտնել:

— Իսկ նրանք:

— Նրանք ուզում են ինձ յերկրաչափ դարձնել: Յերկրաչափներն ավելի հարուստ են:

— Իսկ դո՞ւ:

— Իսկ յես, — կրքով ասաց Տակայանազին, — յես կըփախչեմ:

— Ո՞ւր:

— Յես կգնամ կայսերական պալատ, դարպասների առաջ գետնին կընկնեմ և խնդիրք կտամ:

Ֆուձինամին նայեց իր բարեկամին:

— Դու իրավացի յես, — ասաց նա, — և յես գլխեմ, վոր դու այդ բանն անելու ընդունակ ես: Իսկ յեթե տանը չթողնեն, վոր դու փախչե՛ս:

— Յես պատը կքանդեմ կամ պահապանին կթունավորեմ: Յես արդեն վորոշել եմ:

— Իսկ յեթե քեզ զինվորական դպրոցում չընդունեն:

— Յես Սիբիր կգնամ վորպես կամավոր և կկռվեմ զինվորի պես: Յես արդեն վճռել եմ: Յես ինձ խանդարողներին բոլորին կկոտորեմ:

— Իսկ յեթե հայրդ լինի՛:

— Հայրս: — Տակայանազին գլուխը կախեց: — Այն ժամանակ յես հորս կսպանեմ:

— Դու մտածել ես, թե ինչ ես ասում:

— Մտածել եմ: Թքեղ ամեն բանի վրա: Յես կհասնեմ ցանկացածիս:

— Դա շատ լավ ե, վոր դու կարող ես, — կամացուկ ասաց Ֆուձինամին, — իսկ յես չեմ կարող: Փառք...

Նա գլուխը կախեց ծերերի անեղ պատկերների առջև:

Հանդստի դահլիճի կիսախավարում նրանք կենդանի էին թվում և նրա վրա նայում էին դաժանորեն և հայրաբար:

— Ո՛ր, ծերեր: Փոքրիկ ամրակազմ Տակայանազին նրանցից վախենում եր և դահլիճով անցնելիս՝ աշխատում եր պատկերներին չնայել: Նա լուկ մի բան եր գիտակցում. Ֆուձինամիի հրամանով նա կարող եր դանակով նրանց վրա հարձակվել:

— Իսկ քեզ վճարեղ են տալիս:

— Զինվորական դպրոց, — ել ավելի կամաց ասաց Ֆու-
ձինամին:

Հիշելու բան շատ: Ամառվա դպրոցում համառորեն սո-
վորելու տարիները: Ծնողները վերջապես համաձայնել էյին,
թեև դա կապված էր ընտանիքի քաղցածության հետ: Խո-
նարհ խնդիրներ ուղարկելու հինգ ինն կա: Հինգ ինն ստա-
նալը հոր ձանձրալի խրատների հետ միասին: Առաջին ինք-
նուրույն թոխչքները սիրա կձկող վայրեջքով: Ողագնացու-
թյան առաջին ֆիզուրները: Իշխանության առաջին շնոր-
հավորանքները: Նվերները և անբողոքմամբ շեփորի ձայնը,
վորով իրան յերկիր էյին կանչում: Նա չէր ուղում ողից
հեռանալ, թեև յերկրի վրա նրան սպասում էր հրահանգչի
ձեռք սեղմելը: Դիվիզիայի կից ավիտվաշտում փորձառու-
թյան ժամանակաշրջանը: Թռչող կրակ: Տակայանագի: Մըր-
ցանակներ և սեկորդներ: Փայտք:

Այդ բոլոր տարիները նա Ֆուձինամին չէր տեսել:
Նրան հանդիպեց միայն հայրենի քաղաքը վերադառնալուց,
վորտեղ իմացավ, վոր քույրն — Աիկոն նշանված է Ֆուձի-
նամիի հետ: Վաշտապես Ֆուձինամին այնքան էլ արագ
չէր բարձրանում: Նա վատ շարքային էր: Բայց ընտանիքի
տունը քանդվել էր վորդու ուսման համար. պետք էր աղջը-
կանից շուտ աղատվել:

Աղջկանից շատ շուտ աղատվեցին: Հարսանիքից հետո
վաշտապես Ֆուձինամին նրան տուն տարավ ուղիշայով: Նա
հրաժարվեց պարտադիր զգեստ փոխելուց և տարբեր մեծու-
թյամբ ըմպանակներով խմելուց¹: Նրան հարկավոր չէյին
այդ հին սովորությունները:

Մի տարուց հետո Աիկո քույրիկը դանդաղվում էր, վոր
ամուսինը վոչ մի ուշադրություն չի դարձնում իր վրա: Նա

¹ Սան-սան-կու-դո — ճաղոնական հարսանական սովորություն:

միշտ ինչ վոր թղթեր և գնում: Ասենք՝ դա սովորական
բան էր:

Այդ տարիները սավառնորդ Տակայանագիի ձեռքը բազ-
մաթիվ բարձրաստիճան անձեր էյին սեղմել: Սավառնորդը
նրանցից միքանիսին ճանաչում էր: Գրանք նախկին «յու-
ղոտ» կազեաներ էյին: Նրանք ակնածությամբ էյին նայում
նրա լայն ուսերին և գրգռիչ բրոնզագույն դեմքին: Ասենք՝
դա յեկ էր սովորական բան:

Հիշելու բաներ շատ: Սավառնորդը լալաթը հետ բա-
ցեց և նայեց իր փայտե մաշիկներով, կեղտոտ մերկ վոտ-
ներին:

— Սխտեմ, — քմծիծաղեց նա, — սխտեմ: Բուռնցքնե-
րով սխտեմի դեմ: Բայց յես կհասնեմ նպատակիս: Յես
նրանց յերեսներին կթքեմ:

Մի ակնթարթով նրա հիշողության մեջ դուրս լողացին
ձերերի պատկերները հանդատի դահլիճում, բայց իսկույն էլ
մարեցին:

Սավառնորդը թքում է ջրանցքում: Հիշելու արժանի
շատ բան կա: Իսկ այդ իջևանները: Մուրացիկաններ, նախ-
կին ուսուցիչներ, հարբեցողներ, ձեռնածուներ և ուղիշայներ:

Հենց այնտեղ, իջևանում, նա հանդիպեց վինվորական
հեակիներով մի պատոտոված շորերով դյուղացու: Բարեկա-
մացան: Գյուղացին իր ուլ լինելը հայտնեց դաշտում միա-
սին գիշերելուց հետո:

— Յես իմ փաստաթղթերը ձեզ կտայի, Տակայանագի-
սան, բայց դա չի ողնիլ. յես գնդից փախած եմ: Իմ անունն
է Տանակա, սոսկական զինվոր Տանակա:

— Վճր գնդից:

— Խիմեձի: Հետևակ դուռեղ և: Գուք ճանաչում եք:

Գրանից հետո միասին էյին շքում: Հասան Ոսակի:
Այդտեղ կոնսերվի գործարանում է ապրում Տանակայի հարս-
նացուն: Կանանց հանրակացարանը փակ է: Նեղ պատու-

հաննեքը դեպի ջրանցքն եյին դուրս գալիս: Տանական այդ-
տեղ արդեն յերրորդ ուրն ե, վոր շրջում ե: Պահապանը շատ
անգամ եր նրան փայտով քշել:

Սավառնորդը թքեց ջրանցքում: Մթությունից մի կեր-
պարանք դուրս յեկավ՝ մինչև աչքերը թաշկինակով փաթա-
թած:

— Պարոն սավառնորդ: Պատրաստ ե: Յես այստեղ լապ-
տերի մոտ կկանգնեմ: Այնտեղ ցանկապատում իսկապես վոր
մի ծակ կա, ջուրը դուրս հոսող տեղից քիչ ներքե: Նրա պա-
տուհանն ուղղակի ցանկապատի գլխին ե, գլխավոր շենքում,
ձախ կողմից յերրորդը: Ի նկատի ունեցեք, վոր անկյունի
հետեը պահապան ե կանգնած: Դուք փոքրիկ քարեր կքցեք
լուսամուտին, բայց սովերից դուրս չեք գալ: Դա կանանց
աշխատավորական հանրակացարանն ե: Յես առավոտյան
նշանածիս հետ տեսնվել եմ: Ընդմիջումի ժամանակ նրանց
նախաճաշի եյին տանում: Յես նստած եյի ջրանցքում: Ա՛խ,
ի՞նչպես շունչս կտրվում ե, — վազել եմ: Այ քեզ դժբախտու-
թյուն:

— Յեթե անցնող լինի — սուլեցէք:

— Զգուշ յեղեք, Տակայանդի-սան...

— Լավ: Ինձ պետք չի ճարակություն սովորեցնել:

Նախկին սավառնորդը սողում ե առվով, վեր ե կենում,
թևքով սրբում ե խալաթին կպած կեղտաջուրը:

Ձախից յերրորդ պատուհանն ե: Փոքրիկ քարեր: Գոր-
ծարանի դատարկ բակը: Կուրացուցիչ լապտերն որորվում ե
դարպասի մոտ: Պատերին փշալարե ցանկապատ: Փշալար
դրասենյակի շենքի առաջ: Պահապանի չափածո քայլեր:

Բարը թռչում ե դեպի լուսամուտը: Լուսամուտը կա-
մաց բացվում ե: Մի կանացի կերպարանք սպիտակին ե տա-
լիս:

— Լավ են պահպանում սրանց: Դա անցյալ աշնան
գործադուլից հետո յեն սկսել:

Սավառնորդին ձեռքով են անում: Պատուհանից մի տոմս
ե ընկնում: Դա սպիտակին ե տալիս լուսավորված ասֆալտի
վրա: Ի՞նչպես հասնել դրան:

Այդ մոմենտին անկյունից առկայծում ե մի դեղին կրակ,
և հրազենի պայթյունը դրդացնում ե դատարկ բակը քնարե
ջրանցքների հետ միասին:

Փողոցում սուլոց ե շների հաջոց: Սավառնորդը նետվում
ե առուն, գլուխը դուրս հանում ջրանցքից ե տեսնում դա-
գանակները ձեռներին սալահատակով անցնող չորս վոստի-
կան: Դայլանման չորս խուզարկու շներ ուզում են դուրս
պրծնել մետաղե շղթաներից:

Յերկարատե սուր սուլոց: Կարծես դրանից յերերում ե
ջրանցքի դեղին ջուրը, այնտեղ, ուր լապտերից ընկած շըր-
ջանն ե:

Սավառնորդը պարզորոշ տեսնում ե մոտակա շան վզի
համարակալված վահանակը: Ո՞ւր ե Տանական: Անհետացել ե:
Փախել ե: Վոչ, նրանք դեպի ջրանցքն են գնում:

— Դլորվեց, — հարցնում ե նրանցից մեկը:

— Յես ինքս տեսա: Նա առաջ սուլում եր, հետո փախ-
չում եր, հետո վանդակապատի վրայով ցատկեց ե — թրքմ-
փանց:

— Սատանա: Բան չի յերևում: Զրանցքը մտնել: Ծխա-
խոտ տուր:

— Հաշվետվության մեջ կարող ես գրել. «Հարձակում
կանանց հանրակացարանի վրա: Հարձակվողը խեղդվեց»:

— Եստեղ դրանք կապ ունեն կոմու նիստների հետ: Նրանք
պատի վրայով ամեն բան քցում են: Յես ասել եմ, վոր ես-
տեղ ծովափին ե հարկավոր պահակ ունենալ, վոչ թե բա-
կում: Եղտեղ ի՞նչ ես զոռում, պարոն պահապան: Զեռքիցդ
փախցրիր:

— Եստեղ մինն ել կա: Նա բակն եր մտել: Ի՞մ կարծիքով
նա առվումն ե:

Մավառնորդը չսպասեց, վոր չորս դամփոններն իրանց յերախներն առուն մտցնեն: Նա վազեց սուրբի, բղավոցի, հաջոցի և ատրճանակի արաքոցների աղմկալից ճարճատյունի տակ: Փողոցը կարծես շուտ յեկավ: Սիրաբը կասես կորավ դնաց: Նրբանցք և: Մի ուրիշը... Յերրորդը... Տան մուտք...

Հալածանքը կանդ առավ: Աղմուկը չէր դադարում, բայց չէր ել մոտենում:

— Թշվառ Տանակա: Կարծես կյանքից զրկվեց: Յեվ այդպես զրկելի ձևով, կեղտոտ ջրանցքում: Արդարադատություն... Ի՞նչ ցավ և:

Մավառնորդը դուրս յեկավ տան մուտքից: Շան հաջոցն ողում կախված էր: Հալածողները վորոշում էլին ինչ ուղղությամբ դնալ: Ավելի մոտ են... ավելի մոտ...

Տակայանազին քայլերն արագացրեց: Մի նեղլիկ փողոցի անկյունում քիչ մնաց մեքենայի տակ ընկներ: Ավտոմոբիլային լապտերների սպիտակ լույսն ընկավ սավառնորդի դեմքին, և նա բնազդաբար մի կողմ նետվեց: Ավտոմոբիլը թափով կանգ առավ:

— Պարոն Տակայանազի, — ասացին այնտեղից, դուք միշտ շտապում եք: Մի բոսկ:

Մավառնորդը դարձավ դեպի մեքենան: Այդ բոսկերն անկյունի հետևից սուրկցին:

— Պարոն Տակայանազի: Այստեղ: Այստեղ: Մի վախենաք, ցատկեցեք մեքենան: Պարկըր, լրիվ ընթացք:

Լողարանից և ընթրիքից հետո աշխարհն իր ուրախ կողմով դարձավ դեպի սավառնորդ Տակայանազին:

Թղթակից Մակ Կեննան նրա դեմ նստած էր սիգարի արկղիկը ձեռին և հյուրի վրա վոչ մի ուշադրություն չդարձնելով խոսում էր.

— Դուք քմահաճ մարդ եք: Յեթե յես ձեզ մեքենայի մեջ չառնեյի, դուք արդեն վոստիկանական վարչության

մեջ ընկած կլինեյիք: Յես ձեզ առաջարկում եմ, վոր Յեկրոսպ հասցենմ ձեզ: Բայց դուք քմահաճ խենթ եք:

— Վոչ, Մակ Կեննա, — ուրախուրախ ասաց Տակայանազին, — յես հիրավի միքիչ խելքս թոցրել եմ, ինչպես կարծում եմ: Յես միքիչ բան եմ սովորել այս ժամանակի ընթացքում: Յես չեմ ուզում ձեզ նեղություն պատճառել, բայց...

— Դուք անպայման բանակ մտնել եք ցանկանում, — հառաչեց Մակ Կեննան, — չեմ հասկանում, դա ձեզ ինչի՞ յես պետք:

— Յես իմ նկատառումներն ունեմ:

— Լավ, — ասաց Մակ Կեննան, — դուք նորից կթռչեք Մանջուրիայում, յես այդ գլուխ կրերեմ: Միայն թե... դուք այլևս Տակայանազի չեք լինիլ... Յես կաջողեցնեմ... Ո՛ր, դա լսով դադափար և:

Հյուրի ավագակային բրոնզադուլն դեմքը լայն ժպտով քայվեց:

— Իսկ դա ձեզ ինչի՞ յես պետք, Մակ Կեննա...

— Ի՞նչ: Ե՛, ի՞նչպես ասել: Ե՛, դա ուղղակի զվարճալի յես: Շատ զվարճալի յես:

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

«Պատերազմը տեր առածու զրած տիեզերական կարգի տարրերից մեկն է: Նրանում զարգանում են մարդու աղնավազույն արժանազորությունները, քաջությունը, անձնուրացությունը, հավատարմությունը, պարտականությունը: Զինվորը տալիս է իր կյանքը: Առանց պատերազմի աշխարհը ճահճի մեջ կկորչեր և մատերիալիզմի մեջ կկորչեր:»

Գ Ե Ն Ի Բ Ա Լ Մ Ո Լ Ա Կ Ի

Տոկիոն իր հոտն ու գույնն ունի: Նրա լույսը ամբարձվում է շիրմաների յուղոտ թղթի վրայով վարդապույն կաթի պես:

Հարավային ծովախորշում դառնալով հին ամրոցները ողակել վրա ցրցլող փարոսն է դա: Դա ծովային զինանոցի վրայի պրոթեկտորն է, դա Սինադավա կայարանի շոգեքարշերի հրե աչքերն են:

Յեզ Ծոկիոյի հոտը — դադի և ռետինի, ծովային ադի ծխի և ինչ վոր հրուշակարանի վերնիճի խառնուրդ է:

Դա Ծոկիոն է մեղավոր: Դա նրա լույսը և հոտն է այդու համեստ տնակի վրա: Նա վոչ մի հանդստություն չի բերում այդ տնակում ապրողներին:

Նա ստիպում է յերազել ապագա որերի և փառքի հեռավոր ծանր ազմուկի հետ խառնված մեծ գործերի մասին:

Դա ամբողջովին Ծոկիոն է անում, այդ արծաթագույն ող ունեցող տարրերնակ ուղմա-ծովային քաղաքը:

Ժամացույցը շարունակում էր խաղաղության մեջ հնչել և նվազել, թեև նրան վոչվոք չէր լսում: Նրան վոչվոք չէր ել կարող լսել, վորովհետև գնդապետ Ֆուճինամիի տանը մարդ չկար: Գնդապետն շտաբից վերադարձավ յերեկոյան ժամը ութին մոտ:

Գնդապետը վրայից քցեց իր անձոռնի անրձևոցը և սպասյակին կանչեց: Բայց սպասյակն առավոտովանից արձակված էր: Գնդապետը հիշեց այդ և ստիպված յեղավ կոշիկներն ինքը հանել: Հետո գլուխը դրավ ծորակի տակ և միայն խոզանակը դադաթի վրա սկսվող ճաղատությանը թեթևակի քսելուց և անսպասելիորեն հնչող ժամացույցին նայելուց հետո հասկացավ, վոր տանը մարդ չկա:

Ավելի լավ: Դատարկ սենյակում, ձյունափայլ խորհրդների վրա, լապտերով լուսավորված փոքրիկ սեղանի մոտ, հաճելի յե միայնակ յերեկոյանը անցկացնել՝ ականջ դնելով շոգեքարշների սուլիչներին, շոգեքարշների, վորոնք պսպրում են բոլորովին ծովախորշի մոտ Սինադավա կայարանում:

Ընկերները գնդապետ Ֆուճինամիին անվանում էյին հնատարաղ մարդ: Նրա սենյակում միակ յեվրոպական առար-

կան էր ծանր բարձրադիր ժամացույցը: Նա դրված էր Սաղաղ ովկիանոսի մեծ գուլնդուլն քարտեղի կողքին և խփում էր ինչ վոր վոչ ընտանեկան, այլ հատուկ, խաղաղ-ովկիանոսյան ժամեր: Ծոճանակի համաչափ հառաչների տակ, գնդապետը դրում էր:

«Ճապոնական զինվորական գործակալը կարող է վոչնչանալ այն առարկայի հետ, վորը նրան հանձնարարված է վոչնչացնել: Դա ճապոնական լրտեսության հերոսությունն» չէ, վոր յեվրոպացիներն են հնարել, այլ պատերազմական ժամանակի անհրաժեշտ պայմանն է, վորի ձիշտ սահմանները յերբեք չի կարելի վորոշել»:

Ժամացույցը նորից խփեց և հիշեցրեց, վոր տանը մարդ չկա: Դա սրտնեղիչ և անհարմար էր: Գնդապետը վեր կացավ, խալաթը հետ տարավ և կնոջ սենյակի շիրման բաց արավ:

Աիկոյի սենյակում մեծագույն անկարգություն էր տիրում: Տիկնիկները և ինչ վոր խայտաբղետ մետաքս փալասների մի ահագին քանակություն ցրված էր հատակովը մեկ: Հեծանիվը կողքի վրա ընկած էր մի կուլտ գոտիները վրա: Այս բոլորը նման էր յերկրաշարժի դեպքում շուտափույթ կատարված փախուստի: Գնդապետը կանչեց աղախուն, բայց աղախինը չարձադանքեց: Այն ժամանակ նա ակնոցն ուղղեց և կուցավ հատակին ընկած ծրարը վերցնելու: Ծրարում անհանդիստ կանացի ձեռքով թեք դրված այս տոմսը կար:

«Մեծարգո պարոն Ֆուճինամի, յես իմ տհաս խելքով դրությունը քննեցի և կանխապես խնդրում եմ ինձ ներել ձեր տունը թողնելու և հեռանալու հիմար վորոշումիս համար, գնում եմ վորոնելու միակ յեղորոս, նախկին սավառնորդ Տակայանադի Իցարոյին, վորը ներկայումս ինձ համար ամեն բանից թանգ է աշխարհիս յերեսին: Յես նորից եմ ներողություն խնդրում:

Ինձ համար խիստ ցավալի յեր իմանալ, վոր յեղբայրս իրան այնպիսի տհաճելի դրության մեջ է դրել: Բայց գըլ-

խումս ծագեց այն ստոր և անարժան միտքը, թե յեղբայրս, պ. Տակայանագին, գուցե այնքան ել մեզավոր չե, և վոր գուցե նրան հաջողվի ավելի արդար վերաբերմունք ձեռք բերել զեպի ինքը կամ վորեւ բան անել: Յն շատ եյի ուզում յեղբորս փոխարեն փորս պատուել, բայց ավելի լավ ապագայի հույս ունեմ: Մտանց աղաչում եմ ձեզ, վրաս չբարկանալ: Շատ խորը խոնարհվում եմ ձեր առաջ հարգական մեծարանքով: Ձեր կին Ֆուձինամի Աիկո:

Ա. վեւա ցրված: Ոտորի աղախնին հետս վերցրի՞ս:

— Այդպես, այդպես: Միտեմ: Նախ Ձմառ գործակալը — նրա նամակը ճակատում, հետո այդ հիմարական սոսկական զինվոր — անուհն ի՞նչ և — Տամադա, Տանական... Հիմա յեկ կինս: Հիմա յեկ կինս — Աիկոն: Այդպես, այդպես:

Գնդապետն իր սենյակը վերադարձավ: Նա փորձեց վիշտը մոռանալու համար ծխելով զբաղվել, բայց դա չոգնեց: Այն ժամանակ նա վերցրեց վրձնիկը, բայց յերկու վողորմելի բառ անգամ չկարողացավ գրել: Նա դեն քցեց վրձնիկը և ձեռներով քունքերը տրորեց: Ժամացույցը տկտկում էր: Նա սկսեց յերևակայել, թե կնոջ վերադարձին և սպասում: Տանը խաղաղություն էր տիրում: Տոկիոն յուղած թուղթը վարդազույն կաթի գույներով ներկում էր:

— Ո՛ր, շնատ: Պատերազմ: Պատերազմ: Ո, շնատ լինել: Ծանր մարտիոցների զորքյուն, լարի մեծ կծիկներ, թափվող հող և չինական դաշտերով սողացող գուլնեզույն ամպեր, և ամպերի միջով յերևացող պատուտված գվարթ գրոշակներով զարդարուն տանիքերի բուրձ մուրթներ:

Կեցցե՛ պատերազմը, կյանքի անաջողությունների վարձատրությունը:

Յե՛վ գորշ-կապույտ եսկաղրանների ծանր ծուխը, և՛ ներկած աշտարակների մեջ թնդանոթների դանդաղ դարձող յերախները, և՛ բուստե ծովալճակների վրա փոթորկային վողջյունները: Ծուխ, կրակ, մետաղ, դրոշակ, շեփորներ,

պարող յերկիր: Դա ազատագրությունն է, դա արդարադատությունն է, դա փառքի հրեաանու զորքյունն է:

Ո՛ր, այդ ապագան: Նա յե մնացել:

Լուսարացին գնդապետ Ֆուձինամին պատուհանի մոտ էր: Գնդապետը կանգնած էր, փոքր, ամբակուռ, հանգիստ, պանրի նման դեղին դեմքը վեր բարձրացրած: Կաթնադույն մազադաթի վրա շարժվում էր ծխի ստվերը: Միբա պուրակի հետևը գաղի գործարանում թնդում էր այլեչափը, նրան պատասխանում էյին ծովածոցի նավերը:

Գնդապետ Ֆուձինամին ժպտում էր: Նա ակնոցն ուղղեց, բացեց ժամացույցի դռնակը և սլաքն զգուշությամբ առաջ տարավ: Միտեմը հաղթեց: Որն սկսվում էր:

ՀՈՎԱԶԻ ԽՈՌՈՋԻ ԳԱՂՏՆԻՔԸ

«Ոտո տե բուղա տին, խոո ժեն բու զան ցղյան» (Կավ յերկաթից մեխ չեն շինում, լավ մարդկանց գեներալ չեն դարձնում):

Ձի նա կան առած

1

Հյուսիսային Մանջուրիայի յերկու վերստանոց քարտեղի վրա այդ տեղը նշանակված է հորիզոնականների խիտ կուտակումով¹:

Քարտեղի աջ կիսում հորիզոնականները նոսրանում են և հազիվ են կաշում գեպի հարավ իջնող և քարտեղի յեղրի հետևը կորչող կապույտ ժապավենին: Դա Լյուդախե գետն է: Հարավից հյուսիս սայրի պես դետի հովիտն է մտնում մի շերտավոր վորոշակի գիծ: Նա վերջանում է սև քառակուսիով: Դրանց կողքին այս մակագրությունն է արված. «Հովազի

¹ Հորիզոնականներ — միտեանակ բարձրություն միացնող գծեր քարտեղում:

խոտոչ ավան»։ Յեւ ինչ վոր շտարայինի կարմիր մատիտը քարտեզի վրա այս ծանոթությունն է գրել. «Հովազի խոտոչ յերկաթուղային ճյուղը — դեպի Լյալյախեցղը կայարանը»։

Ուրեմն դժ յե յերեկի Հովազի խոտոչը։ Բնականում դա ավելի քիչ ազդու յե յերեւում, քան քարտեզի վրա։ Քարտեզը չոր և զայրացած է։ Նույն կարմիր մատիտը թախծագին նկատում է լուսանցքում. «Սոտոչն անմատչելի յե ամեն տեսակի զենքի համար։ Միայն յերկաթուղու կողմից»։ Հորիզոնականների վոլորները, վորոնք ծովային փոթորկալի ալիքներ եյին հիշեցնում, չարագուշակ որորվում են Հովազի խոտոչի շուրջը։

Նա պատված է դանդուր բլուրներով և թեք ապառամներով, վորոնց վրա սփռված են չոր փոթորկահար ծառեր և ցախ. նա սուզված է լեռնային կուսական անտառների խորքում, վայրի մայրիների և մանջուրական պատատուկներով փաթաթված տկոզնիների սաղարթում, նա անմատչելի յե բոլոր տեսակի զենքերի համար, ապացույց այս բանի՝ առանց վորեւե բավականության ստորագրել են ստորին յեղրին Անդրամուրջան զինվորական շրջանի ուղղամտեզագրական վարչության պետ գլխավոր շտաբի զեներալ-մայոր Խան-Ջամատը և կիսագործիքային նկարը հանող տեղակալ Սվետլովսկին։

Տեղակալ Սվետլովսկին հող է տարել գլխավորապես այն մասին, վոր քարտեզի յեղրերում հորիզոնականները միանան հարեան պլանշետի՝ հորիզոնականների հետ։ Ընդհանրապես մոծակների ցանցում առանց մի կաթիլ ալկոհոլ գործածելու մի ամսյա նկարառնում է նրան իր աչքում հերոս եր դարձրել ուստի նա քարտեզի հյուսիս-արեւմտյան անկյունում համարձակորեն մի սպիտակ բիծ եր թողել՝ կողքին գրելով. «Նկարառման համար անմատչելի յե»։ Այդ բիծն ըն-

¹ Պլանշետ — քարտեզի մի մասը։

կած է անմիջապես «ժ.-շ. կու. և խրճ.» մակագրությունից ձախ։ Բնականում այդտեղ անտաշ քարից շինած մի փոքրիկ տաճար կա։ Մուտքի մոտ, ծառերի վրա ճոճվում է կարմիր կտավի կտորներ այսպիսի մակագրությամբ. «Լեռների և անտառների պարոն վոզուն։ Խնդրողին տնւր։ Իմ ուրախությունը շողողում է, ինչպես ձկան թեփ, ինչպես վոսկե-գույն փայտանի փետուրները, անտեսանելուն հանդիպելիս»։ Մուտքի մոտ ընկած է մի տափակ քար և խնկելու մոմերի մի կույտ։

Դիմացը, մոլախոտով ծածկված լեռնային հեղեղատի չոր հունում մայրու կեղևից շինած մի փոքրիկ վրան կա։ Վրանից քիչ ցած ծառի կեղևը պոկված է և հյուսթը դուրս քցած փայտի վրա պատառաքաղի պես մի բան է ճանկատելով փորված։

Ամեն բանից դատելով՝ փոքրիկ տաճարն իրանից ներկայացնում է մի լեռնային կռատուն, «պարոն վոզին»՝ իհարկե՝ վազրն է, իսկ տեղակալ Սվետլովսկիյի արտահայտությունը պետք է հասկանալ այսպես. «ժեն-շենահավաքի բուդդայական կռատուն և խրճիթ»։

Պարոն տեղակալը պատենություն եր ունեցել այդ կռատան մոտ լինելու։ Դա ամառն եր, դեռ մինչև անձրևների շրջանը։ Փչում եր «խուանդու» — քամին, վորը Մոնղոլ լիայի տափաստաններից դեղին փոշի յեր բերում, և խիտ, ծանր ամպերից պաշտպանվել ուզելով՝ տեղակալ Սվետլովսկին թեքվեց մի կողմ մի մարդու ձայնի վրա, վորը ոնգային ֆալցետով յերգում եր.

Յգ' ա յա...

Յգ' ա յա...

Տո մա ցզըի

Յգ' յա խա...

Կոն շի դրի ֆա մա

Կուղըի չեեր ա կայա

Լան շուր, տան շուր

Ա յա խա...

Ամբակազմ, մկանոտ ծերուկը, վոր նստած եր խրճիթի շեմքում, դեպի տեղակալը վերաբերվեց այնպես անտարբեր, ինչպես դեպի քամու նոր թափը: Նա շարունակեց յերգել:

— Նի-խառ¹, — ասաց նրան Սվետլովսկին՝ կարճատեսյա լեռնային ձիուկից իջնելով:

— Ա՛, նի-խառ, — անվրդով պատասխանեց ծերուկը և մտիկ տվեց բլուրներին:

— Կարելի՞ յե այստեղ կանդ առնել:

Ծերուկը գլխով արեց:

Տեղակալը մտիկ տվեց խրճիթին: Նա մաքրությամբ չէր փայլում, բայց տեղակալը յերկու որ թամբից չէր բաժանվել:

— Լյալյաթեցղբին հեռու յե:

Ծերուկը մատը վեր բարձրացրեց: Տեղակալն այնպես ել չհասկացավ, թե դա ժամ եր նշանակում, թե, թե՞ կիրովետը: Նրա ուղեկիցը բոթեց կողքին և կատաղի փսփսաց.

— Գնանք: Սա տեղ չի:

Նրանք առաջ շարժվեցին, և միայն ճանապարհը պարտավելուց ուղեկիցը բացատրեց.

— Դա Սո Սինն է:

— Ի՞նչ Սո Սին:

— Ժեն-շեն² հավաքող: Յես նրան իսկույն ճանաչեցի: Նրան ամեն տեղ ճանաչում են, Սուևգարիից մինչև Կորեա: «Սո Սին» նշանակում է «կայծ», դա մականունն է: Նա այստեղ արդեն վաղուց է թափառում:

— Իսկ դուք ինձ ինչո՞ւ հրեցիք:

— Անդուրեկան ծերուկ է: Նրա մասին ասում են, թե հիպոսոսացնող է և խուճխուճների հետ է ընկնում: Հանկարծ փորձանք չբերի: Կայարանն ել այնքան հեռու չի:

¹ Վոզմոլյն:

² Ժեն-շեն—թանգազին բուժիչ արմատ, վոր գործ է անում չինական բժշկության մեջ. ուղիտակտիվ է:

— Դուք այդ վորտեղից գլխեք:

— Մատը բարձրացնելուց: Դա նշանակում է, թե ձին մի անգամ պիտի կերակրել: Յերեկոյան այնտեղ կլինենք...

— Սո Սինի մասին ելի ի՞նչ են ասում:

— Գիտե՞ք... չինացիներն առակ՝ են սիրում: Միանգամայն դատարկ բան: Ե՛, նրա մասին ասում են, իհարկե, թե նա կախարդ է և վոր տայգայի բոլոր գազաններն ու թռչունները ծառայում են նրան: Ասում են, թե նա նույնիսկ «վազրի յեղրայր» է: Համենայն դեպս նա բոլոր հիվանդություններն իսկապես բժշկում է:

Սվետլովսկին ցավեց, վոր հետ չվերագարձավ, բայց արդեն ուշ էր: Հինգ ժամից հետո իրոք ուղեկիցները տեսան ապրանքային «կիու», վոր փնջում եր Հովազի վորջի յերկաթուղային ճյուղի վրա:

Վերջերում Սարբինում պատմում էյին, թե Սո Սինը կորել է: Յերբ ճապոնական զորքերը Սարբինը վերցրին, դրանից հետո շուտով Սո Սինը չքացավ: Համենայն դեպս նրան այլևս չէյին տեսնում Արևելյան Մանջուրիայի գյուղերում: Զինացի վորսորդները, վորոնք վորպես աշխարհիս դերում: Զինացի վորսորդները, խորհրդավոր պատմություններ են սիրուր վորսորդները, խորհրդավոր պատմություններ են սիրում, ասում էյին, թե այդ ժամանակվանից վազրերն ու հովազներն արտասովոր կատաղի և խելոք են դարձել: Այսպես որինակ՝ Բինսայանի գավառում այսպիսի դեպք է յեղել. վազրը հետ մնաց զինվորի վրա հարձակվելով՝ վոչ միայն նրան սպանեց, այլև նրա գրպանից հանեց բոլոր փաստաթղթերը և դենքը տարավ:

Սո Սինի անհետացումը Սարբինի լրագիրները չէյին նշանակել միայն այն պատճառով, վոր նա գուգազրվեց գեներալ Յան Հայցզինի նոր սլաքործություններին: Գեներալ Յան Հայցզինի անհետացումը անձրևների ժամանակը հաս-Հուլիսի սկզբին, դեռ նախքան անձրևների ժամանակը հասնելը, Սարբինի թերթերը լցվել էյին անաղին վերնագիրներով. «Հո վազի թոոո չի սար սափն երը: Բանդիտ»

ների արյունոտ վորջը: Յան Հայցղինի չորս հազար խուսխուղներ կիտվել են Լյալյախեցղբի կայարանից դեպի հյուսիս: Բանդիտային միակ զրահագնացքը Մանջուրիայում:

Միքանի որից հետո նույն թերթերը վերնագրերի նոր սերիայով լցվեցին. «Սուսն Յատուենի պատգամները» խորհրդավոր զրահագնացքը Լյալյախեցղբի կայարանում: Կայարանային շենքերը կրակի մեջ: Ճապոնական հրամանատարությունը վճռել է մինչև անձրևներն սկսվելը վոչնչացնել անմատչելի վորջը»:

Հովազի վորջը բոլոր տեսակի գեներերի համար մատչելի չեր միայն մի կողմից: Բայց հենց այդ կողմից էր, վոր ամենից դժվար էր վերցնել այն: Դա յերկաթուղին էր:

Այդտեղ էր կանգնած նշանավոր զրահագնացքը: Լուրեր էին պատվում, վոր խուսխուղներն ականներ են զրել Հովազի վորջ յերկաթուղային ճյուղն անցնող ամբողջ կիրճում: Ուստի խուսխուղների բունը վոչնչացնելու համար ուղարկված ճապոնական բրիգադի գործելակերպն աչքի յեր ընկնում մեծ զգուշավորությամբ: Խուսխուղներին վոչ միայն լեռներում չէին փակել, այլև նրանց թույլ էին տալիս կայարանը գալ, հրդեհել կայարանային շենքերը և փչացնել յերկաթգիծը:

Հուլիսյան մի ուր ճարխոտերի խիա թփուտներում, վորոնք շրջապատել էին «Ժ-չ. բուդ. կուտ. և խրճ.ձ-ը, մի թեթև սուլոց լավեց, և զրահ հետևից վրանից դուրս նայեց քղզղված մազերի անաղին գլխարկով մի ծեր գլուխ:

Ծերը շուրջը նայեց և ձեռքով արեց: Թփերի թավուտից դուրս սողաց յերթի լրիվ զգեստով մի ճապոնացի նորակոչ: Նա մոտեցավ ծերին և հարգանքով գլուխ տվեց:

— Ի՞նչ ես բերել, — ասաց Խո Սինը:

— Թուղթ, — պատասխանեց նորակոչը մաքուր չինարեն: — Ինձ ուղարկել էյին կայարան:

— Ճապոնացիների մոտ:

— Ճապոնացիների մոտ:

Ծերուկը գլուխը տմբտմբացրեց:

— Ո՞վ էր ուղարկել:

— Ինքը գեներալը:

— Թուղթը տնր:

Սուրհանդակը ծոցից մի թուղթ հանեց և տվեց ծերունուն:

— Չե, վոչ այստեղ: Վրանը մտիր, այնտեղ կարող ես հանգստանալ, — ասաց Խո Սինը: — Ի՞նչ են ասում վորջի մասին:

Տղան լեզուն ծալացրեց:

— Ո՞ր, պարոն Խո Սին, ամենքն զրաղված են խաշխաշուլ: Այս որերս քաղում են: Լավ է բերքը:

Խո Սինը մոպյվեց:

— Իսկ բացի խաշխաշից ելի ինչո՞վ են զրաղված նրանք:
— Ուրիշ վոչնչով: Գեներալն ասաց, թե սպիումը կծախենք և կհարստանանք¹: Դրամական միջոցներ կունենանք և կկարողանանք մինչև ձմեռ դիմանալ: Դա ամենապլխավորն է:

— Իսկ բժիշկը:

— Բժջի մասին գեներալն ասաց, վոր յեթե վորեև տեղ ելի հավաքույթ տեսնի, ուր կարմիր խոսքեր խոսելիս լինեն, նա բոլոր մասնակիցներին ճապոնացիներին կհանձնի: Նա ասում է, թե մինչև այժմ մենք լավ ենք դիմացել միայն այն պատճառով, վոր նա ժամանակին ցրեց բժիշկ և, ներեցեք խնդրեմ. խոռոչից դուրս արավ Խո Սինին:

— Նա դեռ կցավի, վոր ինձ այնտեղից դուրս և արել: Յես կասկածներ ունեմ...

¹ Ոպիումը խաշխաշից և սոսցվում:

— Դուք մեզ վրա յեք կասկածում:

— Վոչ թե ձեզ վրա, այլ Յան Հայ-ցղինի: Լավ ե, վոր թուղթը դու յես բերել ինձ:

Ծերուկը ծրարը պատուեց: Սուրհանդակը նստեց գետնին և բարակ ֆալցետով մեզմ յերգելով՝ սկսեց հեակիներն ուղղել:

— Յես կայարան կգնամ, — յերգում եր նա, — ճապոնացիներն պետի մոտ, յես կգտնեմ նրան և, այժալա, նա ինձ յեֆրեյտոր կդարձնի...

— Դու չես գնալ, հիմար, — ասաց Խո Սինը՝ նամակը ծալելով, — յեթե նա քեզ նույնիսկ մարշալ դարձնելու լինի: Դու ուրիշ կողմ կգնաս: Դու կգնաս գյուղ և կհանձնես այս նամակը, վորպեսզի Խարբին հասնի:

— Իսկ գեներալը:

— Քանի վոր յես եմ ասում, ուրեմն պետք ե այդպես անել: Գեներալն ուզում ե ճապոնացիներն հետ բանակցություններ վարել:

— Գեներալը:

— Այո: Յան Հայ-ցղինը: Դու կայարան արդեն առաջին նամակ տանողը չես: Մեկին յես անցյալ ամիս բռնեցի: Յերբ յես չինացի մարդկանց այս հովիտն եյի հավաքում, ասում եյի, վոր զինվորականները և որենսպետները մեզ լավ որի չեն հասցնիլ: Նրանք ինձ չլսեցին և իրանց մոտ ընդունեցին գեներալին իր հրոսակով: Նրանք բանն այնտեղ հասցրին, վոր յես այնտեղից հեռացա, վորովհետե գեներալը վորոշել եր այնտեղից քշել ամբողջ այդ ռազմական թափթիուկներին՝ և բջի մարդկանց: Իսկ հիմա գեներալը...

— Նա համաձայնության ե գալիս ճապոնացիներն հետ:

— Սկսում ե համաձայնության գալ: Յես այստեղ մի նամակ բռնեցի, վոր ուղարկել եր նրան մի ճապոնացի պետ: Վոչ թե կայարանի, այլ ավելի կարեոր պետ, Խարբինից:

Ախոսս վոր նրա ազդանունը կարգալ չեմ կարողանում: Դա նրանց ֆուդուտունն¹ ե, նրանց շտաբից:

— Ինձ հրամայված եր գնալ ուղղակի ճապոնական պահակները, — ասաց տղան, — և այդ մասին վոչ մեկին բան չասել: Բայց յես գիտեմ, ինձ բջիջում սովորեցրել են, վոր այսպիսի դեպքերում միշտ պետք ե այստեղ ներկայանալ: Գեներալի ֆանդայում ինձ դիտմամբ ճապոնական տարազ սովեցին, վորպեսզի չգնդակահարեն և...

— Լավ ես արել: Դու նամակը կտանես մյուս կողմը: Իսկ յես ստիպված պետք ե լինեմ գալ ձեր բանակը, վորպեսզի վերջին անգամ խոսեմ Յան Հայ-ցղինի հետ այդ խաշխաշի պատմության և նրա գրագրության գործերի մասին:

— Նա ձեզ կկալանավորի, — ուրախ-ուրախ ասաց տղան, — նա արդեն յերկու անգամ խոստացել ե: Նա ասում ե, թե այդ կոմունիստները և գյուղական թամբալները...

— Լավ: Յես գիտեմ, թե նա ինչ ե ասում: Կտեսնեմ, թե ինչպես ե նա ճապոնացիներին տալիս հազարից ավելի մարդ: Նայիր, տեսնում ես անա այնտեղ...

Դա մուգ-գորշ մի շերտ եր՝ յերկու գանգուր կանաչ բլուրների արանքում կախված: Բաց-մանուշակագույն հուլիսյան յերկնքում նա գրեթե աննկատելի յեր:

— Վաղն անձրե կլինի: Այդ խաշխաշից՝ իհարկե՝ բան չի դուրս գալ: Դա հնարել են, վոր գլուխները մտցնեն: Գեներալն շտապում ե, վորովհետե հեղեղների ժամանակը հենց վոր սկսվեց, մեր բանը կգժվարանա: Դու շավղում մարդ չտեսար:

— Վոչ վորի:

— Հետքեր ե՞լ չկային:

— Վոչինչ չկա: Յեվ բոլոր ճյուղերն իրանց տեղն են:

— Յեթե ճապոնացիները ճանաչեցին այդ շավիղը, նրանք հենց վաղն այնտեղ կլինեյին, և գեներալն արդեն ծառից

¹ Ֆուդուտուն — գեներալ-մայոր:

կախում կլինեն: Նա պետք է ինձնից շնորհակալ լինի: Բայց
յես նրան չե վոր պահպանում եմ, այլ այն մարդկանց բաղ-
մուխունը, վորոնց յես այստեղ բերի դարնանը: Յեկ յես
նրանց այստեղից դուրս կբերեմ, վորովհետեւ յես Սինն եմ:

2

Գնդացիրային համարային վաշտերը բահիկներով փո-
րում եյին հեղուկացած գետինը, վոր նման էր թանձր սո-
սինձի: Հեկիկներն ու անդրավարտիքները ծածկվել էյին
զազրելի դեղին խոլոսով: Անձրե եր գալիս:

Գնդացրորդներին առավոտյան նորից զարթեցրեց փող-
հարը: Վրանների մոտով կատաղի հեղեղատ էր վազում, իսկ
նրա մեջ ցատկոտում էյին քշված լծասարքեր և ոմբարկղ-
ների տախտակներ: Այն փոքրիկ հովիտը, վորի մեջ տեղա-
վորվել էր վաշտը, յերեք ժամում փոխարկվել էր կատաղի
լեռնային գետի: Ջրային դեղին սյունը մոնչում էր, փըր-
փրում և քարերը գլորում: Յենթասպա Սետցուն մինչև գո-
տին ջրի մեջ կանգնել, ողում թափահարում էր բուռնցք-
ները: Անձրեը շրմփում էր, շուրը մոնչում, շեփորը հնչում:

Սամուրայյան վաշտի լուի սոսկական զինվորները դըժ-
վարությամբ դուրս քաշեցին վրանները: Բերին շտարի թաց,
թամբերը վերցրած ձիերը:

Յենթասպաներն աշխատում էյին իրարից ավելի բարձր
գոտալ: Ձիաների լայն, փայլուն գավակներից գոլորշի յեր
բարձրանում: Յերրորդ որն էր, վոր անձրեն անընդհատ
թափվում էր, շոգ էր, լպրծուն հողը սողում էր վոտքի տակ:
Ճամբարներ, պատերազմ, ձիեր, կեղտոտություն:

Առավոտյան ժամը ութին լուսացավ:

— Ինձ թվում է, վոր միջատները քրտնքից են ծըն-
վում, — ասաց Կավամուրան, — յես վախենում եմ վոջոտ-
վեմ: Դու ասում ես՝ դուրս թռավ: Ե՛հ, ջհաննամը դնա: Անձ-
րեը դադարել է:

Մարդիկ պահակային նեղվածքում շարժվում էյին, ինչ-
պես քնաթաթախ ճանձեր:

— Դուրս թռավ, — ասաց Մորիտան, տես, վիրածի պես
դնաց: Հեյ, ելի հի ունի չոր ծխախոտ, դասակ:

Ծիծաղ հնչեց: Ինքնաթիռը բոլորովին ցածր էր թռչում:

— Չանձրացել ես: Կաց, դեռ մենք հողի մեջ կմխվենք
և կսկսենք հող ծամել: Յես արդեն չեմ հիշում, թե ինչ-
պես եմ քնել անկողնում: Մեղ խարեցին: Ո՞վ ունի թաց
ծխախոտ, տվեք դոնե ծամեմ: Ի՞նչպես է կոչվում: Ջինվորի
կյանք:

— Տեսեք խնդրեմ, — ասացին փամփուշտակիրները, —
կասես թե նա ուղում է մեր գլխին նստել: Հեյ, եղտեղ,
Խուռմայա, ի՞նչ ես գլուխ տալիս:

Ինքնաթիռը նիզակող դիրք ստացավ: Վոչ ավելի քան
տաս մետր, գլուխներից վեր, յերեացին մասսիվ անիմները:
Դոռոցը խլացնում էր բոլոր խոսակցությունները:

— Խուռմայա: Մի կոսնար: Ձի ջարդիլ: Հ՛ոյ:

Ինքնաթիռը մի յերկար ճերմակ հոսանք արձակեց, վորն
ողի մեջ քիչ կախ մնալով՝ մանր թղթիկների բաժանվեց:
Ուրախ ճերմակ մեղունների պարի պես, դողդողալով և
գլորվելով՝ նրանք իջնում էյին դեպի պահակային ուղե-
փակը:

— Յերևի նոր կո՛չ է, — գոչեց Մորիտան: — Պարոն փամ-
փշտակիրներ, հասեղ բերեք, ամբողջ դասակին հերիք կանի
իրև ծխախոտի թուղթ: Ա՛յ, եստեղ, թփերում մի ամբողջ
կապոց: Չախ կողմը:

— Սամուրայյան վաշտը, — ասաց Կավամուրան՝ հորան-
ջելով, — պատերազմից պատերազմ, ցրտից անձրե, ձյունից
ցեխ, զինվորական...

Հնչեց մի դղրդյուն: Ինքնաթիռը դուրս լողաց անտա-
ռակի հետևից և ուղղվեց դեպի բարձր՝ կարծես մի բանից
վախենալով:

— Այ՛, — բոռաց Մորիտան: — Մտիկ արեք ամենքդ, այ ձեռնածո՛ւ, նա անիվը կտարեց: Հենց եղպես և վոր կա, կտարեց: Ե՛, սա ձեռնածո՛ւ յե: Հիմի նա կորավ գնաց:

— Կպել և յենթասպայի հետեից: Բանը բ՛՛ւրդ և:

Ինքնաթիռը գնում էր կտրված շասսիով: Յածում նորից բորբոսացին յենթասպաները: Փոթաեղակալ Սոգավան դուրս վազեց բլուրը՝ դիտակը ձեռին:

— Խելագար: Լավ և, վոր ամբողջ մեքենան չջարդեց: Հիմա սրա բանը վերջացած և: Յերեի անսիրտ սավառնորդ և:

Հնչեց շեփորի յերկարատե ձայնը: Սանիտարական ավտոմոբիլ ելին կանչում:

— Եստեղ անհասկանալի ի՛նչ կա, — ասաց Կավամուրան: — Գյուղական դորտեր: Նորակոչներ: Հիմա նա չի կարող իջնել: Նրան յերկու կես և մնացել միայն. մի անիվ և անթացուպը: Եստեղ ի՛նչ անհասկանալի բան կա: Ապա մի փորձիր յերկու կեսի վրա իջնել — գլուխդ կջարդես: Յես գիտեմ, վոր ասում եմ: Առանց յերկու անիվի գետնին նստել չի կարելի: Ա՛յ, սանիտարական ավտոմոբիլ են կանչում: Ա՛խ, հիմարը կորավ գնաց: Եդ թղթերում ի՛նչ կա գրած, Մորիտա:

Մորիտան նստած, յերկու ձեռքում մի թուռցիկ բռնած, բերանը բաց, առանց ձայն հանելու:

— Ձեզ ի՛նչ պատահեց:

— Ո՛, — ասաց վերջապես Մորիտան, — լսեցեք, լսեցեք. «Ճապոնիայի և Չինաստանի բանվորներ, գյուղացիներ, ժողովրդական մասսաներ: Մեր մեջ ազգային առելությունը տեղ չուներ: Մեր թշնամին ընդհանուր թշնամի յե: Մեր ուզին ընդհանուր ուզի յե: Թող կորչի՛ կեղծ «հայրենիքի սիրո» պրոպագանդը, վոր մեր միացյալ կեղեքիչները — իմպերիալիստները և գեներալները...»

— Դեն քցեցեք թղթերը, — գոռում էր Սետցյուն՝ ճանկոտելով ժայռը բարձրանալով և ընկնելով: Լողացող կավը

նրա վտանների տակ նստում էր: — Թղթերը դեն քցեցեք, գո՛մե շներ, եշեր:

— Ձոկի պարսն հրամանատար, — քաղաքավարությամբ ասաց Մորիտան՝ թուղթը հետեից Կավամուրային տալով, — պարսն պետ, կհրամայե՞ք ոգնել ձեզ:

— Ձհաննամը կորիր, — վոռնում էր Սետցյուն՝ թըրպրտալով թեքության վրա:

Համարավորները հետաքրքրությամբ հետևում ելին: Սետցյուն վեր կացավ և նորից ընկավ: Վերջապես նա ձանձրացավ և ատրճանակը հանեց:

— Ով վոր եդ շան թղթերին ձեռք տա, տեղը կթողնեմ: Յեֆրեյտոր Նոգուցի, դասակը ման յեկեք և թղթիկները հավաքեցեք: Եշեր: Ջարդուփշուր կանեմ:

Ինքնաթիռը կարծես ծաղրելով վաշտում տիրող իրաբանցումը՝ նսվում էր բարձրում, ցածրանալով և նորից վեր սլանալով: Շեփորը շարունակում էր հնչել: Այս անգամ նա կտարատվող դայլայիկներով տազնապ էր նվազում:

Անցավ հինգ բուպե: Տաս բուպե: Հարեան դասակում մի յերկանիվ կողքի քցեցին և անիվի վրա դրեցին գնդացիորդ: Հրաման հնչեց: Բերանը դեպի կարմրաշեկ յերկինքը դարձրած «գոչկիսը» ցնցվեց և ամպերի վրա կարճ կրակ բացեց:

Այն ժամանակ ինքնաթիռը ցնցվեց և սահուն շրջան գծելով՝ սկսեց իջնել դեպի թշնամու բանակը:

— Խենթ և, — ասաց Կավամուրան, — հիմի կտափակվի: Դա չինացի յե: Յերկու կեսի վրա...

— Վոչ, վոչ, — բարբանջում էր Մորիտան, — դա բորբոսի չինացի չի: Դա չի կարող չինացի լինել: Չի կարող լինել...

— Ձեր կարծիքով դա մեր ինքնաթիռը կարող է լինել: Դա ուղղական խորամանկություն և, դա դիմակավորումն և... Տեսեք: Նա խենթ է վոր կա: Են ել ի՛նչ խենթ: Նա... նա յերկու կեսի վրա նստեց: Նստեց: Ազնիվ խոսք...

Հանկարծ Մորիտան հոհաց: Ամեն ինչ մոռացած՝ նա վռտքի վրա ցատկեց և սկսեց պարել՝ յերկու ձեռքով սաղա-վարդին խփելով:

— Ո՛-հո-հո: Ո՛-հո-հո: Հիմար եմ յես, հիմար: Ավանակ: Գոմեջ: Դա նա յես: Նա:

— Ո՞վ:

— Միակ մարդը ճապոնիայում: Թուշող կրակը: Տակա-յանագին: Նա մեզ վրա թքում եր:

3

— Կանգ առնել, — մրթմրթաց յեֆրեյտորը դեպի խոտի մեջ, — չչարժվել:

Շավղում վոչ վոք չկար: Թփերը կուցած եյին անձրևից Տասերորդ որն եր, վոք յերկնքից անընդհատ հեղեղ եր թափվում: Հարևան բլուրները մառախուղի կուտակումներ եյին թվում, ելեկտրականությամբ լցված կապույտ ամպերի նման: Հողը չլմփում և մոմոում եր մարդու վոտ մինչև ծունկը ներս քաշելով և ծածկելով անդրավարտիքի և հե-կինների մեջ մտնող կպչուն զանգվածով:

Անիծված Մանջուրիան, վոք ձմեռը սառնամանիքից քա-րանում և, կարծես աշխատում եր մինչև հիմքը հալվել: Գի-րինի գավառի ճանապարհներում անհույս խրվել մնում եյին մեծ գլխարկավոր մեթերով պատած ծանր անիվներով չինա-կան ահագին սայլերը: Չինացի բեռնատարները ծուլ-ծուլ և բարեխղճորեն հայտնում եյին: Կապի ծառայության մոտո-ցիկլները ցեխից ստիպված եյին լինում ձիերով հանել: Հուժկու ջրվեժներ եյին թափվում կատաղությամբ լեռնա-յին նեղ գետակները: Գնացքները կանգ եյին առնում ուղե-բաժանումներում և յերկար վոռնում ամայի ջրի ահեղ սրփ-ոտցի առջև:

Պատերազմը և շփոթը վերջ չունեյին: Սամուրայան վաշտի հետախույզները փորսող եյին տալիս՝ բերաններից

ցելս թքելով և պարկերի ու ծալած գրատների ծանրության տակ փովելով: Ցեխը ոձիքի տակերն եր մտնում: Դեմքերին ցեխ եր քսված: Ցեխը հոսում եր, կաթում, կախվում, մատ-նում, գլխներին փորձանք բերում:

— Սամուրայների շավիղն և, — մրթմրթում եր Մորի-տան:

Շավղում վոչ մի կենդանի արարած չկար: Յեֆրեյտոր Նոգուցին փորձեց արմունկների վրա հենվելով վեր կենալ և ծանրությամբ մի կողմ քշվեց՝ հետևից տանելով Կավամու-րային և Մորիտային: Թփերը ճրճաացին: Հեռվում շավիղի թեքվելու տեղը ճապոնական տարազով մի մարդ յերևաց: Հետախույզների խումբը սառած կանգնեց: Չինվորը ծունկ չոքեց և առանց շտապելու փակադակը չխկացրեց: Նրա կող-քին սաղարթի միջով շողաց մի յերկրորդ հրացան, և բարձ-րացավ գոգգված մազերով մի ծեր գլուխ:

— Հեռ, — գոչեց Նոգուցին: — Դա խուճխուճներ են:

Նա վեր ցատկեց, սայթաքեց և հայհոյելով գլուխը: Մարմինների կծիկը թրպրտում եր լպրծուն կավի վրա: Վոչ առաջ գնալ եր լինում, վոչ հետ: Կավամուրան գլուխը բարձ-րացրեց և տեսավ յերկու սև շրջանակ՝ վրան նշանատու-թյան հատիկներ: «Պատերազմը վերջ չունի», թուլորեն մտա-ծեց նա:

Միքանի դարկ լսվեց, և ջերմ խավարը միանգամից պա-տեց սոսկական զինվոր Կավամուրայի գլուխը: Նա նուճնիսկ կրակոցը չլսեց: Նրան թվաց, թե քնած և ծանր հեղձուցիչ բնով, ականջներն և մտնում մի ոնգային, ձանձրացուցիչ կեղծ ձայն, և յերբ աչքերը բացեց, այդ ֆալցետը կողքին հնչում եր:

Յգ՛ ա յա...

Յգ՛ ա յա...

Տո մա ցղը

Յգ՛ յա խա...

Դա վրան եր կամ տեղակալ Սվետլովսկիյի վորոշմամբ՝ «ժ.շ. խրճ.»-ը: Գլխավորերը սաստիկ թրխկում էյին անձրևի կաթիլները: Սոսկական զինվոր Կավամուրայի վորտը դրված եր ձերուկի ծնկներին: Խճճված դուխը կոացած եր վերապի վրա:

— Սա ի՞նչ է, — ասաց Կավամուրան:

Ծերուկը նայեց նրան և ձեռը թափ տվեց:

— Ե՛, — ասաց Կավամուրան, — նա ինձ չի սպանում, չե՛:

— Մտքովը ել չի անցկացնում, — պատասխանեց Մորիտայի ձայնը, — բայց նա շատ տարրինակ բաներ և անում:

— Մորիտա, դուք այստեղ եք:

— Այստեղ եմ: Դուք աջ վորտի հետ եք չարչարվելու, իսկ յես ձախ: Մեզնից վորի՞ բանն և լավ:

Մորիտան պատկած եր մեջքին և ծխում եր: Նրա վորտը փաթաթված եր փալասով և ընկած մեծ գնդի պես:

— Նոգուցին թեթև և պրծել, — ասաց Մորիտան, — նա հետեղ անկյունումն է: Կարծեմ քերծված և ստացել: Ենպես եր յեղել, վոր մենք յերկուսս նրա վրա ընկած ենք յեղել, յերբ չինացիները կրակել են: Պետերի բանը միշտ լավ է:

Ծերուկը ծղոտի կույտի տակից մի վոսկրե արկղիկ հանեց. բանալով և մատով կինամոնավոսկեզույն մի սպեղանի վերցնելով՝ քսեց Կավամուրայի վորտին ընկած փալասին: Ապա փալասը մատով սեղմած՝ նա սկսեց վորտը յերկզակապել: Կավամուրան բառաչեց:

— Մի անհանդատանաք, — ասաց Մորիտան, — յես դա արդեն մի անգամ տեսել եմ: Դա լավ բան է: Դա ժեն-շեն է, վոր իրանք անվանում են «պան-ցույ»: Լսե՛լ եք: Դա շուտ և լավացնում: Ծերուկը յերևի իրանց բծիչին է: Նա ինձ մի բուսաջուր տվեց խմելու, և ցավս իսկույն թեթևացավ: Նա վատ դիտավորութուններ չուեի:

— Պան-ցույ, — զրականապես գլխով արեց ձերը և ծըպ-պացրեց: Վիրակապը վերջացել եր:

— Սրանք ինչո՞ւ յեն մեղ բժշկում, — ասաց Կավամուրան: — Եստեղ խարդախութուն չկո՞ւ:

— Զհաննամը, — անտարբեր պատասխանեց Մորիտան: — Յես եստեղ պակեկ էյի ու մտածում. առանց ուսանողի մնացել էյինք քառասունութ հոգի: Առանց Տանակայի հին դորակոչից մնացել ենք ուղիղ քառասունյոթ: Քառասունյոթ: Քառասունյոթ սամուրայներ: Յերեք սամուրայ գերի յեն: Ել ի՞նչ պատերազմ:

4

Փանգալից դուրս յեկավ Յան Հայ-ցղինը: Նոնակներով պատած յերկու թիկնավետ հսկաներ մերկ թրերով նրան ուղեկցում էյին: Գեներալը գլխարկը վերցրեց և խոնարհեց իր հստակ արտակը:

— Վողջո՞ւյն քաջ մարտիկներին, — ասաց նա: — Ինչո՞ւ յեք հավաքվել, ի՞նչ կա, ինչո՞ւ յեք աղմկում:

— Այդ յես եմ մարդկանց հավաքել, — պատասխանեց Խո Սինը, և նրա խճճված դուխը յերևաց առաջին շարքերում: — Պարոն գեներալ, մենք պայմանավորվել ենք, վոր մեղ մոտ ժողովները թույլատրվում են:

— Պայմանավորվել ենք, — մտախո՞ն ասաց գեներալը, — բայց դա վաղուցվա բան է, յերբ զեռ կարգապահութուն չկար: Ասենք՝ յես պատրաստ եմ իմաստուն խոսքեր լսելու:

— Իսկ յես պատրաստ եմ իմ հարցերի պատասխանները լսելու, — ասաց Խո Սինը: — Առաջին հարցը. ինչո՞ւ այն չինացի մարդիկ, վորոնց յես զանազան գյուղերից գարնանը այստեղ բերի, զրազվում են լոկ խաշխաշ ցանելով:

— Այ՛նայ, — անտարբեր ասաց Յան Հայ-ցղինը, — հարգելի ձերուհին չգիտե, վոր զանազան գյուղերից իր բերած մարդիկ (վորոնք զինված էյին կայծաքարի հրացաններով և հին սրերով) չեն կարող առանց միջոցների ապրել: Ասենք թե, գենքը, ինչպես որինակ, գնդացիները, յերկու թնդանով

նոր հրացաններն այստեղ և բերել իմ կանոնավոր զորա-
թուժքը: Ասենք թե գյուղական մարդկանց այն հորդաները,
վոր դարնանն այստեղ դտա, այժմ բաժանված են գումար-
տակների և վաշտերի իմ հրահանգիչների ձեռքով: Ասենք թե
այժմ նրանք արդեն միքիչ գիտեն, թե ինչ և զինվորական
կարգապահությունը: Ասենք... Բայց պատերազմելու համար
միջոցներ են հարկավոր: Մենք խաշխաշը կքաղենք, կքա-
մենք ուղիւմը և կվաճառենք: Այդպիսով մինչև ձմեռ կղի-
մանանք: Ա՛յ-այ, հարգելի ձերունին սա չի իմացել, հա:

— Յես այդ գիտելի, — նկատեց Խո Սինը, — դա շատ
վատ բան և: Մենք ինչու պիտի մինչև ձմեռ այստեղ նըս-
տենք, և ինչո՞ւ ճապոնացիները մեզ ձեռ չեն տալիս: Անձրև և
գալիս, և ուտելու բան չի մնում: Ինչո՞ւ կայարանը չգրա-
վենք, քանի վոր նրանք սողում են փորների վրա ցեխի վրա-
յով և բոլոր գետերն ափերից դուրս են յեկել:

— Ա՛յ-այ, — գլուխը տմբտմբացրեց գեներալը, — հար-
գելի ձերունին ուղմական գործը սովորել և տայդայում վագ-
րերին հմայելով: Վո՞չ: Գուցե հարգարժան ձերունին մասնակ-
ցել և վորևե պատերազմի: Նո՞ւյնպես վոչ: Ի՞նչպես անկեղծ
ցավում եմ: Գուցե այստեղ են հավաքված նախկին գեներալ-
ներ: Վո՞չ: Բոլորը գյուղացիներ են: Ա՛յ-այ, վորքան եմ ցա-
վում, յես ցավից ճաքում եմ: Յես ավարտել եմ գլխավոր
շտաբի ակադեմիան և այնուհետև պատերազմից դուրս չեմ
յեկել: Յես հիմարարար եմ մտածում, վոր յեթե մենք դուրս
գանք Հովաղի խոռոչից, նրանք մեզ մի որում ջարդուփշուր
կանեն: Իմ չնչին կարծիքս այսպես և: Հը՞:

Ժողովածները լուռ եյին: Գլխարկով և կարճ անթե-
նոցով, փամփշտակալով գոտեվորված մի փոքրիկ գյուղացի
վեր բարձրացրեց անագին մատուղները և ասաց.

— Յես համաձայն եմ: Ինչ վոր ճիշտ և — ճիշտ և: Մենք
մեր հողում լավ խաշխաշ ենք ցանում, մենք զինվորական
չենք: Բայց թող Տյան Շաո-չենն ասի:

Առաջ յեկավ մի ժամանակ փչացած Զժանցղյադյան
գյուղի ավագը: Նա սաստիկ փոխված էր: Նրա ուռուցիկ փորը
մեջքին էր կպել: Նրա ուսերին տրեղներով կարմիր ուսա-
դիրներ եյին փայլում, իսկ գլխարկի վրա զինվորական յեռա-
ձայր աստղ: Նա նույնիսկ պճրուն իր բարձր ժապավինված
կոշիկներով, վոր մի ճապոնացի սավանորդի վոտներից էր
հանել: Նա ձեռը կողքին դեմ տվեց և ասաց յերկղիմի.

— Պատերազմում ամենից գլխավորն և յերկար պաշտ-
պանվել և արագ նահանջել: Յես մի ժամանակ ծառայելիս եմ
յեղիլ մարշալ Զժանի անձնական գնդում՝ Մուկղենում: Ավագ
յենթասպա եյի: Հիմա վաշտապետ եմ: Յես համաձայն եմ:

Ամբոխը հավանությամբ դուռաց:

— Այն ժամանակ յես ելի հարց կտամ, — գոչեց Խո
Սինը: — Յես խոռոչից գնացի, վորովհետև չուզեցի խաշխաշ
ցանել: Ինձ պետք չի գլխավոր շտաբի ակադեմիան: Յես
գյուղացի մարդկանց մեծ հազարներ բերի այստեղ վոչ թե
նրա համար, վոր աղվես և հավ խաղան ճապոնացիների
հետ: Յես պահպանում եմ Տայ-պին-լինի բարձրության
շավիղը, միակ շավիղը, վորով ճապոնացիները կարող են
խոռոչ մտնել: Յես Խարբինի հետ կապ եմ պահպանում:
Յես հարցնում եմ ինչի՞ յե գեներալը յերկու որը մեկ սուր-
հանդակներ ուղարկում ճապոնացիների մոտ կայարանը: Սա
ի՞նչ և նշանակում:

— Ի՞նչպես թե սուրհանդակներ և ուղարկում, — ասաց
փոքրիկ գյուղացին՝ մատուղները գլխից վեր բարձրացնելով: —
Դա ո՞վ ասաց, և ո՞վ և արել:

— Ո՞ր պատվելի ձերունին արդեն գիտե՞, վոր յես թըղ-
թատարներ եմ ուղարկել, — հարցրեց Յան Հայ-ցղինը՝ դեմքի
արտահայտությունը չփոխելով:

— Յերեկ այստեղի տղա Լյու Սան անցավ շավղով ճա-
պոնական պետին զրված մի նամակով: Նրան ուղարկել էր
պարոն գեներալը:

Ամբոխը շարժվեց: Գեներալը շուրջը նայեց և թիկնապահներին մեկին գլխով արեց: Նա հրացանը պատրաստեց:

— Յես այդ հարցի պատասխանը կտամ, — ասաց գեներալը: — Դա ուղղմական խորամանկությունն է: Յես տաս տարուց ավելի ծառայել եմ ճապոնացիներին մոտ և գիտեմ նրանց սովորությունները: Յես նրանց մոտ գործակալ եյի, ինչ անվանում եյին Չժաո:

Գեներալը խորը նայեց իր առաջ կանգնած լեմբակին: Դա կարմիր և գորշ գյուղացիական ղեմքերի մի ժողով էր: Նրանք կանգնած եյին խիտ, իրար ուսերի հենված և ղենքերը ձեռքներում սեղմած: Նրանք սովորել եյին նախկին ապստամբությունների ժամանակ խմբովին շրջել, յերբ հարձակվում եյին գավառապետների գրասենյակների և բուզդայական վանքերի վրա: Խմբովին նրանք համառ և քաջ եյին: Յրված շարքեր կազմած ժամանակ նրանք փախուստի եյին դիմում:

— Յես ասում եմ, վոր նրանց մոտ տարիներ ծառայել եմ: Նրանք ինչ և կյանազորու իմպանում եյին փնտրում այն ժամանակ, յերբ յես նստած եյի նրանց շտաբում փոխգնդապետի կողքին: Յես նրանց անգիր եմ ճանաչում: Յես նրանց հետ դիտմամբ եմ բանակցություններ վարում, վոր ժամանակը ձգձգեմ:

— Ո՞վ կարող է իմանալ, — ասաց Խո Սինը, — թե ինչ պետք է անեն գյուղացի մարդիկ այն ժամանակ, յերբ գեներալները բանակցություններ են վարում: Նույնիսկ լուբեր են պտտվում, թե ճապոնացիները դիտմամբ են մեղ առայժմ հանգիստ թողնում և նույնիսկ թույլ տալիս հրդեհել կայարանային շենքերը: Յես չգիտեմ, թե դա նրանց ինչին է պետք: Բայց ո՞վ է կարող հավաստիացնել, վոր դա խորամանկությունն է:

— Խո Սինը ճիշտ ասաց, — միջամտեց մտուղեր ունեցող փոքրիկ գյուղացին, — ինչ վոր ճիշտ է — ճիշտ է:

— Վաշտապետ Տյան Շաո-չենը կարող է վստահեցնել, — ասաց գեներալը, — նա ղինվորական մարդ է, նախկին գյուղական մարդ:

— Այո, — հանդիսավոր կերպով ասաց նախկին գյուղապետը, բուռնցքը կողքին դրած, — յերբ յես ծառայում եյի մարշալ Չժանի մոտ, դա յեկ եղպես էր: Յես սերժանտ եյի, հիմա կապիտան եմ:

— Յեվ այնուամենայնիվ դա քիչ է, — պնդում էր Խո Սինը, — մենք պատերազմում ենք չինական գյուղերի համար, մեր բրնձի համար, վոչ թե վաշտապետի աստղիկներին: Ո՞վ է կարող ստուգել:

— Այո, — ասաց մտուղերով մարդը, — ո՞վ է կարող:

Ամբոխը նորից շարժվեց: Գեներալն աչքերը կկոցեց:

Փայտե հեղակների առաջ, վորոնցում առաջ ապրում եյին բանվորական կոնցեսիաներ, բրնձ և շաղգամ յեփող կաթսաներից գոլորշի յեր բածրանում: Մի գյուղական մարդ ճապոնական պատռոտված գրասով կանգնած՝ գնդացիբային շամփուրով խռոնում էր շիլան: Կերակրվելու ժամը հասնում էր:

— Գեհ, — ասաց գեներալը, — այստեղ դատարան չի: Կարգապահություն: Ուզում եք ապստամբվել իշխանությունների դեմ: Յրվել:

Ամբոխը տեղը կանգնած մնաց:

— Մենք պատերազմում ենք վոչ թե կեղտոտ գյուղերի համար, այլ հայրենիքի և արդարությունից համար: Յրվել: Մեկ: Յերկու:

Յան Հայ-ցզինը ձեռքը բարձրացրեց: Ֆանդայից «կանոնավոր զորախմբի» մի տասնյակ ղինվոր դուբս յեկավ: Նրանք հրացաններով նշան առան:

— Վերջին անգամ եմ նախազգուշացնում: Բջիջը յես կբռնեմ, և հրամանատար գեներալին այլևս վոչ մի հարց չի արվիլ: Յերեք:

Հեղակներում գոնգը հնչեց:

— Ճաշի, — գոռում էր ճապոնական դրատը հագին մարդը՝
շամփուրը ճոճելով: — Ճաշի, նստեցեք հինգ-հինգ հոգի:

Հեղակները կենդանացան: Մարդիկ մըջուռնների պես
իրարանցման մեջ ընկան:

Տյան Շառ-չենն ամբոխի միջից ուղիղ քայլերով գնաց
դեպի խարույկները: Նրա հետևից շարժվեց մի քանի հոգի
ևս: Ամբոխն սկսեց ցրվել:

5

Անցան հուլիան ու ոգոստոսը, անձրևները վերջանում
էին: Հասնում էր վոսկե սեպտեմբերը, վորսորդական ար-
շավանքների և տոների ամիսը, յերբ գյուղերում վագրի
խրտվիլակ են ման ածում և թափառական ձեռնածուներն
իրանց իրանների շուրջն են գլանում մետաղե սուր յեռա-
ժանիներ, վորոնք պրոպելլերի պես բղղում և դողում են:

Դեղնում էին ձարթոտի և թրինջուկի խիտ թփուտ-
ները: Ողջ թափանցիկ էր և զրնգուն, ինչպես աղբյուրի
ջուր: Մորիտան և Կավամուրան արդեն կարողանում էին
փայտերով ման դալ և գերանի վրա քիչ նստել: Կուսուռնը
գտնվող խուլ անկյունը վոչ մի կրակոցի ձայն չէր հասնում,
և միայն մի անգամ բարձր բաց-մանուշակագույն յերկնքով
ինքնաթիռ անցավ: Զինվորներն անտարբերությամբ նայե-
ցին նրան:

— Վորջը կանգուն է, — ասաց Կավամուրան՝ ձիպոտը
դետինը խրելով:

— Կանգուն է, — քմծիծաղեց Մորիտան:

— Մերոնք արդեն յերեք ամիս և ենտեղ չարչարվում
են: Ինձ թվում է, թե նրանք զուր տեղը չեն, վոր վախենում
են գրոհել յերկաթուղային ճյուղի վրա:

— Զրահադնսցքը կա:

Զինվորները քրքշում և խփում են իրար ուսի և խելացի
տղա Լու Սյային, վորը նրանց հսկում է և կերակրում:

Կավամուրան և Լու Սյան իսկույն սկսեցին իրար հաս-
կանալ: Խոսակցութունն սկսվեց տնային տնտեսության
մեջ խողի ոգտակարությունից, իսկ վերջում յերկու զրուց-
ընկերներն ել խոստովանվեցին, վոր պատերազմը վերջ չունի:
Սկզբում դա անում էին նշանների և լեզվի բարդ տրաքոց-
ների միջոցով, բայց ոգոստոսի վերջերին Լու Սյան արդեն
վատ չէր խոսում ճապոներեն:

— Դու ինձ չճանաչեցիր, — ասաց Մորիտան, — յես հենց
այն զինվորն եմ, վոր քեզ տանում էի ուղեփակը և եդ ժա-
մանակ դու թփերի հետևում նստեցիր: Ա՛յ թե ճարպիկ ոճն ես:
Սրան քսան հատ հնդկեղեգնով տաք-տաք հարվածներ տվեց
մեջքին: Կոկորդիլոսի կաշի ունի: Յեվ ինչպես էր փախչում:

— Յն, — ասաց Լու Սյան, — յես ուզում էի խուլխուղ
դառնալ: Նրանք լավ են ուտեցնում: Դուք մեր բրինձը
խլեցիր:

— Բրինձ, բրինձ, — շշնջում է Կավամուրան և գլուխը
կախում:

— Իսկ դուք ախր ուզում էիք վոստիկան դառնալ,
պարոն Կավամուրա, — ասաց Մորիտան:

— Յես վոստիկան չեմ դառնալ:

— Հայրենիք, արդարություն: Դեռ մինչև այժմ ձեր
հայրենիքի վոչ մի թշնամի չէք տեսել: Առաջ, այն ևս տղան
էր չինացի խուլխուղը: Մա ձեր հայրենիքի թշնամի՞ յե:
Դուք նրա բրինձն էիք խլել:

— Վոչ:

— Նշանակում է՞ դա սուտ էր: Հետո ուսանող Իսիկա-
վան էր, վորին դուք դնդակահարեցիք անմեղ տեղը: Դուց ե
նա իսկի կոմունիստ ել չէր: Նրա հետ անխղճորեն վար-
վեցին ձեր աչքի առաջ: Ասում էին, թե դա հայրենիքի հա-
մար է: Դա հայրենիքի՞ համար էր:

— Վոչ:

— Նշանակում ե՞ դա սուտ եր: Հետո մի ճապոնական դյուղ եր, վորի վրա ուղղեցիք գնդացիբը: Դրանք ձեր հայ-մենիքի թշնամիներ էյին:

— Վոչ:

— Նշանակում ե՞ սուտ ե: Հետո սոսկական զինվոր Տանական եր, վոր սրբությամբ հավատում եր եղ ստին և վերջապես փախավ: Գուցե նա՞ յեր հայրենիքի թշնամի:

— Վոչ, նա չեր:

— Յե՛վ ելի սավառնորդ Տակայանադին եր, վորի մասին այժմ արդեն դուք ամեն ինչ իմացաք: Բայց մի՞թե նա թշնամի յե:

— Վոչ:

— Ել ռՊ ե թշնամին: Թշնամիներ չկան: Ապա ուրեմն ռՊ և ինչի՞ համար ե նա մեզ հետ եսպիսի խոհեր անում:

— Չգիտեմ:

— Պարոն Կավամուրա, դուք ճապոնիայում ի՞նչ մարդու յեք ամենից շատ ատում:

— Պարոն Ոյատային, վորը գնել ե քրոջս:

— Իսկ յես — պարոն Ուարա «Փչացած պահածոներին»:

— Բայց հավատարմությունը...

— Դուք հավատում եք այդ ձևադաշտություններին: Փորը պատեղոն: Վրեմի՞ն: Եղ բոլորին յեֆրեյտոր Նոգուցին ե հավատում: Դրանք ամեն տեղ մեզ են կպցնում ինչպես ապրանքանիշ: Եղ բոլորը հարկավոր ե նրա համար, վոր մի բանի վրա հենվեն, յերբ կարգապահության կարիք լինի... Մենք ընկած-դուրս յեկած մարդ ենք: Մենք շատ լավ հասկանում ենք եղ դիմակավորումը: Մենք ուսումնասիրել ենք յենթասպաների ու խունխուղների բոլոր սովորությունները:

— Եղ բոլորն եղպես ե, բայց զրանից ի՞նչ ե դուրս գալիս:

— Դուրս գալի՞ս: Դուք մոռացել եք, պարոն Կավամուրա: Ճապոնական Արիսակա հրացանը կարող ե մշուս կողմը դառնալ:

— Վո՞ր կողմը:

— Նրանց կողմը, վորոնք մեզ ետեղ են բերել:

Սորիտան վեր կացավ բարկությունից կրակ կտրած և խսկուն հառաչանքով հետ նստեց:

— Ետեղ ենպես խաղաղ ե, — ասաց Կավամուրան, վոր թվում ե թե պատերազմը վերջացել ե:

— Հեյ, Լու Սյա: Ետեղ արի:

— Տերը վերադարձել ե, — ասաց Լու Սյան: — Շուտով մեծ բաներ կլինեն:

6

Խարբիների մամուլը շարունակում եր մուկեղներ: Խորհրդավոր զրահագնացքը հարձակվել ե 76-երորդ կիլոմետրի վրա և զրհ-դակոճել կայարանային շինությունները: «Խարբիների ձայնի» յերեկոյան հրատարակության մեջ գետեղված եր կորեացի պահապան Յոյ Մոն-չենի լուսանկարը, վորը խունխուղների ձեռքը գերի յեր ընկել և կարմիր դրոշակներ կրող հայանի գնացքի ներսը յեղել: «Գնացքը, — պատմել եր պահապանը, — սարքավորված ե ուղղմական տեխնիկայի վերջին խոսքով և ոժտված ե արադաճիք թնդանոթներ ունեցող ելեկտրիֆիկացված բարձրացվող աշտարակներով: Գնեբրալ Յան Հայցղինն ինքն ե գնացքի հրամանատարը: Ինձ հարցաքննեցին մի սենյակում, վոր զարդարված եր դորդերով և վազրերի գլուխներով, վորոնց վրա կախված եր Սուն Յատ-սենի պատկերը: Գնացքի վերջում կա հատուկ վաղոն-դիակիզարան՝ կապույտ գույնով ներկված: Յելուղակները նրա մեջ այրում են իրանց զոհերի մարմինները: Գնացքի մարդկանց մեծ մասը բաղկացած ե չինացի կոմունիստներից, վորոնք կրթք-ներին և մեջքներին կարմիր պստղեր են կրում: Նրանք

յերդվուն են մինչև ձմեռ Խարբին այցելել և վրեժխնդիր լինել ընկած ընկերների համար»:

Գնացքը տարրինակորեն եր տեղից տեղ շարժվում: Նա տառացի կերպով ցատկում եր ճապոնական և մանջուրական խափանիչ զորամասերի գլուխների վրայով և մի որ հետո տեսնում էյիր Հովազի խոռոչի ճյուղում հանգիստ քնած և յելուզակային վորջի միակ ականավորված մուտքը պահպանելիս:

Բայց մեծագույն սահմանների հասավ «չինական թողից-փախածները» հանդիմությունը սեպտեմբերի սկզբին, յերբ սլաքավոր Ավրամիյեվը, նախկին սեմյոնովյան հարյուրապետ, յերդվելով հայտնեց, վոր գիշերվա մեջտեղը «113 ա» կայանը յեկավ մի զրահավորված շոգեքարշ յերկու վազոնով, վերցրեց իրան ընտանիքի հետ միասին և իրան տանջելով՝ դուրս քաշեց գլխավորապես խորբինյան թերթի խմբագրի ազդանունների իսկական անունները և հասցեները: Ավրամիյեվի ցուցումներին կցված եր նրա մեջքի լուսանկարը հնդկեղեգնով տված ձեծի հետքերով, ընդվորում ազնիվ սլաքավարի դեմքը լուսանկարում ամենևին դուրս չեր յեկել, թերևս այն պատճառով, վոր մեջքն էյին նկարել:

Կոմունիստական դավադրությունն առկա յեր: Պարզ եր, վոր զրահազնացքի գաղտնիքը ստուգապես հայտնի յեր յերկարափեշ խալաթներով և ալանջավոր գլխարկներով այն մուսյլ չինացիներին, վորոնք վերջին ժամանակները լցվել էյին Ֆուձյադյանը¹: Պարզ եր նույնպես, վոր հենց այդ զգեստափոխ չինացիներն էյին կազմակերպել Գառախեցքի կայարանում յերկու ուղմական շարանների ընդհարումը և «Խարբինի ձայնի» խմբագրատան վառարանում ուժանակի փամփուշտ դրել պահածոյի տուփի տեղ:

¹ Ֆուձյադյան — Խարբինի արվարձան ե:

Լրագրի] նախաձեռնությունը պատգամավորություն ուղարկվեց ճապոնական հրամանատարությունն աներկայացուցչի մոտ, վորը հայտնեց, թե հրամանատարությունը և մանջուրական իշխանությունները միջոցներ են ձեռք առնելու «թուշոզ զրահազնացքը» վերացնելու համար: Կայարանային շենքերի 76-երորդ կիլոմետրի վրա յերկաթգծի վերաբերմամբ հրամանատարությունն աներկայացուցիչը հայտնեց, թե հրամանատարությունն ուսումնասիրում է այդ հարցը:

Բայց «Խարբինի ձայնի» համար իսկական տոն էյին ամսի քսանական թվերը, յերբ այդ թերթի մի կիրակնորյա համար ամբողջովին նվիրված եր յերկու սենսացիոն հաղորդագրությունների. առևտրական Յերմոլինսկիյի ծծկեր յերեխայի հրաշալի փրկությունը, յերեխայի, վորի մանկական կառքում կոմունիստական պրոկլամացիա յեր գտնվել, և այն տեղեկությունը, թե Հովազի վորջը կորստյան նախորդակին տեղեկությունը, թե Հովազի վորջը կորստյան նախորդակին «ուրվային զրահազնացքը» խորտակված է ճապոնական ինքնաթիռների հրաձգությունը:

Մոտավորապես սեպտեմբերի նույն թվերին յեֆրեյտոր Նոգուցին յերիզակապված գլխով վրանի տակ պառկած՝ դրոսից այսպիսի խոսակցություն լսեց.

— Իրավի մենք ետը կարող էյինք փախչել:

— Հը՞: Փախչել: Հա:

— Յես ասում եմ — փախչել ետտեղից:

— Փախչել: Ա՛խ, հա...

— Ձեզ ինչ է պատահել, Կավամուրա-սան:

— Դա ինչի՞նչ յեք ասում:

— Վորովհետև շուրջներս մարդ չկա: Մենք արդեն վտարի յենք կանգնած: Ծերուկը տղայի հետ գնացել ե: Նրանք մեզ ենպես են հավատում, ինչպես իրանց մարդկանց:

— Ա՛խ, եղպես, փախչել... Յես... վոչ մի ցանկություն չունեմ:

— Յանկուլթյուն չունիք: Դուք կամենում եք եստեղ մնալ:

— Եստեղ... ինչպես ասել... Եստեղ ենպես հանգիստ ե: Նրանք ջհաննամը: Յես մարդ եմ, վնչ թե գնդացիների պահունակ: Յես գերության մեջ եմ:

Մորիտան քրքջաց:

— Այ քեզ սոսկական զինվոր կավամուրա: Բայց ախր, ուղիղն ասած, բավական ե, վոր ներկայանանք վաշտի հրամանատարին և մի փոքրիկ բան պատմենք բարձրության վրայով անցնող այս շավղի մասին, վոր չինացիները դիմակավորել են... մենք վաղը կգարթենեյինք յեֆրեյտորի աստղիկներով:

— Թքել եմ յես աստղիկների վրա:

— Ո՛ր, պարոն կավամուրա, ձեզ ճանաչել չի կարելի: Նոգուցին հիմա հուզված կլիներ: Ի՞նչ և նշանակում յերկուտարի գորանոցում լինել: Իսկ ի՞նչ որինակելի եյիք... Ապացույց տվեք են թուղթը, ձեզ մոտ ե:

— Ի՞նչ թուղթ:

— Արյունով գրված դիմումի վերաբերյալ: Վաստիկանի տեղը...

— Թողեք կատակը:

Նոգուցին չորեքթաթ տվեց: Նրա վտար կտալ պղնձե աշտանակին, վոր ծեր խուսիտուղը յերբեմն յերեկոները վառում եր: Անիծյալ չինական անոթ: Անիծյալ վրան: Ի՞նչ գարշահատություն: Ի՞նչ կեղտ: Այդտեղ հաղիվ եյին կարողանում տեղավորվել չորս հոգի իրար վրա թափված: Նոգուցին վրանից չեր հեռացել այն բոպեյից, յերբ փաթաթանք ճակատին ուշքի յեկավ: Նա վրանում սողում եր և բուռնցքով ձեծում չինական վոջլոտ փալաաները: Նա վորոշել եր ավելի շուտ մեռնել, քան քիթը դուրս բերել և խուսիտուղների հետ ունեցած խոսակցություններին մասնակից լինել: Նա լսում եր, թույլ եր տալիս վերքը կապել և Լու Սյայի

ձեռից դուրս եր կորչում կերակուրը: Վերքը կապելու ժամանակ նա ծեր յեղուզակի վրա նայում եր հալածվող չարացած առնետի աչքերով: Գիշերը նա ուսերին շոշափում եր ուսադիրները: Այդպիսի խայտառակություն դեռ չեր յեղեկներանք մոռացել եյին ուսադիրները պոկել: Նա գերի յեր, սնմուրայյան վաշտի յեֆրեյտորը: Ինչո՞ւ նրանք չսպանեցին նրան: Վորպեսզի ավելի մեծ նախատինք լինի:

Նոգուցին գտնվում եր չորեքթաթ գերքում: Նա պատրաստ եր շան նման վնգստալ: Ի՞նչ լավ կլիներ այժմ դուրս գալ ողի մեջ, վնչ այդ, չինական, ապակե ողի մեջ, այլ անյ, ճապոնական, լավ, խոնավ ողի մեջ: Դուրս գալ և կանգնել վերջապես, կանգնել և ապացուցել, վոր մարդս յերկոտանի կենդանի յե: Ո՛ր, շտկվել, ձգվել, գոռալ, մի բան ասել:

Սա ի՞նչ ե: Ինչ վոր փոքր կոնոք, թե ո՞՞՞ չորացրած գլուխ: Կորչի: Կեղտ, գարշահատություն: Պետք ե ուժերը հավաքել:

Նոգուցին ներքին գրպանից հանեց իր թղթերը և նորից նայեց նրանց սիրով: Նա գերության մեջ ևս չեր կարողացել հրաժարվել բոլոր լսածը գրի անելուց: Այդտեղ ամեն ինչ կար. տեղի նախարգակը, հետախուզության ուղին, բուզգայական կոստուրը և ժենշենահավաքի խրճիթը: Այժմ նա կոահեց, ուղղակի գլխում ծագեց: Տայ-պին-լին բարձրության վրայով անցնող գաղտնի շավիղն այդտեղից բարձրում, կոատան վերեից. նա լցված եր ցախով և ճյուղերով մինչև ճանապարհը թեքվելու տեղի կլոր քարը: Միակ ուղին, վոր տանում ե Հովազի խոտջր:

Նոգուցին թղթերը թաղցրեց: Նրա վոտի տակ մի բան ընկավ, և նա վոտով բարկացած շարտեց նույն պղնձե աշտանակը:

Վերջապես պահապանները գնացել են: Սոսկական զինվոր Մորիտան ասաց, վոր նրանք գնացել են, և դա պարզ ե: Յերեկի բրիգադը հարձակման և անցնում: Առավոտյան թըն-

դանոթների ձայն եր լսվում: Խուսիսուզներն այժմ դրադ-
ված են, մտահոգ: Այդ ձեր յեղուզակը չլինեք, Հովազի վորջը
միանգամայն կտրված կլինեք:

Յեֆրեյտոր Նոգուցին յպտաց և սողաց: Այժմ նա վերջ-
նականապես հանգստացավ: Չորեքթաթ տալու սովորու-
թյունը հաղթեց: Նա վրանից դուրս սողաց, շուրջը նայեց
և ձեռների վրա ձգվեց դեպի թփերը: Նրան մարդ չնկատեց:

Նա սողաց առաջ: Անցավ չորացած հունը և սողաց ան-
տառը: Այնտեղ նա վեր կացավ, բայց կապույտ, ուրախ շըր-
ջաններ լողացին նրա աչքերի առաջ, և նա գլորվեց: Թու-
լությունից յերկար պառկեց: Նա շոշափեց գլխի վիրակապը
Դա նույնիսկ լավ է — ճապոնական յեֆրեյտորը համադգես-
տով և գլուխը յերկապակապված:

Նա նորից սողաց: Դժվար է հիշել, թե ինչքան՝ ժամա-
նակ անցավ: Նա սողում էր շավիղներով, ընկնում էր խոր-
խորատների մեջ, գլխիվայր գլորվում էր բարձրություննե-
րից, կախվում էր թփերից: Նա ստիպված յեղավ մի առվում
լողանալ: Մի անգամ նա քնեց բաց դռիվայրում: Մի ան-
գամ նրա առջևից շավղով մի մեծ ոձ անցավ:

— Յես և դու այժմ միևնույն մակարդակի վրա յենք
ապրում — նրա հետևից ասաց յեֆրեյտոր Նոգուցին: Դա
նույն մակերևույթն էր, վորտեղից լավ եյին մտաբերվում
յերկու ամիս առաջ շավղում տպված հետքերը: Այդտեղ
կային և՛ պայտած կոշիկների ծանոթ հետքեր, վորոնք գնացել
եյին յեֆրեյտոր Նոգուցիի սողացած կողմի հակառակ կողմը:
Դրանք հետախույզների քայլեր եյին: Բայց անա ձիու և գյու-
ղական տղայի բորիկ վորտների անընդհատ կրկնվող հետքեր:

Անհայտ է, թե վորքան ժամանակ անցավ: Այդ ժամա-
նակի ընթացքում յեֆրեյտոր Նոգուցիին պատահեցին և՛
թփերի արանքում վառվող վազրի աչքեր: Բայց վազրը նրան
չկպավ, գուցե նա վախեցավ յեֆրեյտորական աստղիկներից:
Վազրերը խելոքացել եյին:

«Օ՛ր յելուզակը վազրերին թափում և, — հիշեց Նոգու-
ցին, — բայց դուցե՛ յես հետս բերել եմ նրա դարձահոտու-
թյունը: Բո՛ւ...»

Համադգեստը պատռտովել էր, ձեռները կտրատվել: Ան-
ցավ էլի հայտնի չե թե ինչքան ժամանակ: Յեֆրեյտորի
մեջքն սկսեց քիչ-քիչ շտկվել: Նա արդեն կարող էր վոտով
գնալ՝ սաստիկ կոացած: Նա գնում էր յերերայով և բարբաջե-
լով, ճանապարհը գրեթե զգալով պտնելով: Յերբորդ. թե չոր-
բորդ որը նա փակադակի չըթկոց լսեց: Նեավեց թփերի մեջ:
Մեկը մոտեցավ: Շավղում ցախը խշխշաց: Դալիս եյին իրան
վորոնեկու:

Նոգուցին շնչառությունը պահեց: Միքաը տարորինակ
եր բարախում. յերկու կարճ բաղխում, յերկար ընդմիջում,
յերեք կարճ... Նոգուցին հոտ զգաց, ծանոթ հոտ: Նա վեր
ցատկեց: Միանգամից յերկու փակադակ չըթկացին, և յեր-
կու ձայն միանգամից գոռացին յեֆրեյտորի սեփական լեզվով:

— Տա՛րե կա: Ո՞վ է դալիս:

7

Նույն սրը յերեկոյան դեմ գերանի վրա նստած Կավա-
մուրան լսեց ճյուղերի ճարճատյուն և հետ դառնաբով՝ տե-
սավ փոխտեղակալ Սեդավայի ակնոցը: Սեդավան թփերի
հետևից նրան նշաններ էր անում: Փոխտեղակալի ուսերի
հետևը թփերի միջև սևին եյին տալիս հրացանների փողեր:
Կավամուրան վեր կացավ, բայց իսկույն ևեթ ուժասպառ
նստեց:

— Պատերազմին և շփոթին վերջ չկա, — ասաց նա:

Փոխտեղակալը չքացավ: Թփերի հետևից դանդաղ յերե-
վաց չորս փողաբերան հատիկներով: Բայց նրանք Կավամու-
րային չեյին նշան բռնում: Նրանք ուղղված եյին թեք դեպի
վեր, շավղի դարձին, վորով յերկու հոգի եյին իջնում հրա-
ցաններով:

Համադարկը վորոտաց: Կերպարանքներից մեկը — դա
Լու Սյան եր — ձեռները թափահարեց և գլորվեց դառնվայ-
րով՝ սպիտակ փոշի բարձրացնելով: Յերկրորդը գետին նետեց
իրան: Դա մազերը ցրելով ձերուկն եր — Խո Սինը: Նա պա-
տասխանեց անհասպարհ:

— Առաջ, գերանի մտ, — հրամայեց Սոգավան:

Կավամուրայի կողքին հայանվեցին յերեք սոսկական
զինվորն և յենթասպա Սետոյուն: Մորիտան վրանի հետեից
ինչ վոր բան եր գոռում:

Ձինվորներն իրար հետեից կրակում էին, և պարկուճ-
ները գլորվում էին Կավամուրայի գլխավերևով: Խո Սինը
սակավ եր պատասխանում: Նրա գնդակները տժժում էին
գերանից վեր՝ հետզհետե ցածրանալով:

— Ինչո՞ւ նրան կենդանի չվերցնենք, — ասաց Կավա-
մուրան յենթասպային:

— Մենք լավ ուղեցույց ունենք, — բարկացած պատաս-
խանեց յենթասպան, — իսկ դու լավ կաննելիք հրացան վերց-
նելիք: Դու լավ հրաձիգ ես: Ես ավանակները դեռ մինչև
հիմի կրակել չեն սովորել, Կավամուրա:

— Վոչ, պարոն կրտսեր յենթասպա, — ասաց Կավամու-
րան, — յես չեմ կարող կրակել: Չեմ կարող:

Միքանի ջոկեր շրջապատեցին վրանը: Խո Սինն ավելի
և ավելի սակավ եր կրակում: Ըստ յերևույթին նա փամ-
փուշանների պաշար չուներ: Վերջապես նա իսպառ լեց:
Փոխտեղակալ Սոգավան բարձրացավ արմուհկների վրա:

— Մարեց: Դե՛հ, տղերք, առաջ:

Այդ մոմենտին ձերը կրակեց: Փոխտեղակալի ակնոցը
կտոր-կտոր ցրելով յեկավ, և նա ինքը ծանր գլորվեց ձեռների
վրա: Գրեթե միաժամանակ լավեց մի վայրենի վոռնոց: Զո-
կերից մեկը մացառներով անցել եր և գրոհել ժեն-շեն հա-
վաքող ձերուկի վրա հետեի կողմից: Զոռնվայրում պարում
էին զինվորների կերպարանքներ:

— Զոկի պարոն հրամանատար, — լավեց այնտեղից: —
Եստեղ: Մենք նրան սվինահարեցինք:

Շավղով քարը էյին տալիս Խո Սինի մարմինը: Նրա
յերկար, ցրված մազերը քարը էյին դալիս գետնի վրայով:

Ամբողջ գիշեր գնդացիները տրաքտրաքում էին: Հա-
րավից խուլ դողում էին թնդանոթները: Արևմուտքում ան-
ընդհատ հրացանաձգություն եր կատարվում: Հովազի վորջ
յերկաթուղային ճյուղում յերբեմնակի ողի մեջ գծում եր
հրթիռը և ընկնում՝ սև տարածության մեջ շարեկող կանաչ
կայծերի խուրձեր: Ժամը յերկուսուկեսին հեղակը կրակ
ընկավ: Հանդցնող չկար: Կրակն անցավ հարևան տանիք-
ները և վորջի վրա նարնջադույն ծածկույթ տարածվեց:
Անհանդիստ լույսի տակ յերևում էին խաշխաշի խնամքով
մշակված արտերը, վոր փշալարով ցանկապատված էին:
Ճանապարհով մարդիկ կապոցներով փախչում էին:

— Ե՛ստեղ: Ե՛ստեղ:

— Զհաննա՞մբ: Հրետանիական պահեստը վառվե՞ւմ ե:

Գնդացիք: Գնդացիք: Թնդանոթ:

— Ճանապարհ տվեք: Զիավճր ե:

— Ո՞ւր ե գեներալը:

— Գեներալը չկա: Բոլոր հրամանատարները կորել են
հայտնի չի թե ուր:

— Մենք ել ենք կորել:

— Դեն կաց: Կանոնավոր դարախո՞ւմբն ե:

— Կորեք, անիծված կրիաներ:

Գնդացիք: Գնդացիք: Հյուսիս-արևմուտքից ճապոնական
յերկարահնչյուն շեփոք:

— Շեփոքում են: Նրանք անցել են թիկունքը: Ո՞ւր
փախչենք:

— Փախչելու տեղ չկա: Հիմա մսի կտրտում կլինի: Պառկիր:

Հոգր կապտավուն-դեղին սյունը դեպի յերկինք եր ձրգ-
վում: Բլուրները դողողացին: Հրետանիական պահեստը

այրվում եր: Փախչողների աղաղակը և հրամանը խառնվել դարձել էյին մի յերկարաձիգ վոռնոց: Ճանապարհին ծանրությամբ խոռացնում էյին զրահակիրները:

Առաջնության դեմ Հովազի խոռոչը դրավված եր: Նոր զորակոչի սոսկական զինվորները ճանապարհին թափված մարմինները քարշ էյին տալիս և կիտում, վորպեսզի բրկդաղի հրամանատարության ճանապարհը մաքրեն: Խոռոչը դեռ ծխում եր: Հարյուրավոր մարմիններ թափված էյին ջրանցքներում: Զիավորների մի խումբ անցավ անտառային կոնցեսիայի գրասենյակի այրված խողովակների մոտով և դարձավ դեպի յերկաթուղային գիծը:

— Ահա, ձերդ գերազանցություն, — ասաց ձիավորներից մեկը, — նրանց զրահապատ դնացքը:

Ռեկանների վրա կանգնած եր մեջները քսակներ թափված վեց հատ ապրանքային իրար կցված պլատֆորմ: Գրասենյակների վրա յերևում էյին ստվարաթղթե ներկված հրակնատներ:

Հարցը կախվեց գեներալական մտրակի ծայրին:

— Մձ յե, — ասաց գեներալը: Զրահապատ դնացքը: Վոչ:

— Այո, ձերդ գերազանցություն, զրահապատ դնացքն ե:

— Մձ յե: Բոլորը: Ի՞նչ խայտառակություն:

Այժմ գեներալի մեկնած մտրակի ծայրին ամբողջ մի պրորբեմ աճեց: Այդտեղ կիտվեցին Խարբինի մամուլը, 76-երորդ կիլոմետրի վրայի հարձակումը, կորեացի Յոյ Մոնչենը, նախկին հարյուրապետ Ավրամիյեվի մեջքը, ելեկտրիֆիկացիայի յենթարկված շարժական աշտարակները, մոայլ չինացիները Ֆուձյադյանում, և այս բոլորը խռնվեց մտրակի ծայրին, իրար ճնշում էյին և տարածվում բացմանուշակազույն յերկնքի ֆոնի վրա չինական խորամանկ ժպտի մեջ:

— Հաղորդել Խարբին: — ասաց գեներալը: — Ի՞նչ սկանդալ:

Վերջ չկար պատերազմին և նեղությանը: Սկսած այն ժամանակվանից, յերբ Խարբինը դրավեց կարճահասակ, ծանր բեռնավորված մի հետևակ պողպատե սաղավարտներ դրած, բրոնզե քրիզանտեմներով, թվում եր, թե մեկը մտրակում եր փողոցները, խանութները, անցքերը, կամուրջները, ճանապարհները, կտուրները: Մեկը շրթկացնում և վոռնում եր քաղաքից վեր: Տղաներն աղմկում էյին Խոկուժան-հոթելի մուտքի մոտ՝ թափվելով շտաբայինների փայլուն կոշիկների վրա: Ռազմական փոխակրանքներն իջնում էյին Մունդարի գետով՝ սպեկուլյանտների հրոսակով պատած: Անկյուններում դադարի մորֆիյի խայտաբղետ սրվակներ էյին վաճառում: Կամարից դենը ծխում եր Ֆուձյադյանը: Ռիկչանների զանգակները հնչում էյին: Գայանն ընկնում ե: Գոլլարը բարձրանում ե: Գայանը բարձրանում ե: Գոլլարն ընկնում ե... Խարբինի դպրոցականները թղթադրամով սպեկուլյացիա յեն անում անկյուններում:

Մարդն ուզում եր թաքնվել պատերազմից և նեղությունից շտաբի մի խաղաղ առանձնասենյակ, շտաբի, վորից սհաներկի հոտ եր դալիս և ուր կախված էյին մեծ-մեծ կապույտ և դեղին քարտեզներ, վորոնցում յուրաքանչյուր բուզդայական կատուն նշանակված եր հատուկ հյուսվածադրերով: Մարդն ուզում եր աչքերը ծածկել ծխազույն ակնոցի հետևում, վառել սեղանի ճրագը և կոանալ սեղանին փռած գեկուցման վրա, վոր՝ իսկապես ասած՝ ներկայացնում եր իրանից վոչ թե գեկուցում, այլ մաթեմատիկական բարդ խնդիր:

Զեկուցումը հաղորդում եր այն մասին, վոր հայտնի «Սուև Յատ-սեն» զրահապատ դնացքը բաղկացած ե ստվարաթղթե վահանակներով ծածկված վեց պլատֆորմից: Զեկուցումը վոչ մի բան չեր հարցնում, բայց խնդիրը կու-

տակվում կազմվում եր յուրաքանչյուր տողում և թերթի վերջում դառնում խիտ ուռած կետ, վոր լի յեր թուշնով և ծաղրով: Վեց ապրանքային պլատֆորմ: Յերկուեկես ամիս չարչարանք: Ի՞նչ ամոթանք: Ի՞նչ անել:

Բայց խնդիրն արդեն գրեթե լուծված ե: Ելի միքանի ուրվագիծ, և խնդրի լուծումն ստանում և անձնական, մտերմական նամակի ձև: Պանրի պես գեղին դեմքը սեղանի ճրագի լուսով ծրարի վրա կուցած՝ ծաղրականորեն ժպտում ե: Պատերին թեթևակի ժպտում են դեղին և կապույտ քարտեզները:

Այդ նամակը ժպիտ և հարուցում և բրիգադի հրամանատարի շրթունքներին: Իրոք ի՞նչ հասարակ բան և յեղել: Խարբինում թելոք մարդիկ են նստած: Մտրակը թեթևացած յերերվում ե, և բրիգադի հրամանատարը հարգանքով նայում և նամակի վերջում դրված ստորագրությունը — «Գեներալ-մայոր Ֆուձինամի»:

9

Կավամուրան և Մորիտան լապտերով կանգնած եյին իջեցրված պողպատե վանանների առջև: Սոսկական զինվոր Իսուժայան բարկացած թքոտելով՝ ներկելով եր զրագված:

— Բան չի դուրս գալիս, — ասաց նա, — ողնեցեք, թե չե յես մինչև առավոտ չեմ կարող վերջացնել: Չգիտեմ ի՞նչ ներկով նկարեմ:

— Կարմրով նկարիր:

— Իսկ մժուրճը:

— Նրանք միևնույն գուշնն ունեն:

— Ե՛, յես ի՞նչ նկարիչ եմ: Ինչո՞ւ յեն ինձ ես գործին դրել: Ողնեցեք հա, Մորիտա-սան: Ախր դուք Տոկիո յեղել եք և տեսել եք ես բոլոր բաները:

— Տեսել եմ: Բայց... իսկապես, Կավամուրա, ի՞նչ կլինի, վոր ես բանն անեք: Սա ուրախ բան ե: Զրահապատ գնացքի վրա մանգաղ և մուրճ:

— Մի բուռք, — ասաց Իսուժայան, — յեն թասպան հիմի կգա ստուգելու: Հրամայված ե մինչև մի ժամ վերջացնել:

Ծխագուշն ակնոցով մարդու խորիմաստ նամակում պարփակված խորհուրդներն առանց վորեև հապաղումի իրականացվում եյին: Հովազի վորջ յերկաթուղային ճյուղն եր բերված գիշերը մի ճապոնական զրահապատ գնացք: Վեց հոգի սոսկական զինվորներ ամբողջ գիշերն աշխատում եյին դրա շուրջը՝ նկարագրելով նրա պողպատե կողերը: Առավոտյան դեմ մանգաղի և մուրճի նկարով զարդարված այդ անագին գործ ոճը ծանր շուշն քաշելով՝ սողաց կայլաթեցզբի կայարանք: Նորակոչները ծիծաղում եյին՝ սվինները հրակնասանքի մեջ խոթելով:

— Լավ, — ասաց Մորիտան՝ ձեռները փալատով սրելով և հրապարակիկների շարքի հետևից նայելով: — Ի՞նչպիսի ավար: Վերջապես ձեռք բերին կոմունիստական հոտած չինական «Սուն Յատ-սենի պատգամները» զրահապատ գնացքը:

— Կատակը թողեք, — ասաց Կավամուրան:

— Յե՛վ մենք եղ գնացքով Խարբին կգնանք, Կավամուրա-սան: Մեզ կայարանում կդիմավորեն և կնկարեն: Յերաժըշտու թյո՞ւն: Ճաշին մեզ կրկնակի բաժին կտան և մի դավաթ ողի: Բոլոր թերթերում դուրս կգան մանգաղն ու մուրճը, և վոչվոք չի իմանալ, վոր նախկին ճապոնական զրահապատ գնացքի վրայի եղ մանգաղն ու մուրճը ճապոնացի զինվորի ձեռքով են նկարված: Կոմունիստական դավադրություն և բացված և ապացուցված:

— Կատակը թողեք, — ասաց Կավամուրան:

Սոսկական զինվոր Մորիտան չսխալվեց: Սեպտեմբերի վերջը յերջանիկ ամիս եր «Խարբինի ձայնի» համար: Վերջապես Համբարակային կիսակայարան հասավ «76-երորդ կիլոմետրի ուրվային դեք», «Թոչող զրահապատ գնացքը», «Երկուգակային պողպատե ոճը», «Սուն Յատ-սենի պատգամները»: Նա կանգնել եր, պողպատե, բարձր և անարկու, և

թնդանութները մոռայ կախած եյին հրակնատներէ: Կա նկարել եյին հարյուրավոր անգամից վոչ պակաս:

Յեւ տարրինակ բան. դրեթե ամեն մի նկարում մանգաղի և մուրճի տակ ձեռները կողքներին և սիրալիբ ժպտալով՝ յերևում եյին Խիմեձիյան գնդի միւսնույն սոսկական զինվորներ Կավամուրան և Մորիտան:

Ովկիանային սպիտակ նավերից մեկն ուսունյան ամբոցների մոտով անցնելիս յերկար սուլում եր: Չինական հոկտեմբերը Յանցղըի լայն շղարշը վոսկե-կանաչ գույնով եր ներկել: Նավն առաջ եր շարժում՝ թավ ձայնով կանչելով պետի վրա խլրատող անձոտնի ջոնկաները, վորոնք մինչև յեղերը լցված եյին սեխով և անանասով: Մակույկավարներն աններդաշնակ դոտում եյին: Ասիերով անվերջ շարվել եյին ապրանքային պահեստների ցինկած կտուրները և կռատների սապատավոր տանիքները: Ծանր փայտատարները և նավթատարները մոռայ ծխելով սողում եյին վեր դեպի Շանգհայ: Բայց սպիտակ նավն ազմկող, փոշոտ Շանգհայը շատ հեռ թողեց: Նա Յեվրոպա յեր գնում:

Աղի քամին թրթռացնում եր մի ճանապարհորդ կնոջ խայտարղեա շարճը: Կինը կանգնած եր վերին տախտակամածում. դա մի փոքրիկ շիւ աչքերով կին եր՝ ապարատը ձեռին: Նրա կողքին կոթնած եր մոհաջարներին թուխ բաց դեմքով մի լայնաթիկունք յերիտասարդ մարդ: Նա թերթ եր կարդում:

Մի յերրորդ ճանապարհորդ, լացանի սաղավարտով մի յերկարահասակ ուղղաձիգ անդլիացի, կնոջը մի բան եր բացատրում՝ մատն ապարատին կայցնելով:

— Բան չի դուրս գալ, տիկին Աիկո, — ասում եր նա, — ձեր ապարատում մակույկն ելի կիդակետից դուրս և:

— Կարդացի, Մակ Կեննա, — ասաց թուխ մարդը՝ լրագիրը ծակելով: — Ձեզ մոտ ճապոնիայի մասին գրում են վորպես տիկնիկների թատրոնի մասին: Վոչ մի նմանութուն: Սամուրայների շավիղը...

— Թանգադին Տակայանագի, — ժպտալով պատասխանեց թղթակիցը, — մենք լրագրողներ ենք, լինչ արած, հասարակութունն իր ճաշակն ունի: Մենք փոքր մարդիկ ենք: Ձեր այժմյան դադափարախոսութունն՝ իհարկե՛ այլ բան ե պահանջում: Գուցե ձեզ բավարարի առաջին եջի հաղորդագրութունը, կարդացեք: Ներողութուն եմ խնդրում, տիկին Աիկո:

— Առաջին եջում, — հարցրեց Տակայանագին: — Վերն ե: Ա՛խ, անհ: Տյանցղին... Ո՛ր, լսեցեք.

«Տյանցղին, 26|10: Չինական թերթերի հաղորդագրութան համաձայն՝ այս օրերս Լյայլախցղը կայարանի շրջանում ճապոնացիների զբաղած «Մուս Յատ-սենի պատգամները» պարտիզանական զբաղապատ գնացքում Խիմեձիյական հետակ գնդի սամուրայան վաշտում ապստամբութուն ծագեց:

Ապստամբները կալանավորեցին սպայական կազմը, զբաղապատ գնացքը վրա հեղափոխական դրոշ պարզեցին և շարժվեցին Գայրենի ուղղությամբ՝ գնդակոծելով ճապոնական պահպանական պոստերը:

Չրահապատ գնացքը բռնել աջողկեց միայն Յատմըն Բուխայ իջևանմիջում, ուր հրամանատարության կարգադրությամբ նա բաց եր թողնվիլ գառիվայրի տակ: Հին գորակոչից կենդանի մնացած 47 սոսկական զինվորները ռազմա-դաշտային դատի յեն տրված:

— Քառասունյոթ հոդի, — ասաց Տակայանագին, — քառասունյոթ հավատարիմ սամուրայներ: Յես այնտեղ միքանիսին ձանաչում եմ...

— Հա, զվարճալի յե, զվարճալի, — ուրախ բացականչեց Մակ Կեննան՝ ապարատով զբաղվելով, — իսկ դուք առարկում եք: Չվարճալի յե, չե: Քառասունյոթ: Կարծես հեքյաթ լինի:

Սկայանագիրն մեքենայորեն ծալեց լրագիրը:


Նա պատկերացրեց արշալուսի առաջին ցուքերը կիսալուսավորված պոլիգոնի վրա: Չառիվայրին մի գծի վրա կանգնած են քառասունյոթ հոգի կապկասված ձեռներով, քառասունյոթ վոճրագործ-զինվորներ:

Ճապոնական ուղղմական շեփորը հնչում է յերկարատև և տխուր: Վեց «գոչկիս» ցնցվում և փոշին քամուն են տալիս: Մարդիկ ընկնում են: Նորից շեփոր և հրաման. «Ընդհատել կրակը»: Գնդակահարումը վերջացած է:

— Քառասունյոթ սամուրայներ, — մտադրիվ ասաց սավանորդը, — քառասունյոթ հավատարիմներ, պարոն գընդապետ:

Շոգենայը նորից սուլեց: Նա մոտենում էր Յանցզըիի գետաբերանի փարոսներին: Առջևը տարածված էր ծովի լայն, կանաչ, փրփրուն սփռոցը: Նավախելի հետևում ալիքների մեջ մարեց յերկար, սպիտակ շավիղը:

— Գնանք, Աիկո, — ասաց Տակայանագիրն, — ցրտում է:



ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

	69
Յամատոյի բաջերը	7
Սիստեմ	33
Սամուրայան վաշտը	57
Յեֆրեյտոր Նոգուցիի որագիրը	67
Հայրենիք	75
Ռյուգասակի	87
Պարտականութուն	95
Մորալ	102
Շրջմուլութուն	113
Պատերազմ	127
Հովազի խոռոչի գաղտնիքը	131

4084
Тех. ред. И. Карамян
Обложка Л. Генча

Лев Рубинштейн

ТРОПА САМУРАЕВ

(на армянском языке)

Отпечатано в тип. Госиздата ССР Армении,
Москва, Армянский пер., 2. Зак. 183
Главлит № В—41891. Изд. № 3125. Т. 2100
Сд. в наб. 3/II-35 г. Подп. к печ. 23/II-35 г
Печ. л. 10³/₄. В 1 п. л. 31000 зн.



ՀՀ Ազգային գրադարան



NL0319984

ԳԻՆԸ 2 Ռ. 50 Կ.

891.71
Ռ-81